

ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՀՈՑ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ..... 3

Փորձագիտական վերլուծությունների կիրառական ասպեկտներ.....5

ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՀԱՍԱՆԵԼԻՈՒԹՅԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄԸ ՈՐՊԵՍ ԱՀՈՑ ԾՐԱԳՐՈՎ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ԳԵՐԱԿԱ ՈՒՂՂՈՒԹՅՈՒՆ 1

Նախնական փորձագիտական գնահատում..... 7

Ներածություն 7

ԱՀՈՑ-ով նախատեսված ոռոգման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումներ..... 7

1.Ոռոգման ջրի կառավարումն ու օգտագործումը կարգավորող իրավական ակտեր, դրանց հիմքում դրված հիմնական սկզբունքներ 8

2.Ջրային ռեսուրսների կառավարման մարմիններ..... 11

ա) Ջրի ազգային խորհուրդ..... 11

բ) Վեճեր լուծող հանձնաժողով..... 12

գ) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին..... 12

դ) Ջրավազանային կառավարման մարմիններ 12

ե) Ջրային համակարգերի կառավարման մարմին..... 13

Ձ) Ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների միությունները կանոնակարգող խորհուրդ..... 13

Է) Կարգավորող հանձնաժողով..... 14

Ը) Ջրային համակարգերի այլընտրանքային կառավարում..... 14

3. Ոռոգման ջուր սպառող (օգտագործող)..... 14

4.Ոռոգման ջրի սակագներ 17

Ընդհանուր հետևություններ 19

Միջանկյալ փորձագիտական գնահատում 20

2003թ.-ի սեպտեմբերից հետո ընդունված և գործողության մեջ դրված ջրային հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր.....20

Ընդունված իրավական ակտերի և դրանցում կատարված փոփոխությունների ազդեցությունը իրավիճակի վրա26

Վերջնական փորձագիտական գնահատում. ոռոգման ջրի հասանելիությունը որպես ԱՀՈՑ-ով նախատեսված գերակա ուղղություն..... 28

Կարևորվող իրավական ակտեր.....33

ՀՀ ԱՀՈՑ-ով ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ..... 34

Նախնական փորձագիտական գնահատում..... 34

Համառոտ ամփոփում..... 34

1. Ներածություն.....35

2. Բնակչությանը բուժօգնության ցուցաբերման և առողջապահության պետական ֆինանսավորման գործընթացները կանոնակարգող իրավական դաշտ	37
3. Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածք.....	40
4. Առողջապահական ծառայությունների գնագոյացում և բուժօգնություն իրականացնողների վճարման մեխանիզմներ.....	43
Վերջնական փորձագիտական գնահատում.....	47
1. Ներածություն.....	47
2. Առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրական փոփոխությունների վերլուծությունը ԱՀՌԾ-ով սահմանված առողջապահության ոլորտի ծրագրային գերակայությունների տեսանկյունից	47
2.1 ԱՀՌԾ-ի կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկ	48
2.2 Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն, մոր և մանկան առողջության պահպանում	49
2.3. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելում.....	51
2.4 Առողջապահության համակարգի արդյունավետության և վերահսկելիության բարձրացում	52
2.5 Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը 2004թ.-ին ..	53
3. Առողջապահության ֆինանսավորման ոլորտում ԱՀՌԾ-ով նախատեսված քայլերի իրականացում.....	56
4. Եզրակացություններ և առաջարկություններ.....	60
ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՑԱՆԿ՝ Առողջապահության ոլորտին առնչվող իրավական ակտերի	66
ՀՀ Օրենքներ	66
Կառավարության որոշումներ.....	67
ՀՀ Առողջապահության նախարարության հրամաններ.....	68
ՀԱՎԵԼՎԱԾ 2. Օրենքներ և կանոնակարգեր.....	69
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ.....	69
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ԶԵՎԸ ՄԱՅՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 Թ. ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N 418 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ԾԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	97
ԿԱՆՈՆՆԵՐ՝ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ.....	98
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002 Թ. ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ* ՄԵՋ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	116
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ.....	117
ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ) ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ.....	124
ԿԱՐԳ՝ ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ) ԱՊԱՀՈՎԵԼՈՒ.....	125
ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ.....	127

ՆԵՐՎՃՈՒԹՅՈՒՆ

Դիտարկվող՝ ոռոգման ջրօգտագործման և առաջնային բուժօգնության ոլորտները, բարդ հիերարխիկ համակարգեր են, հետևաբար, ենթակա չեն համապարփակ գնահատման և մոնիտորինգի որևէ պիլոտային ծրագրի կողմից: Այդ պատճառով դիտարկվող համակարգերում որպես մոնիտորինգի և գնահատման օբյեկտներ ընտրվել են այն հանգուցային տարրերը և ենթահամակարգերը, որոնց գործունեության գնահատումն ու մոնիտորինգը բավարար ներկայացուցչական են սահմանափակ ռեսուրսների պայմաններում կառուցելու համար այդ համակարգերի գործունեության ընդհանուր (բայց ոչ համապարփակ) պատկերը:

Յուրաքանչյուր համակարգում ընտրված են երեք տարր (ենթահամակարգ).

1. **Ոլորտը կարգավորող իրավական-նորմատիվ ակտերը:** Այս ենթահամակարգը սահմանում է ոլորտի գործունեության պետական իդեալը: Հետևաբար, համակարգի իրավական-նորմատիվային ենթահամակարգի ուսումնասիրությունը տալիս է այն շեմային արժեքների մեծ մասը, որոնց միջոցով պետք է գնահատել ոլորտի գործառնական պարամետրերը:

Հաջորդ երկու ենթահամակարգերը ընտրված են գնահատելու և մոնիտորինգի ենթարկելու համար համակարգերի **արդյունավետությունը:** Դրա համար անհրաժեշտ է դիտարկել այն **շփման հանգույցը**, որտեղ տեղի են ունենում ծառայությունների մատուցման ակտերը: Դրանք են.

2. **Ոլորտի վերջնական շահառուները:** Սա համակարգերի այն տարրերի բազմությունն է, որոնց որոշակի պահանջմունքների համար են կառուցված այդ համակարգերը, այսինքն՝ համայնքների բնակչությունը: Շահառուների պահանջմունքների բավարարվածության աստիճանն է նշանակալից չափով որոշում համակարգի գործունեության արդյունավետությունը:
3. **Դիտարկվող համակարգերի հիերարխիայում այն ենթահամակարգը, որով ոլորտի կառավարման համակարգն անմիջականորեն շփվում է նրա վերջնական շահառուների հետ:** Տվյալ դեպքում՝ համայնքային բուժկետերի աշխատակիցները, ՏԻՄ-երի անդամները, ջրօգտագործող կազմակերպությունների աշխատակիցները:

Շփման հանգույցի **երկկողմանի ուսումնասիրությունն** անհրաժեշտ է այն կազմող ենթահամակարգերից ստացվող տեղեկությունների սուբյեկտիվիզմը նվազեցնելու համար, որպես **հենման կետ** օգտագործելով **ոլորտը կարգավորող իրավական-նորմատիվ ակտերը:**

Այս պրակում ներկայացված է ծրագրի ընթացքում իրականացված Իրավական-փորձագիտական գնահատման արդյունքները:

Ծրագրի իրականացման ընթացքում տեղի է ունեցել ոռոգման ջրի իրավական գնահատման երեք և առաջնային առողջապահության ոլորտի երկու փորձագիտական իրավական գնահատում¹:

Ոռոգման ջրի և առաջնային բուժօգնության իրավական դաշտի առաջին վերլուծության նպատակներն են.

1. ոլորտի փոփոխությունների մոնիտորինգի սկզբնական իրավիճակի ֆիքսում,
2. ծրագրի մյուս բաղադրիչների իրականացման ադեկվատ գործիքների մշակում,

¹ - Առողջապահական ոլորտի փորձագիտական գնահատումը տեղի է ունեցել երկու անգամ տեխնիկական պատճառով՝ ծրագրի փորձագետը երկրորդ փուլի ընթացքում գտնվում էր արտասահմանում՝ երկարատև գործուղման մեջ: Սակայն երրորդ փուլի առողջապահական ոլորտի փորձագիտական վերլուծությունում ընդգրկված են նաև այն բոլոր նյութերը, որոնք պետք է լինեին երկրորդ փուլի վերլուծության առարկա:

3. ծրագիրն իրականացնող անձանց գիտելիքների բարձրացում՝ ոլորտի և նրա գործունեության իրավական մեխանիզմների վերաբերյալ,
4. քաղաքացիական հասարակության՝ այդ թվում նաև ոլորտի շահառուների համար, ոլորտների իրավական կարգավորման հարցերի տեղեկացվածության բարձրացում:

Իրավական-փորձագիտական երրորդ՝ վերջնական գնահատումը, պարտադիր է որպես գնահատման գործընթացի անհրաժեշտ բաղկացուցիչ մաս, որը ենթադրում է գնահատման ժամանակաշրջանի սկզբում և վերջում օբյեկտի իրավիճակների համեմատություն: Ի հավելումն՝ պիլոտային ծրագրի շարունակականության դեպքում, այն կվերաժվի նոր ծրագրի համար գնահատման սկզբնական իրավիճակի գնահատականի:

Աղյուսակ 1-ում տրված է ծրագրի ընդհանուր սխեման և փորձագիտական գնահատման փուլի տեղաբաշխումն այդ սխեմայում (Աղյուսակ 1-ում մզացված է):

Աղյուսակ 1. Մոնիտորինգի և գնահատման ծրագրի սխեման

<i>Իրավական-փորձագիտական գնահատում և մոնիտորինգ</i>		<i>Որակական մոնիտորինգ և գնահատում</i>		<i>Քանակական գնահատում</i>	
Ոռոգման ջրօգտագործման իրավական դաշտի նախնական գնահատում	Առաջնային բուժօգնության իրավական դաշտի գնահատում	Նախնական որակական գնահատում	Նախնական ծանոթացում համայնքային խնդիրներին		
			Ֆոկուս խմբային հետազոտություններ համայնքի անդամների, բուժկետերի աշխատողների, ՏԻՍ-ի անդամների և ջրօգտագործման համակարգի ներկայացուցիչների հետ		
			Արդյունքների համայնքային ընդհանրացումներ		
			Արդյունքների մարզային ընդհանրացումներ		
		Մոնիտորինգ	Փուլ 1	Դաշտային աշխատանք	
				Համայնքային ընդհանրացումներ	
				Մարզային ընդհանրացումներ	
			Փուլ ² 2	Այց 1	
				Այց 2	
Ոռոգման ջրօգտագործման իրավական դաշտի փոփոխությունների գնահատում	Առաջնային բուժօգնության իրավական դաշտի փոփոխությունների գնահատում		Այց 3		
			Այց 4		
			Այց 5	Պիլոտային հետազոտություն	

² - Ծրագրի իրականացման ընթացքում նախատեսված էր իրականացնել Որակական գնահատման ևս 3 փուլ, սակայն ծրագիրն իրականացնող կազմակերպություններից մեկի կողմից (ՄԻԺԻ) ծրագրի ժամանակացույցի սխատմատիկ խախտումների հետևանքով անհրաժեշտություն առաջացավ այդ փուլերը փոխարինել ավելի թեթև մոնիտորինգային այցերով: Այդ փոփոխությունների վերաբերյալ տես՝ «Ծրագրի իրականացման ընթացքը» պարագրաֆը, էջ՝ 14:

				Այց 6	Հիմնական հետազոտություն
				Այց 7	
				Այց 8	
				Այց 9	
Ռոռզման ջր-օգտագործման իրավական դաշտի վերջնական գնահատում	Առաջնային բուժօգնության իրավական դաշտի վերջնական գնահատում	Վերջնական որակական գնահատում	Ֆոկուս խմբային հետազոտություններ համայնքի անդամների, բուժկետերի աշխատողների, ՏԻՄ-ի անդամների և ջրօգտագործման համակարգի ներկայացուցիչների հետ		
			Արդյունքների համայնքային ընդհանրացումներ		
			Արդյունքների մարզային ընդհանրացումներ		
Ծրագրային ընդհանրացում					

Ռոռզման ջրի ոլորտի իրավական գնահատումն իրականացրել է իրավաբան Ժորա Խաչատրյանը:

Առողջապահական ոլորտի իրավական-տնտեսական գնահատումն իրականացրել է տնտեսագետ Սարո Ծատուրյանը, տ.գ.թ.:

Այս պրակում որպես հավելվածներ ընդգրկված են նաև ռոռզման ջրի ոլորտը կարգավորող մի շարք օրենքներ և կառավարության որոշումներ, որոնց վերաբերյալ համայնքների անդամների և տեղական ինքնակառավարման մարմինների տեղեկացվածությունը՝ մեր կարծիքով, մեծ նշանակություն ունի համայնքներում ռոռզման ջրին վերաբերվող խնդիրների կարգավորման համար:

Փորձագիտական վերլուծությունների կիրառական ասպեկտներ

Քաղաքացիական հասարակությունը հնարավոր է իրավական պետությունում: Հետևաբար, օրենքների որակը, հասարակության տեղեկացվածությունը օրենքներից և հասարակության մասնակցությունը օրինաստեղծությանը հանգուցային նշանակություն ունեն և՛ քաղաքացիական հասարակության կայացման, և՛ նրա կենսագործունեության համար:

Ռոռզման ջրի և առողջապահության ոլորտների իրավական փորձագիտական վերլուծության կիրառական նշանակությունը դասակարգվում է հետևյալ ուղղություններում.

1. հանրության տեղեկացվածության բարձրացում իր իրավունքների և պարտականությունների վերաբերյալ,
2. օրենքների կատարելագործում՝ դրանք դիտարկելով հանրության տեսակետից,
3. օրենքների կատարելագործման գործընթացում հանրության որակյալ մասնակցություն:

Առաջին ուղղության նշանակությունն ակնհայտ է. որքան ավելի տեղյակ է հասարակությունը իր իրավունքներից և պարտականություններից, այնքան մեծ է հավանականությունը, որ նրա անդամները կարող են օգտվել իրենց իրավունքներից և խուսափել այն կոնֆլիկտային իրավիճակներից, որոնք կարող են առաջանալ սեփական պարտականությունների վերաբերյալ անտեղյակությունից:

Երկրորդ ուղղությունը նպատակաուղղված է իրավական դաշտում ապահովելու պետության և հանրության, անհատի և հանրության, անհատի և պետության միջև իրավունքների և պարտականությունների բալանսավորված բաշխումը:

Ներկայումս, որպես կանոն, պետության և հանրության միջև տնտեսա-իրավական հարաբերությունները կարգավորող իրավական ակտերը կազմավորվում են պետական կառավարման համապատասխան մարմիններում՝ նախարարություններում կամ նրանց առընթեր այլ կառույցներում: Բնականաբար, օրենքների «ստեղծման վայրն» իր բացահայտ կամ անբացահայտ դրոշմն է դնում այդ օրենքների ընդհանուր ներքին և արտաքին տրամաբանության, ինչպես նաև կոնկրետ դրույթների վրա: Ներկայումս, որպես կանոն, մի կողմից՝ պետության, իսկ մյուս կողմից՝ հանրության և անհատի միջև իրավատնտեսական հարաբերություններում, մասնավորապես՝ հանրային ծառայությունների մատուցման ոլորտում, առավելապես պաշտպանված են պետության շահերը: Համոզված լինելով, որ պետության շահերի պաշտպանությունը հանդիսանում է հասարակական շահերի առաջին պաշտպանական գիծը, այնուամենայնիվ, պետք է նշել, որ հաճախ պետական շահերի անվան տակ առաջ են խաղացվում պետական պաշտոնյաների կորպորատիվ շահերը՝ ի հաշիվ հանրության և անհատի շահերի:

Իրավունքների և պարտականությունների բալանսի նմանօրինակ խախտումը կարող է վերացվել միայն հասարակության ներկայացուցիչների **որակյալ և ակտիվ** մասնակցությամբ հանրային ծառայությունների մատուցման ոլորտը կարգավորող իրավական ակտերում:

Այստեղ էական է նշել մի կարևոր հանգամանք: Տարածված մտայնություն է, որ հասարակության մասնակցությունը օրինաստեղծ գործունեությանը նշանակում է մասնակցություն **ինքնին օրենքների ստեղծմանը**: Մեր կարծիքով, Հայաստանի հասարակությունն արդեն գտնվում է այն փուլում, որում ավելի կարևոր է նրա որակյալ մասնակցությունը **օրենքների կիրառման մեխանիզմների ստեղծմանը**, այսինքն, կառավարական և գերատեսչական նորմատիվ ակտերի ստեղծմանը և մոդիֆիկացմանը, քանի որ ինչպես աֆորիստիկ կերպով սահմանել է Ժողովրդավարության տեսաբան Ե. Գելները՝ «Ժողովրդավարությունն իրենից ներկայացնում է ընթացակարգեր»: Դա ավելի շատ վերաբերվում է Ժողովրդավարությանը՝ բարդ հասարակական համակարգերում:

Այսպիսով, ներկայումս Հայաստանում քաղաքացիական հասարակության կայացման հանգուցային ընթացակարգերից է իրավական ակտերի կատարելագործումը՝ հանրության շահերի պաշտպանության տեսակետից՝ հանրությունը ներկայացնող մասնագետ-իրավաբանների ուժերով:

Երրորդ ուղղությունն իրենից ներկայացնում է երկրորդ ուղղության արդյունքների լոբինգը:

Այսպիսով, սույն պրակում ներկայացվող արդյունքները գերադասելի է դիտարկել վերը նշված երեք ուղղությունների իրականացման տեսանկյունից:

Այդ տեսակետից շատ արժեքավոր են փորձագետ Ժորա Խաչատրյանի ոռոգման ջրի ոլորտը կարգավորող իրավական ակտերի վերլուծությունը և եզրակացությունները: Վերջիններս ցանկալի է, որ դառնան հասարակական կազմակերպությունների գործունեության նպատակադրող կոնցեպտներ:

Նախնական փորձագիտական գնահատում

Ներածություն

Հանրապետությունում Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը ՀՀ Կառավարության կողմից հաստատվել է 2003թ. օգոստոսի 8-ի 994-ն որոշմամբ: Ծրագրում գյուղական բնակչության աղքատության կրճատման հիմնական գործոն է գյուղատնտեսական արտադրանքի շարունակական աճը՝ 2003-2015թ.թ. ժամանակաընթացքում, ինչը հնարավոր կլինի ապահովել ծրագրված միջոցառումների շարքում, հատկապես կարևորելով հողօգտագործողին ոռոգման ջրի հասանելիության ապահովումը:

Ծրագրով արձանագրված է, որ բնակչությանը մատուցվող հիմնական հանրային ծառայությունները, այդ թվում՝ խմելու ջրի և ոռոգման ջրի որակը և մատչելիությունը, բնակչության կենսամակարդակի վրա ուղղակիորեն ազդող հիմնական գործոններից են և ջրամատակարարման որակի անկման արդյունքում մեծապես տուժել են հենց աղքատ ընտանիքները:

Ըստ կատարված ուսումնասիրությունների, 2001թ. ոռոգման համակարգի ցանցում ընդգրկված է եղել ոռոգելի հողատարածքների ընդամենը 58,8% կամ 161 հազար հեկտար, ինչը հետևանք է ոռոգման համակարգի ցանցերի կրճատման, համակարգի թերի ֆինանսավորման, կառավարման մեխանիզմների անկատարության:

Ոռոգման համակարգերի ֆիզիկական կառուցվածքների վերականգնմանն ու պահպանմանն ուղղված պետական ներդրումների ոչ նպատակային օգտագործման արդյունքում, համակարգում դեռևս շարունակում է բարձր մնալ կորուստների մակարդակը. ոռոգման համակարգում այն կազմում է 30 %:

Արձանագրելով, որ ոռոգման համակարգին տրված պետական սուբսիդիաների ընդամենը 45%-ն է ուղղվել աղքատ խավին, կարևորվում է համակարգի զարգացմանն ուղղված սուբսիդիաների հասցեականության աստիճանի բարձրացումը:

Ոռոգման ջուրը դիտելով որպես արտադրական ռեսուրս և կարևորելով դրա ազդեցությունը գնագոյացման վրա, անհրաժեշտ է անցնել սակագների գոտիական քաղաքականությանը, ինչը հնարավորություն կտա առաձին գոտիներում սակագները սահմանելիս, հաշվի առնել ոռոգման ջրի մատակարարման համար կատարվող ընթացիկ շահագործման ծախսերի մակարդակը, ինչպես նաև կատարելագործել ֆինանսական համահարթեցման քաղաքականությունը:

ԱՀՌԾ-ով նախատեսված ոռոգման համակարգի բարելավմանն ուղղված միջոցառումները.

ԱՀՌԾ-ով նախատեսված են ոռոգման համակարգի բարելավմանն ուղղված հետևյալ միջոցառումները.

1. ոռոգման նորմատիվների և գյուղատնտեսության համար ոռոգման նպատակով օգտագործվող ջրի ծավալների ճշգրտում,
2. ոռոգման համակարգի կառավարման կառուցվածքի կատարելագործում,
3. ոռոգման ցանցերի տեխնիկական վիճակի բարելավում,

4. ոռոգման մեխանիկական համակարգերը աստիճանաբար ինքնահոս համակարգերով փոխարինում և ոռոգման առաջավոր տեխնոլոգիաների ներդրում,

5. ոռոգման համակարգի ընկերությունների սուբսիդավորման աստիճանական նվազեցում,

6. անցում ոռոգման համակարգում գոտիական սակագների սահմանման քաղաքականության,

7. ոռոգման համակարգում ընկերությունների կառավարման պայմանագրային համակարգի ներդրում,

8. ջրի հաշվառման համակարգի զարգացում:

Թվարկված միջոցառումները միմյանց շաղկապված լինելով, պայմանավորում են մեկը մյուսի արդյունավետությունը:

Ոռոգման նորմատիվների և այդ նպատակով օգտագործվող ջրի ծավալների ճշտմամբ է պետք պլանավորել ոռոգման համակարգերի վերականգնման, ընդարձակման աշխատանքների ծավալները, ջրային ռեսուրսների հնարավորությունները և սակագների սահմանումը:

Ոռոգման համակարգի կառավարման կառուցվածքի կատարելագործմամբ է պայմանավորված ջրամատակարարման, համակարգի ֆինանսական առողջացման, համակարգի միջոցների հաշվին ներդրումների ավելացման և սուբսիդավորման անհրաժեշտության պակասեցման կամ ընդհուպ վերացման նպատակների իրականացումը:

Մեխանիկական համակարգի աստիճանական փոխարինումը ինքնահոս համակարգերով կրերի ջրամատակարարման համար կատարվող ծախսերի պակասեցման, հատկապես՝ էլեկտրաէներգիայի ծախսի և դրա դիմաց կատարվող վճարումների գծով, որը զգալի տեսակակար կշիռ ունի մատուցվող ծառայությունների գնագոյացման մեջ՝ հատկապես մեխանիկական ջրամատակարարման դեպքում:

Կառավարման համակարգի կատարելագործմամբ է պայմանավորվում սպասարկման ծախսերի արդյունավետության բարձրացումը, ծառայությունների դիմաց վճարների լիարժեք գանձումը:

2004-2006թ.թ. ոռոգման համակարգի ընկերությունների սուբսիդավորում նախատեսվում է 10,5 մլրդ. դրամի չափով այն հաշվով, որ հետագա տարիներին ընկերություններն իրենք պետք է ի վիճակի լինեն ապահովել անհրաժեշտ ծախսերը և բոլոր ներդրումները կարողանան կատարել իրենց միջոցների հաշվին: Այդ հաշվարկով է, որ 2004 թ.-ի համար սուբսիդավորումը նախատեսվում է 3,6 մլրդ., 2005 թ.-ին՝ 3,4 մլրդ., իսկ 2006թ.-ին՝ ընդամենը 2,6 մլրդ. դրամի չափով: Գրա փոխարեն նախատեսվում է ներդրումների ծավալի ավելացում. 2004թ.-ի համար նախատեսված 10,2 մլրդ. դրամի դիմաց 2015թ.-ին 31,8 մլրդ. դրամ, ինչը հիմնականում պետք է լինի սեփական միջոցների հաշվին:

1. Ոռոգման ջրի կառավարումն ու օգտագործումը կարգավորող իրավական ակտերը, դրանց հիմքում դրված հիմնական սկզբունքները

ԱՀՌԾ-ով նախատեսված միջոցառումները, որոնք կոչված են բարելավել ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման ողջ համակարգը, ենթակա են իրավական կարգավորման, ինչպես արդեն ընդունված և գործող իրավական նորմերով, այնպես էլ դրանցում փոփոխություններ ու լրացումներ կատարելու, բնագավառն կարգավորող նոր իրավական ակտեր ընդունելու ճանապարհով:

Ջրային ռեսուրսների, ջրային համակարգերի, այդ թվում՝ ջրամատակարարման, ջրահեռացման համակարգերի և հիդրոտեխնիկական կառույցների կամ դրանց մասի

տնօրինման, տիրապետման, օգտագործման և պահպանման ոլորտում ծագող հարաբերություններն անվանվում են ջրային հարաբերություններ:

Ջրային հարաբերությունները, այդ թվում՝ ոռոգման ջրի կառավարման, մատակարարման և սպառման հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտը ՀՀ Ջրային օրենսգիրքն է, որն ընդունվել է 2002թ. հունիսի 4-ին և ուժի մեջ մտել 2002թ. հոկտեմբերի 10-ին՝ հրապարակման պահից երեք ամիս անց, ինչը նախատեսված էր նույն օրենքով:

ՀՀ Սահմանադրությամբ հռչակված է, որ պետությունը ապահովում է շրջակա միջավայրի պահպանությունը և վերարտադրությունը, բնական պաշարների բնականոն (բնական) օգտագործումը (հ.10):

Սահմանադրական այս սկզբունքից հետևում են Ջրային օրենսգրքի խնդիրներն ու նպատակները:

Համաձայն օրենսգրքի 4-րդ հոդվածի «... օրենսգրքի նպատակն ազգային ջրային պաշարի պահպանությունն է, օգտագործելի ջրային ռեսուրսների արդյունավետ կառավարման միջոցով քաղաքացիների ու տնտեսության պահանջների բավարարման, շրջակա միջավայրի էկոլոգիական կայունության ապահովման, ինչպես նաև օրենսգրքի խնդիրների լուծման համար իրավական հիմքերի ապահովումը»:

Հոդվածի իմաստից հետևում է, որ օրենսգիրքը սահմանելով և կարգավորելով ջրային հարաբերությունների հիմնական խնդիրներն ու ուղղությունները, սահմանում է իրավական կարգավորման ենթակա այն բնագավառները, որոնք ենթակա են կարգավորման այլ իրավական ակտերով՝ օրենսգրքի սահմանած սկզբունքներին համապատասխան:

Օրենսգրքի պահանջներին համապատասխանում է այն, որ ընդունվել է ՀՀ օրենք.

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Կառավարության որոշումներ ջրային ռեսուրսների կառավարման, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման, սակագների սահմանման, ազատ ջրօգտագործման և այլնի մասին:

Օրենսգրքի պահանջներին համապատասխան, նախատեսվում են ընդունել նաև մի շարք օրենքներ, որոնք դեռևս նախապատրաստական փուլում են, ինչպես օրինակ այնպիսի կարևորագույն օրենք՝ ինչպիսին է «Ջրի ազգային ծրագրի մասին» ՀՀ օրենքը:

Օրենսգրքով ամրագրված սկզբունքները բխում են ջրի ազգային քաղաքականությունից և օրենսգիրքը հենց ինքն էլ ձևավորում է այդ քաղաքականությունը:

Այդ տեսակետից կարևորվում են օրենսգրքի 7-րդ հոդվածում ամրագրված խնդիրները՝

1. ջրային ռեսուրսների կառավարման համապատասխան մեխանիզմների ստեղծում,
2. ջրային ռեսուրսների պահպանումն ու պաշտպանությունը՝ ապահովելով աղտոտման նվազեցում և վերահսկողության իրականացում,
3. ջրերի վնասակար ազդեցությունների կանխարգելում,
4. ջրային ռեսուրսների հաշվառման ապահովում,
5. բնակչությանն ու տնտեսությանը անհրաժեշտ քանակի և որակի կարգավորված սակագներով ջրով ապահովում,
6. ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անվտանգ ու անխափան աշխատանքը և դրանց օգտագործման ու պահպանման բնականոն պայմանների ապահովման և վերահսկողության իրականացում,
7. ՀՏԿ-ների անվտանգ և անխափան օգտագործման ու պահպանման պայմանների ապահովում և վերահսկողության իրականացում,

8. ջրային համակարգերի կառավարման կազմակերպում, պահպանում և զարգացում:

Թվարկած խնդիրները բխում են ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման, օգտագործման և պահպանության վերաբերյալ 4-րդ հոդվածով սահմանված սկզբունքներից:

4-րդ հոդվածում թվարկված է 24 սկզբունք, որոնցից մեջբերվում են քննարկվող հարցի հետ անմիջականորեն կապվածները՝ առանց հոդվածում տրված թվային համարանիշի պահպանման.

1. ջրօգտագործման թույլտվությունների միջոցով ջրօգտագործման կարգավորում,
2. ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգերի կառավարում և սակագների կարգավորման իրականացում՝ ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների միջոցով,
3. օգտագործելի ջրային ռեսուրսների մատչելիության արդարացի սկզբունքների խթանում,
4. ջրային ռեսուրսների արդյունավետ օգտագործման խթանում՝ ի շահ հասարակության,
5. ստորերկրյա և մակերևութային ջրային ռեսուրսների փոխկապակցվածության և համալիր կառավարման ընդունում,
6. օգտագործելի ջրային ռեսուրսների նկատմամբ բնակչության և տնտեսության աճող պահանջարկի պլանավորում և բավարարում,
7. ջրային ռեսուրսների օգտագործման, բաշխման և պահպանության գործընթացում ջրի տնտեսական արժեքի հաշվառում,
8. հաշվի առնել, որ ջրի տնտեսական արժեքը հիմնականում կազմվում է խմելու, բնապահպանական, էներգետիկ ներուժի և գյուղատնտեսական արժեքների գումարից,
9. ջրի այլընտրանքային արժեքը կազմվում է այն առավելագույն օգուտից, որը կարող է ստեղծվել, եթե օգտագործվեր որևէ այլընտրանքային ծրագրով և նպատակով,
10. սպառողի համար նվազագույն բավարար քանակության և անհրաժեշտ որակի ջրի օգտագործումը մատչելի դարձնելու համար, ջրի կարգավորող սակագնի սահմանում՝ ելնելով ջրի սակավության նվազեցված արժեքից,
11. կարգավորող սակագնի սահմանված չափը հաշվարկային սակագնի արժեքից փոքր լինելու դեպքում, ջրօգտագործումից առաջացող դրամամուտքի դեֆիցիտի նախատեսում պետական բյուջեում՝ սուբսիդիաների կամ օրենսդրությամբ սահմանված հարկային արտոնությունների տեսքով: Ջրօգտագործողների վճարունակության բարձրացմանը գույքընթաց ջրավճարների նվազեցում, կարգավորող սակագների չափի հաշվարկում հաշվարկային սակագնի արժեքում,
12. ջրային ռեսուրսների օգտագործում և տրամադրում վճարովի հիմունքներով՝ ջրօգտագործման երաշխավորված վճարների կիրառմամբ և դրանց դիմաց,
13. ջրային ռեսուրսների կառավարման և պահպանման գործընթացում հասարակության մասնակցության և իրազեկության կարևորության ճանաչում:

Ամրագրելով այս սկզբունքները, օրենսգիրքը կանխորոշել է ջրային հարաբերություններ կարգավորող իրավական նորմերի համապատասխանությունն այս սկզբունքներին, ինչպես օրենսգրքում, այնպես էլ այլ, սահմանված կամ սահմանվելիք իրավական ակտերում:

5-րդ հոդվածում թվարկված սկզբունքներից դուրս, առանձին հոդվածով, որպես հիմնական սկզբունք ամրագրված է, որ հանրապետության տարածքում առկա ջրային ռեսուրսները պետական սեփականությունն են ու տնօրինում, տիրապետում և օգտագործվում են օրենքով սահմանված կարգով:

Ջրի ազգային ծրագրով սահմանված պետական նշանակության ջրային համակարգերը պետական սեփականություն են և մասնավորեցման ենթակա չեն:

Մայրուղային և միջհամայնքային ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անօտարելի գոտիները պետական սեփականություն են և մասնավորեցման ենթակա չեն:

Ինչպես արդեն ասվել է, ջրի ազգային ծրագիրը, որը, կառավարության ներկայացմամբ պետք է հաստատի Ազգային ժողովը համապատասխան օրենքի ընդունմամբ, առայժմ չկա, հետևաբար, օրենսդրորեն չի ամրագրված պետական նշանակության ջրային համակարգերի ցանկը:

Օրենքի իմաստով ջրամատակարարման և ջրահեռացման համակարգերի անօտարելի գոտիներ են համարվում որոշակի ռեժիմ ունեցող այն տարածքները, որոնք առանձնացված են այդ համակարգերի օգտագործման, վերականգնման և պահպանման համար: Օրենքն օգտագործել է երկու հասկացություն՝ «ջրային հողեր» և «անօտարելի» գոտի»: Երկու դեպքում էլ դրանք ջրային համակարգերի օգտագործման և պահպանման համար անհրաժեշտ տարածքներ են: Անօտարելի գոտիների համար այն ենթադրում է որոշակի ռեժիմ ունեցող տարածք, սակայն այդպես էլ երկու հասկացությունների տարբերությունն օրենքը չի բացահայտել, չի ասվել, թե որ դեպքում է, որ ջրային հողերի այս կամ այն հատվածը կարելի է դասել հատուկ ռեժիմի և անվանել անօտարելի տարածք:

2.Ջրային ռեսուրսների կառավարման մարմինները

ՀՀ Ջրային օրենսգիրքը սահմանել է ջրային ռեսուրսների և ջրային համակարգերի կառավարման մարմինների ու նրանց հիմնական իրավունքների ու պարտականությունների շրջանակը, որոնք ձևավորվում են Կառավարության որոշումներով և այլ իրավական ակտերով:

Ըստ օրենսգրքի, ջրային ռեսուրսների կառավարման մարմիններն են.

ա) Ջրի ազգային խորհուրդ

Ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին է, որը միջբնագավառային մասնակցության միջոցով քննարկում և առաջարկություններ է ներկայացնում ջրի ազգային քաղաքականության, ազգային ծրագրին և բնագավառին վերաբերող այլ իրավական ակտերի վերաբերյալ:

Խորհրդի նախագահը, ըստ օրենսգրքի, ՀՀ Վարչապետն է: Ի պաշտոնե խորհրդի անդամներն են՝ տարածքային կառավարման լիազորված մարմնի ղեկավարը, ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմնի ղեկավարը, ջրային համակարգերի կառավարման մարմնի ղեկավարը և կարգավորող հանձնաժողովի ղեկավարը:

Վարչապետի որոշմամբ ներկայացուցիչներ կարող են ընդգրկվել պետական կառավարման այլ լիազորված մարմիններից և բնագավառի մասնագետներից:

Խորհուրդը գործում է վարչապետի հաստատած կանոնակարգի հիման վրա՝ նիստերի միջոցով, որոնք հրավիրվում են անհրաժեշտության դեպքում:

Կառավարության կազմում նման խորհրդի ստեղծումն արդարացվում է նրանով, որ ջրի ազգային քաղաքականության մշակողը և իրականացնողը վերջին հաշվով Կառավարությունն է, և հանձնաժողովը կոչված է մշակելու և իրականացնելու այդ քաղաքականությունը: Նման հանձնաժողով կարող էր ընդհանրապես չստեղծվել և հանձնաժողովի խնդիրներն ու լիազորությունները օրենքով դնել Կառավարության վրա: Այս դեպքում ջրային ռեսուրսների խնդիրները չեն կարևորվի և Կառավարության քննարկման առարկա կդարձվեր միայն հատուկ դեպքերում՝ այլ խնդիրների շարքում:

Այս խորհրդի կազմում ստեղծվում է վեճեր լուծող հանձնաժողով:

բ) Վեճեր լուծող հանձնաժողով

Այս հանձնաժողովը ստեղծվում է Ջրի ազգային խորհրդի կազմում, անդամները նշանակվում են վարչապետի կողմից:

Հանձնաժողովը կարող է լուծել ջրային հարաբերություններում ծագած ջրօգտագործման թույլտվություններին առնչվող վեճեր, հանդես գալով որպես միջնորդ և բոլոր կողմերի համաձայնությամբ, վեճերին վերջնական լուծում տվող:

Հանձնաժողովի որոշումները պարտադիր կատարման ուժ չունեն, դրանց չկատարման դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

ՀՀ Կառավարության 16.09.02թ. թիվ 532 որոշմամբ հաստատվել է ջրի ազգային խորհրդի կանոնակարգն ու կազմը, իսկ 21.10.02թ. թիվ 614 որոշմամբ՝ վեճեր լուծող հանձնաժողովի կանոնակարգն ու կազմը:

գ) Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմինը

ՀՀ Կառավարության 30.01.03թ. թիվ 75 որոշմամբ Ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության լիազոր մարմին է ճանաչվել ՀՀ Բնապահպանության նախարարությունը, որն օգտվում է Ջրային օրենսգրքի 10-րդ հոդվածով սահմանված իրավունքներից և կրում նույն հոդվածով սահմանված պարտականությունները:

Սա պետական լիազորված այն մարմինն է, որը ջրի ազգային քաղաքականության և ջրի ազգային ծրագրի սահմաններում իրականացնում է ջրային ռեսուրսների կառավարումը և պահպանությունը, հաստատում է ջրավազանային կառավարման մարմինների ցանկը, նշանակում է ջրավազանային կառավարման լիազոր ներկայացուցիչ, տալիս է ջրօգտագործման թույլտվություններ՝ ըստ ներկայացված հայտերի:

Բնապահպանության նախարարության կազմում գործում է ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն, որն անմիջականորեն իրականացնում է ջրավազանային կառավարման նկատմամբ հսկողություն՝ ստանալով և գնահատելով այդ գործունեության վերաբերյալ հաշվետվությունները: Ջրօգտագործման թույլտվությունները տալիս է գործակալությունը:

դ) Ջրավազանային կառավարման մարմիններ

ՀՀ Վարչապետի 10.01.03թ. թիվ 5 որոշմամբ հաստատվել է Բնապահպանության նախարարության ջրային ռեսուրսների կառավարման գործակալության ջրավազանային կառավարման մարմինների ցանկը, գործունեության կանոնակարգը և ջրավազանային կառավարմանն անցնելու ժամանակացույցը:

Այդ որոշմամբ նախատեսվել են ջրավազանային կառավարման հետևյալ մարմինները.

1. Սևան-Հրազդան ջրավազանային կառավարման մարմին, որը ներառում է Սևան լիճն իր ջրահավաքով, Հրազդան, Մարմարիկ, Քասախ և Ամբերդ գետերն իրենց ջրահավաքներով,
2. Հյուսիսային ջրավազանային կառավարման մարմին, որը ներառում է Դեբետ, Ադատև գետերն իրենց ջրահավաքներով և Քուռ գետի վտակներն իրենց ջրահավաքներով,
3. Ախուրյանի ջրավազանային կառավարման մարմին, որը ներառում է Ախուրյան, Սելավ-Մաստարա, Մանթաշ գետերն իրենց վտակներով և ջրահավաքներով, Մանթաշի ջրամբարն իր ջրահավաքով:
4. Արարատյան ջրավազանային կառավարման մարմին, որը ներառում է Ազատ, Վեդի, Սևջուր և Արփա գետերն իրենց ջրահավաքներով, Սևան լիճն իր ջրահավաքով:

5. Հարավային ջրավազանային կառավարման մարմին, որը ներառում է Ռրոտան, Ողջի, Մեղրի գետերն իրենց ջրահավաքներով և Արաքս գետի վտակներն իրենց ջրահավաքներով:

Նույն որոշմամբ հաստատված գործունեության կանոնակարգով ասված է, որ այդ մարմինները իրականացնում են ջրավազանային կառավարման պլանները և կապող օղակներ են Ջրային ռեսուրսների կառավարման գործակալության և իրենց կողմից սպասարկվող համայնքների միջև:

Փաստորեն այս մարմինները հանդես են գալիս նաև որպես ջրամատակարարներ, որոնք իրականացնում են գործակալության կողմից տրված թույլտվությունների հիման վրա նախատեսված չափաքանակներով ջրի մատակարարում:

Ըստ սահմանված ժամանակացույցի՝ 2004թ. 4-րդ եռամսյակը ջրավազանային կառավարմանն անցնելու վերջին ժամկետն է:

ե) Ջրային համակարգերի կառավարման մարմին

Ձուրն օգտագործողին (սպառողին) հասցվում է ջրային համակարգերի միջոցով և հենց դրանով էլ կարևորվում են այս մարմնի առանձնահատկությունները:

Ջրավազանային մարմինների նկատմամբ այն հանդես է գալիս որպես ջրօգտագործող, սպառողների նկատմամբ՝ որպես ջրամատակարար:

Որպես ջրային համակարգերի կառավարման պետական լիազորված մարմին հանդես է գալիս ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսությունների պետական կոմիտեն, որը պատասխանատու է պետական սեփականություն հանդիսացող ջրային համակարգերի կառավարման և անվտանգ օգտագործման համար:

Կոմիտեն իր խնդիրներն իրականացնում է տեղերում ստեղծված փակ բաժնետիրական ընկերությունների միջոցով, որոնք ընդհանուր անվամբ անվանվում են «Ռոտում-ջրառ» ՓԲԸ: Հենց այս ընկերություններն էլ հանդես են գալիս ջրօգտագործողների հետ հարաբերություններում որպես ջրամատակարար:

Համակարգի վերականգնման, ցանցի ընդարձակման, տեխնիկական զինման և մյուս ծրագրերը կոմիտեն իրականացնում է այդ ընկերությունների միջոցով և վերահսկում դրանց գործունեությունը:

Այս ընկերությունները հանդիսանում են ոչ մրցակցային ջրամատակարարման համակարգեր շահագործող ընկերություններ՝ 50%-ից ավել պետական բաժնեմասով:

ՀՀ Կառավարության 10.04.03 թիվ 315 որոշմամբ ջրային տնտեսության պետական կոմիտեն դիտվել է որպես ջրային համակարգերի պահպանության բնագավառում պետական վերահսկողություն իրականացնող մարմին, սահմանելով նաև վերահսկողական ֆունկցիաներ, ինչը բխում է ջրային օրենսգրքի 12-րդ հոդվածի պահանջներից:

Ձ) Ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների միությունները կանոնակարգող խորհուրդ

Նման խորհրդի ստեղծումը նախատեսված է Ջրային օրենսգրքի 13-րդ հոդվածով, իսկ գործունեությունը, կազմավորման կարգը «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի 32-րդ հոդվածով:

Ըստ գործող օրենքի, հանրապետության Կառավարությունը ստեղծում և հաստատում է կանոնակարգող խորհրդի կանոնադրությունը:

ՀՀ Կառավարության 17.10.2002թ. թիվ 1678 որոշմամբ ստեղծվել է այս խորհուրդը և հաստատվել կանոնադրությունը, իսկ 09.01.03թ. թիվ 3-Ա որոշմամբ հաստատվել է խորհրդի անհատական կազմը, ըստ որի՝ խորհրդի նախագահ է նշանակվել Տարածքային կառավարման և ենթակառուցվածքների գործունեությունը համակարգող նախարարը:

Այս խորհուրդը ջրային ռեսուրսների կառավարման մարմինների շարքում է այն պատճառով, որ բացի խորհրդատվական, կանոնակարգման ֆունկցիաներից, ընկերությունների և միությունների նկատմամբ ունի նաև պետական վերահսկողական ֆունկցիա:

Է) Կարգավորող հանձնաժողով

Համաձայն Ջրային օրենսգրքի 14-րդ հոդվածի պահանջների, կարգավորող հանձնաժողովը պետք է ստեղծվի որպես պետական կառավարման գործառույթներ իրականացնող անկախ մարմին, որի ֆունկցիան է՝ ջրային հարաբերություններում սակագնային քաղաքականության մշակում և ոչ մրցակցային ջրամատակարարներին ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրում՝ համաձայն Ջրային օրենսգրքի դրույթներին:

Հանձնաժողովի ստեղծման և գործունեության կարգը պետք է սահմանվի առանձին օրենքով, նման օրենք դեռևս ընդունված չի: Հանձնաժողովին վերապահվելիք խնդիրներն իրականացվում են Կառավարության կողմից:

Ը) Ջրային համակարգերի այլընտրանքային կառավարում

Ջրային օրենսգիրքը թույլատրում է ջրային համակարգերը փոխանցել մասնավոր կառավարման՝ փոխանցման հետևյալ ձևերով՝

1. հանձնում հավատարմագրային կառավարման,
2. կոնցեսիայի պայմանագրով,
3. առևտրային կազմակերպության ստեղծմամբ,
4. վարձակալության հանձնումով:

Բոլոր դեպքերում նախատեսվում է նման փոխանցումներն իրականացնել մրցույթային կարգով, այն հաշվով, որ դրանք նպաստեն համակարգի բարելավմանն ու խնդիրների առավել արդյունավետ իրականացմանը:

Նման փոխանցումները կատարվում և պայմանագրերը կնքվում են ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով նախատեսված կարգով:

Ջրային օրենսգիրքը առևտրային կազմակերպության ստեղծումով փոխանցման դեպքերի համար կատարել է վերապահում այն մասին, որ այս դեպքում բաժնեհավաք կապիտալում այլ անձանց ներդրումները չպետք է գերազանցեն 49 %-ը, այսինքն՝ առևտրական այդ կազմակերպությունում պետության բաժինը պետք է լինի 50%-ից ավելի, ապահովելով ընկերությունում պետության վճռական ձայնի իրավունքը:

ՀՀ Կառավարության 09.01.03թ. թիվ 81, 30.01.03թ. թիվ 243, 24.03.03թ. թիվ 245 որոշումներով հաստատվել է ջրային համակարգերը հավատարմագրային կառավարման, վարձակալության և կոնցեսիայի պայմանագրով փոխանցելու կարգը:

3. Ոռոգման ջուր սպառողը (օգտագործող)

Օրենսդիրը հարկ չի համարել և առանձին հոդվածով չի սահմանել ջուր սպառողի իրավունքներն ու պարտականությունները: Դրանք բխում են օրենքի տարբեր հոդվածներից, և եթե պարտականությունները հանգեցնում են պայմանագրի կնքման և ստացած ծառայության դիմաց վճարման, ապա իրավունքները պայմանավորվում են միայն պայմանագրով:

Ջրամատակարարի հետ պայմանագիր կնքելու և պայմանագրին համապատասխան ջուր մատակարարելու պարտականությունը բխում է օրենքի իմաստից և հիմնական սկզբունքներից: Եթե ջուր սպառողը ջրային հարաբերություններում որպես ինքնուրույն կողմ

հանդես չգա, նրա իրավունքներն ու պարտականությունները չկոնկրետացվեն պայմանագրի մեջ, ապա ջրամատակարարի կողմից իր մենաշնորհային դիրքը չարաշահելու համար ստեղծվում են ոչ բարենպաստ պայմաններ:

«Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» (այսուհետ՝ ընկերության մասին) օրենքը չի լրացնում այդ բացը, այն խոսում է միայն ընկերության անդամի իրավունքների ու պարտականությունների մասին, իսկ ընկերության ոչ անդամ ջուր սպառողը դուրս է մնում:

Ոռոգման ջուր սպառողը (այնուհետ՝ սպառող), գործող կառավարման համակարգի պայմաններում անմիջական հարաբերությունների մեջ է ջրամատակարարի՝ ջրօգտագործման համակարգի կառավարման մարմնի ստեղծած ՓԲԸ-ի հետ, եթե չի հանդիսանում մինչև այժմ գործող ջուր սպառողների ընկերության կամ կոոպերատիվի անդամ:

Նա հարկադրված կլինի առնչվել ջրային ռեսուրսների կառավարման այլ մարմինների հետ, եթե ցանկանում է հանդես գալ որպես ինքնուրույն ջուր կամ ջրային համակարգ օգտագործող, ինչպես նաև այն դեպքերում, երբ վեճ ունի տվյալ ՓԲԸ-ի հետ:

Այն, որ գոյություն ունի հողօգտագործման, սեփականատիրության մասնատվածություն, բարդություններ է առաջացնում ոչ միայն ջուր սպառողի, այլ նաև ջրամատակարարի համար: Ինչ անել, եթե մեկն ունի ջրամատակարարման պայմանագիր, կատարել է նախկին բոլոր վճարումները, իսկ մեկ տասնյակ հարևան հողատարածքների սեփականատերեր պայմանագիր չեն կնքել կամ վճարումներ չեն կատարել: Ընդհանուր ներքին ջրատարի պայմաններում, պարտաճանաչ ջուր օգտագործողը կրում է ոչ պարտաճանաչ հարևանի վարքագծի հետևանքները: Իսկ ջրամատակարարը գրկվում է մատակարարման պլանները կատարելու հնարավորությունից:

Սա արդյունք է նաև ոռոգման ներքին ցանցերի տեխնիկական անկատարության:

Հենց այս պրոբլեմը լուծելու նպատակով է, որ «Ջուր օգտագործողների ընկերությունների և Ջուր օգտագործողների ընկերությունների միությունների» մասին օրենքը **նախատեսում է ջրային համակարգերի հանձնումն ընկերություններին և միություններին:** Ենթադրվում է, որ այս ճանապարհով կապահովվի վարձավճարների լրիվ հանձնումը, քանի որ համակարգի կառավարումը սպառողներն հենց իրենք են իրականացնում: Պետական կառավարման մարմինն այս ճանապարհով փորձում է վարձավճարներ չվճարելու հիմքերով, ջրամատակարարումը դադարեցնելու հետևանքով գյուղատնտեսությանը պատճառած վնասների հետևանքների պատասխանատվությունը դնել հենց իրենց՝ ջուր սպառողների վրա:

Օրենքի իմաստով, ջրօգտագործողների ընկերությունը ստեղծվում է տվյալ ոռոգման համակարգում հողատարածք ունեցող ֆիզիկական անձանց կամավոր միավորմամբ: Ընկերության հիմնադրմանը համաձայնություն է տալիս ընկերությունների և միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդը:

Այնուհետև է, որ հրավիրվում է ընդհանուր ժողով, հաստատվում ընկերության կանոնադրությունը, ձևավորվում կառավարման մարմինները:

Ընկերությունը ենթակա է պետական գրանցման, որն իրականացվում է «Իրավաբանական անձանց պետական գրանցման մասին» ՀՀ օրենքով նախատեսված կարգով և ընկերությունը ձեռք է բերում իրավաբանական անձի կարգավիճակ:

Կանոնակարգող խորհրդի եզրակացության հիման վրա համայնքային և պետական սեփականություն համարվող ոռոգման համակարգերը, համապատասխան լիազորված մարմինների որոշմամբ, ըստ սպասարկման տարածքների, օգտագործման իրավունքով հանձնվում են ընկերությանը, որի վերաբերյալ կնքվում է գույքի անհատույց օգտագործման

պայմանագիր ոչ պակաս 25 տարի ժամանակով՝ ՀՀ Քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Ընկերությունների միությունը ձևավորվում է նույն սկզբունքով արդեն ձևավորված ընկերությունների նախաձեռնությամբ, եթե նախաձեռնող ընկերությունների սպասարկման տարածքը գերազանցում է ապագա միության սպասելիք տարածքի 2/3-րդը:

Կանոնակարգող խորհրդի եզրակացության հիման վրա, միությանն են փոխանցվում սպասարկման տարածքում գտնվող հիմնական ջրատարը և/կամ ջրավազանը՝ անհատույց օգտագործման իրավունքով:

Ընկերությունները և միությունները շահույթ ստանալու նպատակ չհետապնդող կազմակերպություններ են՝ իրավաբանական անձի կարգավիճակով: Դրանց գույքը ձևավորվում է անդամավճարներից, մուտքի վճարներից, մատակարարված ջրի դիմաց ստացված վճարներից և օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

ՀՀ Կառավարության 13.03.03թ. որոշմամբ հաստատվել է **ռոռզման համակարգերը միություններին և ընկերություններին հանձնելու**, սեփականատերերի կողմից համակարգի նկատմամբ հսկողություն իրականացնելու կարգը և անհատույց օգտագործման հանձնման պայմանագրերի օրինակելի ձևերը:

Այս որոշումներից և օրենքից հետևում է, որ **ջրօգտագործման վճարների և Կառավարության հատկացված սուբսիդիաների հաշվին է, որ ընկերությունները և միությունները պետք է իրականացնեն իրենց սպասարկման համար տրամադրված համակարգերի պահպանության, վերականգնման և բարելավման ծախսերը: Սեփականատիրոջը վճարումներ չեն նախատեսվում:**

Կառավարության հաստատած տիպային պայմանագրում նշվում է, որ փոխառուին (ընկերությանը, միությանը) մատակարարված ջրի սակագինը և **ռոռզման համակարգի օգտագործման նպատակով ծախսված էլեկտրաէներգիայի վճարի ու պետական սուբսիդիաների կիրառման կարգը սահմանում է Կառավարությունը:**

Այստեղից հետևում է, որ կա նաև սկզբնական ջրամատակարար՝ ջրավազանային կառավարման մարմինը, որին ծախսված ջրի դիմաց պետք է վճարի ընկերությունը կամ միությունը: Այստեղ խոսք կարող է լինել բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին, որը կարգավորվում է «Բնապահպանական և բնօգտագործման վճարների մասին» 28.12.1998թ. օրենքով և ՀՀ Կառավարության 31.12.98թ. ՀՕՈ, 10.06.99թ. թիվ 419 որոշումներով:

Եթե ստեղծվել է տարածքում ջրօգտագործողների ընկերություն և միություն, ապա սպառողի և ջրառի միջև առկա է դառնում մատակարարման երկու օղակ և սպառողը չի կարող ջուր ստանալ դրանք շրջանցելով, եթե չկան ջուր ստանալու այլ աղբյուրներ:

Բոլոր դեպքերում ջրօգտագործողն առաջին հերթին հարաբերվում է ընկերության հետ և կարող է ընդհանրապես չառնչվել միությանը, եթե որպես ընկերության ներկայացուցիչ հանդես չի գալիս միության հետ հարաբերություններում:

Ընկերության սպասարկման տարածքում ռոռզելի հող ունեցող ընկերության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողները (սպառող) ռոռզման ջուր ստանալու նպատակով ընկերության հետ կնքում են ռոռզման ջրի մատակարարման պայմանագիր ոչ պակաս, քան երեք տարի ժամանակով:

Օրենքը թույլատրել է ընկերության ոչ անդամ ջրօգտագործողին մատակարարվող ջրի գինը սահմանել ընկերության անդամի համար սահմանված գնի 150%-ից ոչ ավելի:

Օրենքը նախատեսել է նաև ջրօգտագործողի համար պայմանագրով բավականին կոշտ պայմաններ սահմանելու իրավունք՝ պարտավորության կատարման ապահովման միջոցի սահմանում՝ գրավ, երաշխավորություն, երաշխիք և այլն, ինչպես նաև վճարման

պարտավորությունները չկատարելու դեպքում՝ հողամասն ընկերության օգտագործմանը փոխանցելը ոչ ավել, քան երեք տարի ժամանակով:

Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են ընկերության անդամներից գանձվող վճարների հետևյալ տեսակները.

. մատակարարված ոռոգման ջրի համար,

. ընկերության կողմից շահագործվող ոռոգման համակարգի շահագործման, վերանորոգման և պահպանման ծախսեր,

. անդամավճարներ:

Ընկերության ընդհանուր ժողովի որոշմամբ կարող են սահմանվել ընկերության կողմից գանձվող այլ վճարներ: Այլ նպատակներով գանձումները կարող են նախատեսվել նաև ընկերության կանոնադրությամբ:

Օրենքի 22-րդ հոդվածի իմաստից հետևում է, որ ընկերության անդամները անդամագրվելիս, կատարում են մուտքի վճար:

ՀՀ Կառավարության 26.12.02թ. թիվ 2121 որոշմամբ հաստատվել են ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները, սահմանվել է ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը:

Կանոններում օգտագործվում են «Բաժանորդ» և «Ենթաբաժանորդ» հասկացությունները, նկատի ունենալով, որ ընկերությունը կարող է հանդես գալ որպես ջրամատակարարի բաժանորդ, իսկ անմիջական ջրօգտագործողների համար որպես մատակարար: Առաջին ջրամատակարարի հանդեպ անմիջական ջրօգտագործողները ենթաբաժանորդներ են:

Կանոններում բավականին մանրամասնված են ջրամատակարարման և ջրօգտագործման պայմանները, ջրի ծախսի հաշվառումը, փոխադարձ ստուգումների և հաշվարկների իրականացումը, միմյանց նկատմամբ պահանջների ներկայացման կարգը:

Նախատեսված պայմանները թեև աշխատատար են ինչպես մատակարարի, այնպես էլ բաժանորդի համար, այնուամենայնիվ, դրանք փոխադարձ հսկողության անհրաժեշտ պայմաններ են և թելադրված են կողմերի շահերով:

4. Ոռոգման ջրի սակագները

ՀՀ Ջրային օրենսգիրքն օգտագործում է երկու հասկացություն կապված սակագների հետ՝ «կարգավորվող սակագին» և «հաշվարկային սակագին»:

«Կարգավորվող սակագին» է համարվում արդյունահանված, առաքված, մշակված և/կամ տեղափոխված ջրի միավորի համար կարգավորող հանձնաժողովի կողմից սահմանված գինը կամ գների համակարգը:

«Հաշվարկային սակագին» է համարվում արդյունահանված, առաքված, մշակված և/կամ տեղափոխված ջրի միավորի համար փաստացի կատարած ծախսերով և ողջամիտ շահույթով հաշվարկված գինը:

Ըստ Ջրային օրենսգրքի 79-րդ հոդվածի, ոչ մրցակցային ջրօգտագործման համար կարգավորվող սակագների ձևավորման սկզբունքներն են.

1. ծառայության արժեքի սահմանումը (ներառյալ՝ գործունեություն իրականացնելու համար անհրաժեշտ հիմնավորված օգտագործման և պահպանման ծախսերը), հիմնական միջոցների մաշվածության փոխհատուցման ապահովում,
2. ողջամիտ շահույթի ստացման հնարավորության ապահովում,

3. վարկերի սպասարկման ծախսերի ներառում,
4. պահանջվող ծառայության նվազագույն չափանիշների սահմանում,
5. սակագնային կարգավորման միջոցով մատուցվող ծառայությունների որակի ապահովման և սպառողների վճարունակության հաշվի առնելը,
6. սպառման ծավալով, տարվա եղանակով, օրվա ժամերով, ծառայությունների տեսակներով պայմանավորված սակագների տարբերակում,
7. հիմնավորված և անհրաժեշտ ապահովագրական ծախսերի ներառում,
8. ջրի ազգային ծրագրի պահանջների պահպանում,
9. հիմնավորված տեխնոլոգիական կորուստների ներառում,
10. օրենսդրությամբ նախատեսված հիմնավորված և անհրաժեշտ այլ ծախսերի ներառում,
11. արդյունավետ ջրօգտագործման և ջրերի ստանդարտների պահպանման խթանների ստեղծում,
12. մատուցվող ծառայությունների որակի բարձրացման խթանների ստեղծում:

Ըստ օրենսգրքի նշված հոդվածի, Կարգավորող հանձնաժողովի սահմանած սակագինը համարվում է առավելագույն սակագին: Ջրամատակարարը կամ ջրահեռացնողը կարող են ջուրը վաճառել դրանից ցածր սակագնով այն պայմանով, որ նույն խմբի ջրօգտագործողներին ջուրը մատակարարվի միևնույն սակագնով:

Այս վերջին նորմը կարևորվում է նրանով, որ հենց այդ ճանապարհով է, որ պետք է կանխվի կամայական սակագների սահմանումը ընկերությունների, միությունների կամ ջրային համակարգը վարձակալողի կողմից:

ՀՀ Կառավարության 14.03.02թ. թիվ 240 որոշմամբ հաստատվել է 2002թ. համար «Ոռոգում-ջրառ» և ոռոգման համակարգեր շահագործող ՓԲԸ-ների կողմից մատակարարվող ոռոգման ջրի սակագները:

ՀՀ Կառավարության 22.05.03թ. թիվ 636-Ա որոշմամբ սահմանված սակագները գործում են մինչև հանձնաժողովի կողմից նոր սակագների սահմանումը:

Սահմանված սակագները տարածվել են նաև ընկերությունների ու միությունների վրա:

Նշված թիվ 240 որոշմամբ սահմանվել է, որ ոռոգման համակարգերը շահագործող ՓԲԸ-ներին ինքնահոս եղանակով մատակարարվող 1 խմ ջուրը (գլխամասերում և ջրթափ կետերում) տրվում է միջինացված սակագնով՝ 70 լումա, իսկ մեխանիկական եղանակով մատակարարվող 1 խմ ոռոգման ջուրը՝ 1 դրամ 20 լումա սակագնով: Այս սակագներում ներառվում է նաև ավելացված արժեքի հարկը:

ՓԲԸ-ները (3-րդ կարգի ջրանցքներ գլխամասերում, խորքային և ինքնաշատրվանող հորերով) ջրօգտագործողների միավորումներին ջուրը մատակարարում են 1 խմ-ը՝ 4 դրամ 20 լումա, իսկ միավորումների մեջ չնտած ջուրը սպառողներին տրվում է 4 դրամ 20 լումային ավելացնելով ցանցերի շահագործման ծախսերը և կորուստները:

«Ոռոգում ջրառ» ՓԲԸ-ն ոռոգման ջուրն անմիջականորեն սպառողներին տրամադրելիս կիրառում է նույն սակագինը՝ 4 դրամ 20 լումա:

Այլ ջրօգտագործողներին ոռոգման ջուր տրամադրվում է 6 դրամ 65 լումա սակագնով, բացառությամբ գիտահետազոտական ինստիտուտների, սերմնաբուծական և այդ կարգի այլ համակարգերի, որոնց նույնպես ոռոգման ջուրը տրամադրվում է 4 դրամ 20 լումա սակագնով:

Ընդհանուր հետևություններ

1. Իրականացված և նախատեսված բարեփոխումներից (ջրային ռեսուրսների կառավարման համակարգում) այն տպավորությունն է ստեղծվում, որ գերխնդիր է համարվում ջրօգտագործման դիմաց վարձավճարների հավաքագրումը:

2. Ջրամատակարարման համակարգերն ընկերություններին և դրանց միություններին հանձնելն անհանգստացնող է այն տեսակետից, որ դրանք կարող են հայտնվել բնագավառը չիմացող անձանց ձեռքին, ինչը կրելի համակարգի պարալիզացմանը: Այն անվանելով շահույթ չհետապնդող կազմակերպություն, հնարավորություն ենք տալիս տնօրինելու համակարգի շահագործման հետ կապված ստացվող գումարները: Օրախնդիր է դառնում չարաշահումների կանխումը:

3. Բոլոր տեսակի բարեփոխումները, վերակառուցումները պետք է ուղղված լինեն Ջրի ազգային ծրագրի խնդիրների իրականացմանը: Նման ծրագիր, ինչին կարող են ուղղվել ոլորտի բարեփոխումները, առայժմ գոյություն չունի:

4. Կառավարությունը մի կողմից որոշումներ է ընդունել ջրային համակարգերը վարձակալության հանձնելու մասին՝ հավատարմագրային կառավարման, կոնցեսիայի պայմանագրով և այլ եղանակներով, մյուս կողմից՝ շեշտը դրվում է ընկերությունների և դրանց միությունների վրա: Արդյո՞ք այնպես չի լինելու, որ մինչև սրանց ձևավորումը, համակարգերն արդեն իսկ հանձնված կլինեն մասնավոր կառավարման:

5. Ջրային օրենսգիրքը նախատեսում է հասարակության մասնակցությունը ջրային ռեսուրսների կառավարմանը՝ իրականացվող միջոցառումների մասին տեղեկացվելու միջոցով: Պետք է տեղեկացվեն սակագների սահմանման սկզբունքների, համակարգերն այս կամ այն բնույթի կառավարման հանձնելու, ջրի ազգային ծրագրի մշակման, մոնիտորինգի իրականացման և այլնի մասին, մինչդեռ նման հրապարակումներ չեն լինում, հանրության հետ նման հարցերի քննարկումներ չեն կազմակերպվում:

6. Ջրային օրենսգիրքը հատկապես շռայլ է սկզբունքների թվարկմամբ, սակայն բոլոր դեպքերում ոչ թե սպառողի, այլ մատակարարի կողմում է, նույնն է նաև «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» օրենքը, որում տեղ է գտել այնպիսի սկզբունք, որը գրկում է հող գնած ջուր սպառողին ընկերությանն անդամագրվել, եթե հող վաճառողը չի մարել ջրի դիմաց պարտքերը, իսկ այս նոր հող օգտագործողը իր վրա չի վերցնում նախորդի պարտքերը:

Այս և մի շարք այլ հարցերի պատասխանները հավանաբար կարտացոլվեն Կառավարության հետագա որոշումներում:

Միջանկյալ փորձագիտական գնահատում

Համաձայն ծրագրով տրված հանձնարարության, աշխատանքների 1-ին փուլն ընդգրկել է մինչև 2003թ. սեպտեմբերի 30-ը: Աշխատանքների այդ փուլում, ըստ տրված հանձնարարության, ուսումնասիրվել և վերլուծվել են ոռոգման ջրի հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմատիվ իրավական ակտերը և ներկայացվել է դրանց ամբողջական փաթեթը:

Աշխատանքների 2-րդ փուլի խնդիրներն են՝ ուսումնասիրել, վերլուծել և ներկայացնել 2003թ սեպտեմբերից հետո նույն բնագավառին վերաբերվող իրավական ակտերում արված փոփոխությունները, ինչպես նաև նոր ընդունվածները, գնահատել իրավիճակի փոփոխությունները, կապված ԱՀՌ- ծրագրային խնդիրների հետ:

2003թ.-ի սեպտեմբերից հետո ընդունված և գործողության մեջ դրված ջրային հարաբերությունները կարգավորող իրավական նորմեր

Որպես ջրային հարաբերությունները կարգավորող հիմնական նորմատիվ իրավական ակտ եղել և մնում են՝

- «ՀՀ Ջրային օրենսգրքը» և
- «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքը:

Օրենսգրքով և հիշատակված օրենքով ջրային հարաբերություններ կարգավորող մի շարք հարցեր, հատկապես ջրային ռեսուրսների և ոռոգման ու խմելու ջրի համակարգերի կառավարման մարմինների ձևավորման հետ կապված հարցերը, թողնվել են ՀՀ Կառավարության որոշումներով կարգավորելու: Օրենսգրքի 121-րդ հոդվածում, որը վերնագրված է «Անցումային դրույթներ», թվարկված է ջրօգտագործմանը վերաբերվող 54 խնդիր, որոնք ենթակա են եղել կամ ենթակա են լուծման ՀՀ կառավարության որոշումներով:

Օրենսգրքի պահանջներին համապատասխան որոշումներ կառավարության կողմից ընդունվել են 2002-2003թ.թ. ընթացքում, որոնց փաթեթը ներկայացվել է 1-ին փուլի աշխատանքի հետ: 2003թ-ի սեպտեմբերից հետո ոռոգման ջրի հետ կապված հարաբերությունները կարգավորող իրավական ակտերում էական փոփոխություններ չեն կատարվել, Կառավարությունը դեռևս Ազգային ժողով չի ներկայացրել **«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին»**, **«Ջրի ազգային ծրագրի մասին»**, **«Կարգավորող հանձնաժողովի ստեղծման և գործունեության մասին»** օրենքների նախագծերը, ինչը նախատեսված է Ջրային օրենսգրքով և շատ կարևոր է:

Դրա փոխարեն 2003թ նոյեմբերի 11-ին ընդունվել է օրենք **«ՀՀ Ջրային օրենսգրքում փոփոխություններ կատարելու մասին»**, որով փոփոխություններ են կատարվել օրենսգրքի 121-րդ հոդվածում, ըստ որի **«Ջրի ազգային քաղաքականության հիմնադրույթների մասին»** օրենքի նախագիծ ներկայացնելու ժամկետը 6 ամսից դարձել է 25 ամիս, օրենսգրքի գործողության մեջ դնելու պահից հաշված (2002թ. նոյեմբերի 10), իսկ **«Ջրի ազգային ծրագրի մասին»** ծրագրի ներկայացման ժամկետը մեկ տարվա փոխարեն սահմանվել է երեք տարի:

«Կարգավորող հանձնաժողովի ստեղծման և գործունեության մասին» օրենքի նախագիծը, ըստ Ջրային օրենսգրքի, պետք է ներկայացվեր վեց ամսվա ընթացքում: Դրա փոխարեն **ոռոգման ջրի սակագների սահմանման պարտականությունն ու լիազորությունները դրվել են հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի վրա՝** օրենսգրքում ավելացնելով 79¹ հոդվածը **«Սակագների սահմանման և վերանայման գործընթացը»** վերնագրով: Այն ընդունվել է 25.12.03թ **«Ջրային օրենսգրքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»** ՀՀ օրենքով: **«Հանրային ծառայությունները կարգավորող մարմնի մասին»** 2003թ.

դեկտեմբերի 25-ին ընդունված օրենքով ջրային համակարգերի կարգավորման ոլորտը նույնպես ներառվել է այդ մարմնի իրավասությունների մեջ:

Հենց այս «Հանրային ծառայությունները կարգավորող» հանձնաժողովի կողմից էլ 27.02.04թ ընդունվել են

- թիվ 25-ն՝ Երևանի «Ջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին»,
- թիվ 26-ն՝ «Հայջրնուղ-կոյուղի» ՓԲԸ-ի կողմից սպառողներին վաճառվող խմելու ջրի մատակարարման և ջրահեռացման ծառայությունների մատուցման սակագների սահմանման մասին» և
- թիվ 27-ն՝ «Ռոռզում-ջրառ» ՓԲԸ-ի կողմից ջրօգտագործողների ընկերություններին ջրօգտագործողների ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին վաճառվող ոռոգման ջրի սակագների սահմանման մասին» որոշումները:

Թիվ 27 որոշմամբ ոռոգման ջրի սակագները տարբերակվել են ըստ չորս գոտիների՝ «Ռոռզում- ջրառ» ՓԲԸ-ի մասնաճյուղերի: Այդ մասնաճյուղերն են.

1. «Սևան- Հրազդան- ջրառ»,
2. «Ախուրյան-Արաքսի ջրառ»,
3. «Որոտան-Արփա ջրառ»,
4. «Դեբեդ- Աղստև ջրառ»:

Որոշմամբ ՋՕ ընկերություններին և ՋՕ ընկերությունների միություններին և այլ ջրօգտագործողներին վաճառվող ջրի սակագինը սահմանվում է ըստ Աղյուսակ 1-ում տրված սակագների՝

	ինքնահոս եղանակով	մեխանիկական եղանակով
«Սևան-Հրազդան ջրառ» մասնաճյուղի տարածքում՝	0.91 դրամ/մ ³	8.36 դրամ/մ ³
«Ախուրյան-Արաքսի ջրառ» մասնաճյուղի տարածքում՝	0.79 դրամ/մ ³	4.79 դրամ/մ ³
«Որոտան-Արփա ջրառ» մասնաճյուղի տարածքում՝	2.07 դրամ/մ ³	39.27 դրամ/մ ³
«Դեբեդ-Աղստևի ջրառ» մասնաճյուղի տարածքում՝	2.06 դրամ/մ ³	35.79 դրամ/մ ³

Պետք է նկատի ունենալ, որ ՋՕ ընկերությունները և ՋՕ ընկերությունների միությունները, նման սակագնով ջուր ստանալով «Ռոռզում-Ջրառ» ՓԲԸ մասնաճյուղերից, դրան ավելացնելու են նաև իրենց ծախսերը, ինչը չի կարգավորված որոշմամբ և ոռոգման ջուրը սպառողին տրամադրվելու է նշված սակագներից ավելի բարձր արժեքով:

Ի՞նչ հիմնավորմամբ է «Որոտան - Արփայի» և «Դեբեդ - Աղստևի» տարածքների համար նման բարձր սակագին սահմանվել, որոշումից չի երևում, սակայն ակնհայտ է այն, որ այդ տարածքներում ստեղծվելու է ծանրագույն իրավիճակ՝ մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի դիմաց վարձավճարների հավաքագրման հարցում: Որոշումն ուժի մեջ է մտնում 2004թ. ապրիլի 1-ից:

ՀՀ Կառավարության 06-11-03թ. թիվ 1406-ն որոշմամբ փոփոխություն է կատարվել: ՀՀ Կառավարության 26.12.2002թ. թիվ 2121-ն «Ռոռզման ջրի մատակարարման և

օգտագործման կանոնները հաստատելու, ռոռզման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը հաստատելու և ՀՀ կառավարության 27-07-00թ. նո. 418 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» որոշման մեջ ավելացվել է 2¹ կետ, որով սահմանվել է Ջուր օգտագործողների ընկերություններին և Ջուր օգտագործողների ընկերությունների միություններին ռոռզման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը որպես Հավելված 3:

Մեր կարծիքով, պայմանագրի օրինակելի ձևը ներառում է կողմերի շահերն ամբողջապես և ընդունելի է կողմերի համար: Պայմանագրի պայմանները լրիվ պահպանելու դեպքում, ջրօգտագործողի շահերը չեն ոտնահարվի:

Որոշմամբ լրացվել է ջրի մատակարարման և օգտագործման կանոնների 2-րդ կետը, ըստ որի կանոնները պարտադիր են ջրամատակարար և ջրօգտագործող կողմերի համար: Ըստ կատարված փոփոխության, կանոնները պարտադիր չեն, երբ ռոռզման ջրի մատակարարման հետ կապված փոխհարաբերություններին մասնակից են Ջուր օգտագործողների ընկերությունները և Ջուր օգտագործողների ընկերությունների միությունները: Ենթադրվում է, որ այս դեպքում կողմերի միջև փոխադարձ համաձայնությամբ կարող են սահմանվել այլ կանոններ:

«Խմելու ջրի մատակարարման, ջրահեռացման, կեղտաջրերի մաքրման և ռոռզման ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին» 06-11-02թ. ՀՀ Օրենքով սահմանվել է, որ ռոռզման ջուր օգտագործողները (ջուր սպառողների կոռպերատիվներ, ջրօգտագործողների ընկերություններ, քաղաքային և գյուղական համայնքներ, անհատ ռոռզման ջուր օգտագործողներ) ազատվում են մինչև 2000թ. հունվարի 1-ը ռոռզման ջրի մատակարարման դիմաց պարտքի վճարման պարտականություններից, ռոռզման ջրի մատակարարման ծառայություններ մատուցող կազմակերպությունների հետ սույն օրենքի ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում, պարտքերի հաշվարկման և դուրսգրման (չվճարման) պայմանագիր կնքելու դեպքում (հոդված 10):

Օրենքն ուժի մեջ է մտել 09.11.02թ.-ին, հետևաբար, պայմանագրի կնքման վերջին ժամկետը նախատեսված է եղել 09.04.03թ.-ը:

Նույն օրենքի 12-րդ հոդվածով սահմանվել է, որ ռոռզման ջուրը օգտագործող, աղքատության ընտանեկան նպաստ ստացող բնակիչ-բաժանորդները օրենքի 13-րդ հոդվածի պահանջները կատարելու դեպքում ազատվում են 2000թ. հունվարի 1-ից մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելու օրն ընկած ժամանակահատվածում ռոռզման ջրի դիմաց առաջացած պարտքի վճարումից՝ հաշվարկային գումարի առնվազն 30 %-ի չափով վճարելու դեպքում:

Սա նշանակում է, որ այս կատեգորիայի քաղաքացիները լրիվ ազատվում են մինչև 2000թ-ի հունվարի 1-ն առաջացած պարտքերից՝ մինչև 2002թ-ի նոյեմբերի 9-ն առաջացած պարտքի 30 %-ը վճարելու դեպքում: Փաստորեն պարտքի 30 %-ը վճարելու դեպքում, ազատվում են 70 %-ից:

Օրենքի 13-րդ հոդվածով սահմանված է պայման, որ պարտքերի զիջման արտոնություն տրամադրվում է ռոռզման ջուր օգտագործողներից նրանց, ովքեր օրենքի ուժի մեջ մտնելուց հետո քառամսյա ժամկետում ջրամատակարար կազմակերպության հետ կնքել են պարտքերի մարման և ջրամատակարարման պայմանագիր, ինչպես նաև պայմանագրի կնքման պահից եռամսյա ժամկետում կատարել են պայմանագրային պարտավորությունները:

Մյուս ռոռզման ջուր օգտագործողները (բացառությամբ ընտանեկան նպաստ ստացողների) համաձայն օրենքի 12-րդ հոդվածի, 2000թ.-ի հունվարի 1-ից մինչև 2002թ.-ի հունվարի 1-ն առաջացած պարտքի 55 %-ի վճարման դեպքում, ազատվում են մնացած պարտքի վճարումից: 2002թ. հունվարի 1-ից մինչև օրենքի ուժի մեջ մտնելու օրն ընկած

Ժամանակահատվածում պարտքի 75 %-ը վճարողներն ազատվում են այդ ժամանակահատվածի պարտքի մնացած 25 %-ից:

Այդ պարտքերի հաշվարկման, պայմանագրերի կնքման և պարտքերի մարման կարգը սահմանվել է ՀՀ Կառավարության 13.12.02թ. թիվ 1950-ն որոշմամբ:

22.10.03թ. *«Խմելու ջրի մատակարարման ծառայությունների դիմաց առաջացած պարտավորությունների գծով վճարման արտոնություններ սահմանելու մասին»* ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքով երկարաձգվել է միայն խմելու ջրի հետ կապված պայմանագրերի կնքման, պայմանագրային պարտավորությունների կատարման ժամկետը մինչև 2004թ-ի ապրիլի 1-ը, նախկին չորսամյա ժամկետի փոխարեն: Ոռոգման ջրի պարտքերի գծով արտոնությունների սահմանման հարցում օրենքում փոփոխություններ չեն կատարվել, ինչը ցանկալի էր, նկատի ունենալով, որ գգալի թվով ոռոգման ջուր օգտագործողներ ժամանակին չեն կարողացել կամ չեն իմացել և օգտվել այդ արտոնություններից:

«Ֆինանսական հոսքերի կանխատեսումների մասին» ծրագիրը հաստատվել է ՀՀ *Կառավարության 06.11.03թ.-ի 1693-ն որոշմամբ*, Երևանի «Ջրմուղկոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և ոռոգման համակարգի ՓԲԸ-ների 2003-2007թ.թ. ֆինանսական առողջացման ծրագրի և 2003-2007 թ.թ. «ֆինանսական հոսքերի կանխատեսումների մասին է: Այն նախատեսում է՝

- *ջրային հարաբերությունների լիարժեք առևտրականացման գաղափարը,*

սակայն մյուս կողմից՝ նույն փաստաթղթում ընդունվում է՝

- ջրամատակարարման համակարգերի տեխնիկական անբարեհույս վիճակը,
- մատակարարվող ջրի հաշվառման մեխանիզմների անկատարությունն ու հաճախակի, նաև դրանց իսպառ բացակայությունը,
- կառավարման համակարգի անկատարությունը,
- բնական կորուստների բարձր տոկոսը,
- մեխանիկական եղանակով մատակարարվող ջրի ինքնարժեքում էլեկտրաէներգիայի արժեքի խոշոր տեսակարար կշիռը և այլն:

Ծրագրում կարևորված է այն, որ 2002թ. 1-ին կիսամյակում ոռոգման համակարգերում իրականացված կազմակերպական և կառուցվածքային բարեփոխումների արդյունքում ստեղծվել են՝ «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ն և Ոռոգման համակարգերը շահագործող (ՈՀՇ) 13 ընկերություններ, որոնք «Ոռոգում-Ջրառ» ՓԲԸ-ին են հանձնվել պահպանման և շահագործման ոռոգման նպատակով կառուցված ջրամբարները, մակերևութային ջրային օբյեկտներից ջրառ իրականացվող պոմպակայանները, ինքնահոս ջրանցքների գլխամասային կառուցվածքները և կոլեկտորները, որոնց կառավարումը «Ոռոգում-Ջրառն» իրականացնում է իր մասնաճյուղների միջոցով:

Ծրագրով նախատեսված է, որ ոռոգման համակարգերը շահագործող (ՈՀՇ) ընկերությունները ինստիտուցիոնալ նախադրյալներ պետք է ստեղծեն ոռոգման համակարգերի կառավարումը ջրօգտագործողներին փոխանցելու համար:

Նման նախադրյալներն ինչ կարգով են ՈՀՇ ընկերությունները ստեղծելու, ծրագրում չի ասված:

Ծրագրով գնահատական չի տրվել այն փաստին, որ ոռոգման համակարգերի շահագործման բնագավառում միասնական կառավարման համակարգ չի ստեղծված, թեկուզ նույն՝ «Ոռոգում-Ջրառի» համակարգում: Այստեղ տեղ են գտել հավատարմագրային կառավարիչները, վարձակալմամբ կառավարում իրականացնողներն և այլն: *Փաստորեն փորձարկվում են կառավարման տարբեր ձևեր, իսկ արդյունքում անորոշության մեջ է մնում չրավարարված սպառողը:*

Ըստ ծրագրում ներկայացված տվյալների, 1998-2000թ.թ. մատակարարված ոռոգման ջրի ինքնարժեքը կազմել է 8-ից 10 դրամ, մինչդեռ սակագինը սահմանված է եղել 1.9-ից 4,2 դրամ, որի արդյունքում ընկերության դեբիտորական պարտքերը կազմել են 7551 մլն. դրամ: Նշված է, որ մատակարարված ջրի ինքնարժեքի 65-70%-ը կազմել է ծախսված էլեկտրաէներգիայի արժեքը: Ջրի կորուստը 2000թ. կազմել է 52,8 %, իսկ 2002-ին՝ 38,1 %:

Ծրագրում կարևոր է այն գաղափարը, որ ոռոգման ջրի մատակարարման բոլոր ծախսերի ներառմամբ մատակարարված ջրի արժեքի մեջ սակագների կտրուկ բարձրացումն անթույլատրելի է, քանի դեռ համակարգերը չեն բերվել հնարավոր օպտիմալ գործունեության վիճակի, որ առնվազն մինչև 2007թ.-ը կապիտալ ծախսերը դեռևս պետք է կատարվեն պետության կողմից՝ հիմնականում ՀԲ-ի և այլ դոնոր կազմակերպությունների կողմից ֆինանսավորվող վարկային ծրագրերի շրջանակներում:

Կառավարության հաստատած այս ծրագրի համատեքստում անընդունելի է Հանրային ծառայությունները կարգավորող հանձնաժողովի որոշմամբ ոռոգման ջրի սակագների նման կտրուկ բարձրացումը, երբ համակարգում էական փոփոխություններ չեն կատարվել:

Ծրագրով կարևորված է նաև ոռոգման ջուրը սպառողին ինքնահոս եղանակով հասցնելն ապահովելու անհրաժեշտությունը, ինչի ուղղությամբ նախատեսվում են համապատասխան միջոցառումներ, թվարկելով նաև ֆինանսավորման աղբյուրները:

Ծրագիրն անդրադարձել է նաև ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին ոռոգման համակարգերը հախտոն ձևով հանձնելու անթույլատրելիությանն այն հիմնավորմամբ, որ կա համապատասխան մասնագետների պակաս, իսկ համակարգի ոչ մասնագիտական կառավարումը հղի է անցանկալի հետևանքներով:

Այս միտքը շատ կարևոր է, այն հաստատվում է տեղերում անցկացված ուսումնասիրությունների արդյունքներով, ինչը վկայում է, որ նման ընկերությունների կառավարումն իրենց վրա են վերցնում պատահական անձինք՝ անձնական շահի հետապնդմամբ և օգտվելով կանոնակարգված վերահսկողության բացակայությունից, թույլ են տալիս չարաշահումներ՝ ի վնաս ջրօգտագործողի:

Ծրագրում ճիշտ կերպով արձանագրվում է, որ դեռևս հստակորեն սահմանագատված չի այնպիսի կարևոր գործառույթների իրականացումը, ինչպիսիք են ընկերությունների գործունեության հիմնական ուղղությունների որոշումը, կառուցվածքի և վարձատրության չափերի սահմանումն ու փոփոխությունը, ներքին կանոնակարգերի հաստատումը (ներառյալ գործունեության ներքին և արտաքին աուդիտի, ֆինանսական հաշվետվությունների սահմանումը և տեղեկատվության հրապարակման և տարածման միասնական սկզբունքների սահմանումը), ընկերության տարեկան բյուջեի հաստատումն ու վերանայումը:

Կառավարության որոշմամբ պահանջվում և ծրագրով նախատեսվում է տնօրենների խորհուրդների ստեղծում՝ սկսած 2004թ-ի հունվարից: Ոռոգման համակարգի համար այն անվանված է **«Ոռոգման համակարգերի ՓԲԸ-ների տնօրենների խորհուրդ»**, որի կազմի մեջ մտնում են հետևյալ անձինք՝

- ՀՀ Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահ (խորհրդի նախագահ),
- մեկական անդամ ՀՀ տարածքային կառավարման և ենթակառուցվածքները համակարգող նախարարի, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի, գյուղատնտեսության և բնապահպանության նախարարների ներկայացմամբ, ինչպես նաև
- ընկերության տնօրեն,
- **«Ջրային տնտեսության զարգացման և բարեփոխումների ծրագրերի իրականացման գրասենյակ» պետական հիմնարկի** տնօրեն:

Այս խորհուրդներին վերապահվում են տնօրենների խորհուրդներին օրենքով նախատեսված լիազորություններ՝ բացառությամբ բաժնետերերի ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունների, ինչպես նաև վարկային ծրագրերի խորհուրդների լիազորությունների:

Ծրագրով նախատեսվում է տնօրենների խորհուրդները հետագայում լիովին դուրս բերել կառավարման մարմնի կազմից, երբ կստեղծվեն իրոք մասնագիտացված ընկերություններ իրենց մասնագետ տնօրեններով:

Համաձայնվելով ծրագրով կատարված մի շարք արժեքավոր վերլուծությունների, հետևությունների և թվարկված միջոցառումների անհրաժեշտությունների հետ, այնուամենայնիվ, դժվար է համաձայնվել բնագավառի հարաբերությունները կարգավորող բազմապիսի կառավարման մարմինների գոյության, բազմապիսի խորհուրդների ստեղծման հետ:

Կառավարման մարմինների բազմաթվությունն է, որ հանգեցնում է ոլորտի համար պատասխանատվության բացակայության: Վերջնահաշվարկով պետք է հանգել այն հետևության, որ անհրաժեշտություն կառաջանա ստեղծել խորհուրդների խորհուրդ, կառավարման մարմինների մարմին:

Ասվածն առավել ակնառու դարձնելու համար, կրկին թվարկենք ջրային հարաբերություններում ներգրավված մարմինները.

1. **Ջրի ազգային խորհուրդ**՝ ջրային ռեսուրսների կառավարման բնագավառում բարձրագույն խորհրդատվական մարմին վարչապետի նախագահությամբ,
2. **Վեճեր լուծող հանձնաժողով**՝ կազմվում է վարչապետի նշանակմամբ, լուծում է ջրօգտագործման թույլտվություններին առնչվող հարաբերություններում ծագած վեճերը,
3. **Կարգավորող հանձնաժողով**՝ ջրային հարաբերություններում սակագնային քաղաքականություն սահմանող և ոչ մրցակցային ջրամատակարարման և համակարգերի շահագործման թույլտվություն տվող մարմին, որը պետք է ստեղծվի դրա վերաբերյալ օրենքի ընդունումից հետո: Հանձնաժողովի գործառնությունները համարվում են պետական կառավարման մարմնի գործառնություններ,
4. **«Հանրային ծառայությունները կարգավորող մարմին»**՝ ՀՀ կառավարության 2003թ դեկտեմբերի 25-ին ընդունած,
5. **ՋՕ ընկերությունների և ՋՕԸ միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ**՝ ստեղծվում է Կառավարության կողմից, որն և հաստատում է կանոնադրությունը,
6. **ՀՀ բնապահպանության նախարարությունը**՝ ջրային ռեսուրսների կառավարման և պահպանության մարմին, կոչված է իրականացնելու ջրի ազգային քաղաքականությունը,
7. **Ջրային ռեսուրսների կառավարման գործակալություն**՝ գործում է բնապահպանության կազմում, իրականացնում է հսկողություն ջրավազանային կառավարման նկատմամբ,
8. **Ջրավազանային կառավարման մարմիններ**՝ բնապահպանության նախարարության մարմիններն են, ենթակա են գործակալությանը,
9. **ՀՀ կառավարությանն առընթեր ջրային ռեսուրսների պետական կոմիտե**՝ ջրային համակարգերի կառավարման մարմին, որն իր գործառնություններն իրականացնում է իր իսկ կազմավորած մարմինների միջոցով,
10. **«Ոռոգում-ջրառ» ՓԲԸ**՝ հանդես է գալիս որպես ջրային համակարգերը շահագործող և հանդիսանում է ջրամատակարար: Տեղերում ունի իր ստորաբաժանումները,

11. Ոռոգման համակարգերի հավատարմագրային կառավարիչ՝ որոշ համակարգեր «Ոռոգում-ջրառը» հանձնում է նման կառավարման,
12. Ոռոգման համակարգերը շահագործող ընկերությունն ոռոգման համակարգերի մի մասը «Ոռոգում-ջրառը»-ը շահագործման է տրամադրում նման ընկերությունների,
13. Ոռոգման համակարգերի վարձակալ՝ նախատեսվում է նաև համակարգերի նման մասնավոր կառավարման հանձնում,
14. Ոռոգման համակարգերի ՓԲԸ-ների տնօրենների խորհուրդ՝ ստեղծվում է Կառավարության որոշմամբ, կազմը սահմանված է Կառավարության ներկայացուցիչներից և ՓԲԸ-ների տնօրեններից,
15. Ջրօգտագործողների ընկերություններ՝ ստեղծվում են ոռոգման միևնույն համակարգում հողատարածք ունեցող ջրօգտագործողների միավորմամբ: Հանդես է գալիս որպես ջրօգտագործող,
16. Ջրօգտագործողների ընկերությունների միություններ՝ կառավարում են միավորված ընկերությունները, հանդիսանալով ջրօգտագործող, ընկերությունների համար ջրամատակարար է:

Թվարկված շարքում վերջին օղակը ջուրն անմիջական սպառող հողագործն է, որը կրում է թվարկված մարմինների անգործության հետևանքները:

Քանի որ ջրային հարաբերությունների հիմքում դրվում է այն լիովին առևտրայնացնելու գաղափարը, թվարկված մարմիններից յուրաքանչյուրն իրավունք ունի հավակնելու շահույթի՝ կառավարման ծախսերը հոգալու, ինչպես նաև շահույթ ստանալու համար, իսկ դա հնարավոր է այդ ամենը ջուր սպառողին տրվող ջրի սակագնի մեջ ներառելու ճանապարհով: Նման իրավիճակներում այդ սակագինը բնականաբար ձգտելու է անսահմանության:

Ընդունված իրավական ակտերի և դրանցում կատարված փոփոխությունների ազդեցությունը իրավիճակի վրա

1. Մարզերում, համայնքներում անցկացված ուսումնասիրությունները, հարցումները բերում են այն համոզման, որ ոռոգման ջրի մատակարարման իրավիճակը դրական փոփոխություններ չի կրել, ընդունված օրենքներում ու այլ իրավական ակտերում դրական տեղաշարժեր տեղի չեն ունեցել:
2. Բոլոր տեսակի իրավական ակտերը հիմնականում նպատակատուղված են եղել ջրօգտագործողներից օգտագործված ջրի դիմաց կուտակված պարտքերի գանձումն ապահովելուն և այդ առումով որոշակի արդյունքներ արձանագրվել են:
3. Մակայն ոռոգման ջրի անխափան մատակարարման, սպառողների իրավունքների պաշտպանության, համակարգերի արդյունավետ կառավարման, մատակարարման, ջրաքանակի իրական հաշվառման, կորուստների նվազեցման ուղղությամբ նկատելի տեղաշարժեր չեն եղել:
4. Համակարգերի կառավարման բնագավառում բարելավում չի նկատվում :
5. Կառավարության և այլ ներդրողների կողմից կատարված և կատարվող ներդրումների շնորհիվ ծրագրեր են իրականացվում ոռոգման համակարգերի վերականգնման, ընդարձակման, ինքնահոս ջրամատակարարման ցանցերի ընդարձակման ուղղություններով, որոշակի դրական տեղաշարժ այդ ուղղությամբ կա և արվելիք աշխատանքները, որոնք նախատեսված են Կառավարության ծրագրով, որոշակի

դրական հույս ներշնչում են, ինչը սակայն կառավարման նման անկատար համակարգի պայմաններում դժվար իրականացի է:

- 6. Մարզպետարանների վրա որևէ պարտականություն դրված չի իրավիճակի բարելավման ուղղությամբ և համայնքային որևէ հոգս չի անհանգստացնում:*
- 7. Համայնքները պատրաստ են իրենց ձեռքը վերցնել համայնք մտնող ջրային համակարգերի կառավարումը, սակայն դեմ են առնում հենց օրենսդրությամբ ստեղծված արգելքներին՝ օրենքը նման կառավարում իրականացնելու իրավունքը տվել է ոչ թե համայնքի կառավարման մարմնին, այլ ջրօգտագործող ընկերություններին:*
- 8. Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ նման ընկերությունների ստեղծումը միայն տեսականորեն է իրականացի և արդյունավետ: Իր հոգսերի ծանրության տակ կքած հողագործը տրամադրված չէ, ժամանակ և հնարավորություններ չունի ընկերության կառավարումն իրականացնելու: Նա ցանկանում է ազատ լինել կառավարման ցանկացած հոգսից:*

Վերջնական փորձագիտական գնահատում

Ծրագրային աշխատանքի 1-ին և 2-րդ փուլերը ներառել են 2003 թ. մինչև սեպտեմբեր և ապա 2003 թ. սեպտեմբերից մինչև 2004թ. փետրվարն ընկած ժամանակաշրջանը:

Առաջին փուլն եղել է առավել ընդգրկուն այն առումով, որ անհրաժեշտ էր ամփոփել և ընդհանրացնել այն բոլոր օրենքները, իրավական ակտերը, որոնցով կարգավորվում են ջրային հարաբերություններն ընդհանրապես, անհրաժեշտ էր ներկայացնել գոյություն ունեցող իրավիճակն այդ բնագավառում և ապա հաջորդ փուլերում այն ունենալ որպես ելակետային, ներկայացնելով տեղի ունեցած տեղաշարժերն ինչպես դրական, այնպես էլ բացասական ուղղություններով:

Երկրորդ փուլին վերաբերվող աշխատանքում ներկայացվել են 2003 թ. սեպտեմբերից հետո տեղ գտած փոփոխությունները: Այս փուլի խնդիրն է ներկայացնել տեղի ունեցած տեղաշարժերը 2004 թ. փետրվարից հետո ընկած ժամանակահատվածում:

Վերլուծությունները և գնահատականները տրվում են հիմնվելով իրավական ակտերի, դրանցում կատարված փոփոխությունների, ինչպես նաև անցկացված մոնիտորինգային տվյալների վրա:

Հայաստանի Հանրապետության Կառավարության հաստատած «Աղբատության հաղթահարման ռազմավարական ծրագրի» շրջանակներում հատկապես կարևորվել և կարևորվում է Հանրապետությունում գյուղատնտեսական արտադրանքի շարունակական աճի ապահովումը, ինչը հնարավոր է՝ վարելահողերի տարածքների ավելացմամբ՝ ի հաշիվ աղուտների լվացման, քարքարոտ տարածքների մաքրման, զառիթափերի հարթեցման և այլն: Բոլոր դեպքերում այսպիսի տարածքների նվաճումն ու վարելահողերի ցանկում ընդգրկելը պայմանավորվում է առաջին հերթին ոռոգման ջրի առկայությամբ, դրա հասանելիությամբ:

Գյուղատնտեսական արտադրանքի շարունակական աճի մասին խոսք լինել չի կարող, եթե չիրականացվի վարելահողերի առավել և շարունակական ընդգրկման ապահովումը ջրովի համակարգերում, և եթե գյուղատնտեսության ջրարբիացումը մշտապես չդիտվի որպես գյուղատնտեսության զարգացման առաջնահերթ խնդիր:

Հենց այս խնդրի կարևորման գաղափարն է, որ դրվել է ՀՀ Կառավարության 06.11.03թ. 1693-ն որոշմամբ հաստատված «Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղ-կոյուղի» և ոռոգման համակարգերի փակ բաժնետիրական ընկերությունների 2003-2007թ.թ. ֆինանսական առողջացման ծրագրի» հիմքում:

Կառավարության հաստատած այդ ծրագրով նախատեսված միջոցառումները կոչված են կատարելագործելու ոռոգման ջրի մատակարարման հանրային և տեղային կառավարման համակարգը, մատակարարված ջրաքանակի հաշվառումը, ջրի ինքնահոս եղանակով մատակարարման ապահովումը հնարավորին լայն ծավալով, ջրի կորուստների, ինչպես նաև էլեկտրաէներգիայի ծախսի չափաքանակների կտրուկ նվազեցումը:

Ծրագրով արված է կանխատեսում և նկատի է առնված, որ ոռոգելի հողատարածքները տարեկան կավելանան մոտ 3%-ով՝ ի հաշիվ ջրամատակարարման համակարգերի վերակառուցման, բնագավառի կառավարման համակարգերի կատարելագործման:

Ոռոգման ջրի ինքնահոս եղանակով մատակարարման խնդրի լուծման բնագավառում ծրագրով հատկապես կարևորված է *Որոտան-Արփա-Սևան թունելի* գործարկումը, որը նախատեսվում է սկսել 2006թ.-ից, ինչը, ըստ հաշվարկների, ոռոգման համակարգում կհանգեցնի տարեկան 45 մլն. կվ էլեկտրաէներգիայի ծախսի կրճատման, չհաշված նաև

այն, որ ռոռզման ջրի մատակարարման գործընթացից դուրս կմղվեն մի շարք աշխատատար գործընթացներ:

Այգեձորի և **Այրուսի** ջրամատակարարման համակարգերով ռոռզման ջրի ինքնահոս եղանակով մատակարարման անցումը վերջնականապես կավարտվի արդեն իսկ ընթացիկ տարում, մասամբ ավարտված է, որով էլեկտրաէներգիայի տարեկան ծախսի պակասեցումը հաշվարկված է 2 մլն. կվտ՝ 3,7 մլն. մ³ ինքնահոս ջրի մատակարարման պայմաններում:

2006 թ-ին նախատեսվում է ավարտել Եղեգնաձորի ռոռզման համակարգի անցումն ինքնահոս մատակարարման, որով կխնայվի տարեկան ևս 24,5 մլն կվտ էլեկտրաէներգիա:

Դրան գուգահեռ, ծրագրով նախատեսված են և արդեն սկսված են մի շարք ջրամբարների վերականգնման, նոր ջրամբարների նախագծման և կառուցման աշխատանքներ, որոնք հնարավորություն կտան անձրևաջրերի, հեղեղատների ջրերի կուտակման և ռոռզման նպատակներով օգտագործման:

Ծրագրով նախատեսված համակարգային վերափոխումները, վերակառուցումները կառավարման բնագավառում ավելի շատ ունեն փորձարկումների բնույթ: Դեռևս չի գտնվել համակարգերի կառավարման այն լավագույն ձևը, որը կարելի լիներ ներդնել բոլոր համակարգերում և սպասել դրական արդյունքի:

Ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները տեսականորեն կարող են համարվել ռոռզման համակարգերի կառավարման լավագույն ձևեր այն առումով, որ անմիջապես ջրօգտագործողներին է առաջարկվում և հնարավորություն տրվում լուծելու բոլոր այն խնդիրները, որոնք վերաբերվում են իրենց անմիջական շահերին: Բարդությունն այստեղ շահագրգիռ անհատներին համախմբելը, կազմակերպելը, դրա կազմակերպչաիրավական նրբությունները յուրաքանչյուրին հասցնելն է:

Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների ստեղծման պրակտիկայի ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ **դրանք ստեղծվում են առանձին անհատների նախաձեռնությամբ**, երբեմն անմիջական ջրօգտագործողների հետ կապ չունեցող, նույնիսկ ջրօգտագործող չհանդիսացող անհատների կողմից, **անդամագրումները կատարվում են ցուցակային կարգով**՝ անկախ անդամագրվողի տեղյակ կամ անտեղյակ լինելուց: Կազմակերպիչը ջանք չի թափում անդամագրվող ջրօգտագործողներին նախապես ծանոթացնել ընկերության ձևավորման իրավական հիմքերին, իրենց իրավունքներին ու պարտականություններին, չխոսելով արդեն ընկերության ընդհանուր ժողովներ չիրավիրելու, կառավարման մամիններն օրենքով սահմանված կարգով չձևավորելու մասին:

Ջրօգտագործողների ընկերությունների գործունեության արդյունավետությունն առաջին հերթին պետք է պայմանավորել դրանց կառավարմանը անդամների ակտիվ մասնակցությամբ, ինչն առայժմ տեղի չի ունենում:

Հեռավոր գյուղերից մեկում, երբ ուսումնասիրվում էր ռոռզման ջրամատակարարման դրվածքը համայնքում, համայնքապետը և աշխատակազմի ներկայացուցիչները, հայտնելով, որ կա համակարգը կառավարող կազմակերպություն, չկարողացան ասել, թե ինչ է դա՝ ընկերություն, ընկերությունների միություն, թե մեկ այլ բնույթի ձևավորում: Տեղյակ են այնքանով, որ մարզկենտրոնից եկել են ինչ որ անձինք, մեկը ներկայացել է որպես նախագահ, ցուցակագրել են ջրօգտագործողներին, պայմանավորվել են ջրի վարձի հավաքագրման հարցերով և մեկնել են:

Մարզկենտրոնում կարողացանք պարզել, որ մոտակա համայնքների ջրօգտագործման հետ կապ չունեցող մի գործարար նախաձեռնել և ստեղծել է ջրօգտագործողների ընկերություն՝ ներառելով մոտակա վեց համայնքները և բոլոր տեղերում հանդես է եկել որպես արդեն իսկ

ստեղծված ընկերության տնօրեն, գյուղապետարաններում համաձայնեցրել է իր գործունեության, իր միջոցով համայնքին ոռոգման ջուր մատակարարելու ծրագրերը:

Սա կարող է գնահատվել որպես նախաձեռնություն, նույնիսկ դրական նախաձեռնություն, նկատի ունենալով, որ տվյալ համայնքներում որևէ քայլ արված չի եղել տվյալ բնագավառի կառավարումն իրենց ձեռքը վերցնելու ուղղությամբ: Սակայն հարցը կայանում է նրանում, որ սա բնութագրական է և ցույց է տալիս բնակչության անտեղյակության աստիճանը, երբ նույնիսկ համայնքի կառավարման մարմնում են անտեղյակ բնագավառը կարգավորող օրենքից, իրավական ակտերից:

Ընդհանուր հետևությունն այն է, որ համայնքներում լուրջ խնդիր կա նախ իրավական գրականությամբ ապահովման, ապա նաև Ջրային օրենսգրքի և «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքի ուսուցման, ինչը պետք է լինի համապատասխան հասարակական կազմակերպությունների առաջնահերթ խնդիրներից մեկը: Բոլոր դեպքերում պետք է նկատի ունենալ, որ բնակչության շրջանում հաղթահարված չեն ինքնակառավարման իմաստի ըմբռնման դժվարությունները, ցանկացած խնդիր պետական մարմինների միջոցով լուծելուն ենթակա լինելու վերաբերյալ մտածողությունը: Չի ընկալվում այն, որ համայնքային խնդիրներն հիմնականում համայնքի բնակիչները պետք է լուծեն իրենք իրենց ուժերով, իրենց անհատական և կոլեկտիվ հնարավորությունների միավորմամբ, անձնական ակտիվությամբ և նախաձեռնություններով:

Մեր համոզմամբ, այսպիսի մոտեցումն ու ըմբռնումը յուրաքանչյուրին հասանելի դարձնելու դեպքում, ցանկացած համայնքի բնակիչներ, երբ հաղթահարված կլինի հարցի պետականորեն լուծում տալու մշտական սպասելիքը, իրենց հնարավորություններով կկարողանան գտնել խնդրի լավագույն լուծումը:

Այս բնագավառում նույնպես զգալի և լուրջ անելիքներ ենք տեսնում հասարակական կազմակերպությունների համար:

Ավաճից չի հետևում, թե տեղի չեն ունեցել դրական տեղաշարժեր ինչպես ջրամատակարարման համակարգերի կառավարման, այնպես էլ բնակչության մտածողությունների ու ընկալումների բնագավառներում:

Դրական տեղաշարժերը նկատելի են բոլոր բնագավառներում: Խոսքն այն մասին է միայն, որ այդ տեղաշարժերը դեռևս բավարար չեն խնդիրն ամբողջովին լուծված համարելու համար: Նկատելի է զարգացումների շարունակական գործընթաց, որը դանդաղորեն, բայց, այնուամենայնիվ, բերում է դրական տեղաշարժերի: Հենց այդ զարգացումներին նպաստելուն, գործընթացներն արագացնելուն է, որ պետք է միտված լինեն հասարակական կազմակերպությունների միջամտությունները՝ ուսուցումների, դրական փորձի տարածման ու ներդրման, գործնական օժանդակության ցուցաբերման և այլ ճանապարհներով:

Մոնիտորինգային խմբերի անձնական շփումները բնակչության հետ, կատարված հարցումները վկայում են, որ նկատելիորեն ավելացել է բնակչության իրազեկվածության մակարդակը համայնքային խնդիրներին և դրանց օրենսդրականորեն լուծման հնարավորությունների հարցերում, կա ձգտում անմիջական մասնակցության, կա ձգտում համատեղ քննարկումների միջոցով գտնելու ընդհանուր շահեր շոշափող խնդիրների լավագույն լուծումները:

Կարևորում ենք նաև այն, որ համայնքային բնակչության շրջանում հաղթահարվում է նաև «ինքն իրեն հետ» միայնակ մնացած լինելու զգացումը: Իրեն զգալ է տալիս համայնքային խնդիրների լուծմանը պետության ուշադրության և միջամտության առկայությունը: Այն, որ ոռոգման քայքայված, թալանված համակարգերն աստիճանաբար վերականգնվում են, նոր համակարգերի ստեղծումը, կառուցումը ներառվում են պետական կարճաժամկետ և միջնաժամկետ ծրագրերում, արդեն իսկ ընկալվում է որպես պետական աջակցության առկայություն:

Ջրօգտագործողների ընկերությունները, դրանց միությունները, լինելով նորույթ բնագավառի կառավարման ասպարեզում, կառավարման փորձ են կուտակում և դրական փորձի փոխանակման ու ներդրման շնորհիվ կարելի կլինի հասնել կառավարման տվյալ ձևի լավագույն տարբերակի ընտրության:

Ռոռզման համակարգերի վերականգնմանն ուղղված ներդրումային միջոցների արդյունավետ օգտագործման նկատմամբ պետական վերահսկողության ուժեղացումը կնպաստի ծրագրերով նախատեսված խնդիրների հնարավորին չափով կարճ ժամկետներում լուծմանը:

2004թ.-ը աչքի է ընկել անձրևային օրերի քանակի բազմաթվությամբ, որի արդյունքում ռոռզման հետ կապված խնդիրներ համեմատաբար քիչ են առաջացել: Ռոռզման շրջանի ուշ սկսելու արդյունքում, չի առաջացել նախորդ տարիների այն իրավիճակը, երբ գյուղատնտեսական կուլտուրաների ռոռզման հրամայական անհրաժեշտության պայմաններում, ընդհանուր ջրատարները մնացել են ցամաք՝ ջրօգտագործողների հետ պայմանագրային հարաբերությունները կարգավորված չլինելու պատճառով: Ընթացիկ տարում մասն խնդիրներ չեն առաջացել կամ համարյա չեն առաջացել:

«Հանրային ծառայությունները կարգավորող» հանձնաժողովի 27.02.04թ. 27-ն որոշմամբ սահմանված ռոռզման ջրի նոր սակագները կարող էին առաջ բերել նոր բարդություններ օգտագործված ջրի վարձավճարների հավաքագրման հարցերում, սակայն *առայժմ նման բարդացումներն իրենց զգալ չեն տվել ռոռզման շրջանի ավարտված չլինելու, ինչպես նաև տարվա անձրևայնության բարձր տոկոս ունենալու պատճառով:*

2004թ.-ի փետրվարից հետո ռոռզման ջրի մատակարարմանը վերաբերվող իրավական ակտերում էական փոփոխություններ և լրացումներ չեն կատարվել, մասն փոփոխություններ չեն կատարվել նաև Ջրային օրենսգրքում և «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» ՀՀ օրենքում:

ՀՀ Կառավարության մի քանի որոշումներով որոշ ոչ էական փոփոխություններ կատարվել են ջրային համակարգերի կառավարմանը վերաբերվող նախկին որոշումներում, որոնք վերաբերվում են կառավարման մարմնի կազմին, այս կամ այն կանոնադրությունը հաստատելուն:

ՀՀ Կառավարության 12.02.04թ.-ի 255-ն որոշմամբ հաստատվել է «ՀՀ տարածքում գործող ջրամբարների օգտագործման օրինակելի կանոնադրությունը», որը կարևորում ենք այն առումով, որ ընդունվել և հաստատվել է ջրամբարների վերականգնման, նոր ջրամբարների նախագծման ու կառուցման ծրագրերի իրականացման թելադրանքով:

«Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքով տուրք նախատեսված չի եղել ջրօգտագործման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրման համար: Ազգային ժողովի կողմից 16.03.04թ.-ին ընդունված օրենքով կատարվել է լրացում «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքի 19-րդ հոդվածի 17-րդ կետում, համաձայն որի՝ ջրօգտագործման թույլտվությունների տրամադրման համար ֆիզիկական անձանցից գանձվում է պետական տուրք նվազագույն աշխատավարձի չափով (1000 դրամ), իրավաբանական անձանցից՝ նվազագույն աշխատավարձի տասնապատիկի չափով (10000 դրամ): Նույն չափով տուրք նախատեսվում է նաև ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունների տրամադրման համար:

ՀՀ Կառավարության 14.04.04թ.-ի 649- ն որոշմամբ հաստատվել է ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը, համաձայն որի գործակալությունը ստեղծվում է Կառավարության որոշմամբ, հանդիսանում է գործադիր իշխանության հանրապետական մարմին, որի կառավարումն իրականացնում է բնապահպանության նախարարը:

Այս գործակալության հիմնական գործառնություններից են՝ ջրի ազգային քաղաքականության մշակման և ջրի ազգային ծրագրի նախապատրաստման աշխատանքների համակարգումը, ջրային ռեսուրսներն ըստ օգտագործման գործառնության և կարգավիճակի դասակարգումը, ջրավազանային կառավարման պլանների մշակման ու դրանց իրականացման ապահովումը, ջրօգտագործման թույլտվությունների տրամադրումը, ջրային ռեսուրսների հաշվեկշռի կազմումը և այլն:

Գործակալությունը կարևորվում է այն առումով, որ նրա կողմից են տրվում և հետ վերցվում ջրօգտագործման թույլտվությունները, իրականացվում է հսկողություն ջրօգտագործման պայմանների պահպանման նկատմամբ: Գործակալության կառուցվածքային ստորաբաժանումներն են.

- ջրային ռեսուրսների քաղաքականության և վերլուծության բաժին,
- ջրային ռեսուրսների կադաստրի վարման և մոնիտորինգի բաժին,
- ջրային օգտագործման թույլտվությունների բաժին,
- ջրավազանային պլանավորման կառավարման բաժին:

Գործակալության տեղական ստորաբաժանումներն են՝ Հյուսիսային, Սևան-Հրազդան, Արարատյան, Ախուրյանի և Հարավային ջրավազանային տարածքային կառավարման բաժինները:

ՀՀ Կառավարության 22.04.04թ.-ի 532-ն որոշմամբ լրացվել է ՀՀ ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի կազմը: Խորհրդի կազմի մեջ ավելացվել են նաև՝ Վարչապետի խորհրդականը, Արդարադատության նախարարի տեղակալը, ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի տեղակալը:

Խորհրդի կազմը խոհրդականով և տեղակալներով համալրելը նպատակային է այն տեսակետից, որ գործակալության խնդիրների իրականացումը նրանց միջոցով կարող է դադառնալ ամենօրյա:

Կառավարության առանձին որոշումներով անդրադարձ է կատարվել կոնկրետ ջրատարների հետ կապված խնդիրների լուծմանը, ինչը վկայում է, որ կա համակարգային խնդիր, կա Կառավարության ծրագիր, կա ծրագրային խնդիրների իրականացման կառավարական գործառնություն: Սա նշանակում է նաև, որ զարգացումների գործընթացն ունի դրական միտումներ, և դրական արդյունքները պայմանավորված են ժամանակաընթացքով:

Կարևորվող իրավական ակտեր

1. «Պետական տուրքի մասին» ՀՀ օրենքում լրացումներ կատարելու մասին ՀՀ օրենքը՝ ընդունված 16.03.04 թ.,
2. ՀՀ Կառավարության 06.11.03թ. թիվ 1693-ն որոշումը «Երևանի «Ջրմուղ-կոյուղի», «Հայջրմուղկոյուղի» և ոռոգման ՓԲԸ-ների 2003-2007թ.թ. ֆինանսական առողջացման ծրագիրը հաստատելու մասին»,
3. ՀՀ Կառավարության 12.02.04թ. թիվ 255-ն որոշումը «ՀՀ տարածքում գործող ջրամբարների օգտագործման օրինակելի կանոնները հաստատելու մասին»,
4. ՀՀ Կառավարության 11.03.04թ. թիվ 291-ն որոշումը «ՀՀ կառավարության 08.08.02 թ-ի 1236 որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին»,
5. ՀՀ Կառավարության 14.04.04թ. թիվ 649-ն որոշումը «ՀՀ բնապահպանության նախարարության աշխատակազմի ջրային ռեսուրսների կառավարման գործակալության կանոնադրությունը և կառուցվածքը հաստատելու մասին»,
6. ՀՀ Կառավարության 26.02.04թ. թիվ 254-ն որոշումը «ՀՀ Արագածոտնի մարզի գյուղերի ջրամատակարարման վերականգնում, Արուն և Պարտիզակ գյուղերի կենտրոնական ջրատար» օբյեկտը «Հայջրմուղկոյուղի» ՓԲԸ-ին անհատույց օգտագործման հանձնելու մասին»,
7. ՀՀ Կառավարության 08.04.04թ. թիվ 573-ն որոշումը «Լոռու-Ջրմուղկոյուղի» և «Շիրակ-Ջրմուղկոյուղի» ՓԲԸ-ների հիմնադրման գործում ՀՀ մասնակցության պայմանների մասին»,
8. ՀՀ Կառավարության 22.04.04թ. -----որոշումը «ՀՀ Կառավարության 17.10.02 թ. թիվ 1678-ն որոշման մեջ լրացումներ կատարելու մասին», որը վերաբերվում է կանոնակարգող խորհրդի կազմը համալրելուն:

Ժ. Խաչատրյան

Մոնիտորինգի և գնահատման ծրագրի ոռոգման ջրի հարցերով իրավաբան-փորձագետ

ՀՀ ԱՀՌԾ-ով ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ՆԱԽԱՏԵՍՎԱԾ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՓՈՐՁԱԳԻՏԱԿԱՆ ԳՆԱՀԱՏՈՒՄ

Նախնական փորձագիտական գնահատում

Համառոտ ամփոփում

Վերջին 10 տարիների ընթացքում Հայաստանի առողջապահության համակարգում ընթացող փոփոխությունները կամ բարեփոխումները բնակչության առողջության պահպանման առումով բերել են հակասական արդյունքների: Չնայած առողջապահության համակարգը ընդհանուր առմամբ պահպանել է իր գործունակությունը, այսինքն տեղի չեն ունեցել այնպիսի անդառնալի փոփոխություններ, ինչպես արդյունաբերության կամ այլ ոլորտներում, սակայն նույն ժամանակահատվածում բնակչության լայն խավերի համար բուժօգնության մատչելիությունը էականորեն նվազել է, ինչն ուղեկցվել է հիվանդացության աճով և առողջապահական ռեսուրսների սպառման նվազումով: Բուն առողջապահության ոլորտում կատարվող գործընթացները հանգեցրել են համակարգի ֆունկցիոնալ արդյունավետության իջեցմանը, ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային օղակների միջև փոխադարձ կապի խզմանը, համակարգի կառավարելիության աստիճանի նվազմանը և այլ բացասական երևույթների:

Հայաստանի Հանրապետության Կառավարության կողմից 2003թ. հուլիսին հաստատված աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիրը (ԱՀՌԾ) առկա հիմնախնդիրները լուծելու նպատակով նախատեսում է առաջիկա տարիների ընթացքում (մինչև 2015թ.-ը ընկած ժամանակահատվածի կտրվածքով) շուրջ հինգ անգամ ավելացնել առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորումը, միաժամանակ շեշտադրելով առողջապահական հետևյալ գերակայությունները. առաջնային բուժօգնություն, մոր և մանկան առողջության պահպանում, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելում: ԱՀՌԾ-ն հաստատում է Կառավարության վճռականությունը՝ առաջնահերթ ուշադրություն դարձնելու առողջապահության ոլորտի ֆինանսավորմանը, նշելով, որ «Ծրագրային ողջ ժամանակահատվածում առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը գերազանցելու է ընդհանուր բյուջետային ծախսերի աճին՝ հանգեցնելով պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում առողջապահության բաժնի ավելացմանը: (...) միջոցների ակնկալվող մակարդակից ցածր հասանելիության պարագայում իշխանությունները պատրաստակամ են բյուջեի կառուցվածքում իրականացնել նույնիսկ ավելի մեծ չափերի հասնող միջոցառումներ՝ վերաբաշխումներ՝ նկատի ունենալով առողջապահության ոլորտի գերակայությունը»:

ԱՀՌԾ-ով նախատեսված միջոցառումների իրականացումը կարող է իրական նախապայմաններ ստեղծել առողջապահության ոլորտում կուտակված խոչընդոտների հաղթահարման և բնակչության առողջական վիճակի բարելավման համար: Այս առումով հատկապես կարևորվում է Կառավարության կողմից ԱՀՌԾ-ի իրագործման ուղղությամբ քաղաքական կամքի և հետևողականության դրսևորումը: Որպես ԱՀՌԾ-ի իրականացման մոնիտորինգի չափանիշներ պետք է դիտարկվեն առողջապահության ոլորտի պետական ֆինանսավորման ցուցանիշները (այդ թվում՝ առաջնային բուժօգնության մասնաբաժինը ֆինանսավորման ընդհանուր ծավալում) և բնակչության համար բուժօգնության ծառայությունների մատչելիության փոփոխությունները, իսկ ավելի երկարաժամկետ հեռանկարում՝ նաև հիվանդացության և մահացածության ցուցանիշների դինամիկան:

Որպես իրավիճակի ելակետային գնահատում, սույն հետազոտության սահմաններում փորձ է արված տալ առողջապահության ոլորտի օրենսդրական կարգավորման հիմքերի,

բուժօգնության ծառայությունների գնագոյացման և ֆինանսավորման սկզբունքների նկարագրությունը: Ներկայացված է նաև առողջապահության համակարգի ինստիտուցիոնալ կառուցվածքը: Նշված գործոնները ընտրված են որպես առողջապահության համակարգի արդյունավետ գործունեության համար էական հանդիսացող հանգամանքներ, որոնց վերլուծությունը թույլ կտա հետագայում գնահատել ոլորտում կատարվող հնարավոր փոփոխությունները և դրանց ազդեցությունը ԱՀՌԾ-ով նախատեսված նպատակների տեսանկյունից:

1. Ներածություն

Խորհրդային Միության փլուզումից հետո Հայաստանը ժառանգեց առողջապահության բավականին զարգացած ենթակառուցվածքներ: 1991թ-ին երկրում գործում էին 179 հիվանդանոցներ և 537 ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատություններ, որոնցում աշխատում էին 14 747 բժիշկներ և 36 177 բուժքույրեր³: Հայաստանի Հանրապետությունը սկսել է առողջապահության ոլորտում բարեփոխումների իրականացումը 1993թ-ին, անկախության նվաճումից երկու տարի անց: ԽՍՀՄ-ի փլուզմանը հաջորդած տասնամյակի ընթացքում Հայաստանի տնտեսությունը և սոցիալական ոլորտները ենթարկվեցին կտրուկ փոփոխությունների, որոնք բերեցին սոցիալական ոլորտներում ճգնաժամի առաջացման՝ ներառյալ առողջապահությունը:

Համաձայն 2001թ. հոկտեմբերին տեղի ունեցած մարդահամարի նախնական տվյալների՝ Հայաստանի բնակչությունը կազմել է շուրջ երեք միլիոն երկու հարյուր հազար մարդ: Մինչև 1960թ.-ը բնակչությունը հիմնականում գյուղաբնակ էր, բայց այնուհետև ուրբանիզացիայի արագ տեմպերի պատճառով դարձավ հիմնականում քաղաքաբնակ: Բնակչության խտությունը 127 մարդ է մեկ քառ. կմ-ի վրա, որի մոտ 67 %-ը ապրում է քաղաքներում:

Վարչական առումով երկիրը բաժանված է 11 մարզերի, որոնցից մեկը մայրաքաղաք Երևանն է (ԽՍՀՄ-ի ժամանակ գոյություն ունեին 37 շրջաններ): Բացի Երևանից, մնացած 10 մարզերը իրենց հերթին բաժանված են 931 համայնքների: Երևանն իր 1 միլիոն 260 հազար բնակչությամբ, որը կազմում է երկրի ընդհանուր բնակչության շուրջ 40 %-ը, նույնպես ունի մարզի կարգավիճակ:

Հայաստանի առողջապահության ներկա համակարգը հիմնականում ձևավորվել է Խորհրդային Միության տարիներին, երբ գլխավոր շեշտը դրվում էր առողջապահական հզորությունների ավելացման, նոր բուժհիմնարկների կառուցման և լրացուցիչ բժշկական մասնագիտական կադրերի պատրաստման վրա: Խորհրդային առողջապահական համակարգը, օժտված լինելով որոշակի առավելություններով (բժշկական օգնության մատչելիություն բնակչության լայն խավերի համար, կանխարգելիչ բուժօգնության զարգացման բարձր մակարդակ և այլն), միաժամանակ բնութագրվում էր այնպիսի թերություններով, ինչպիսիք են կառավարման և ֆինանսավորման գործառույթների բացարձակ կենտրոնացումը պետության ձեռքում, հիվանդի կողմից բժշկի և բուժհիմնարկի ազատ ընտրության հնարավորության բացառումը, ժամանակակից տեխնոլոգիաների զարգացման խիստ ցածր մակարդակը և այլն:

Վերջին տարիների սոցիալ-տնտեսական փոփոխությունների արդյունքում էականորեն վատթարացել են ժողովրդագրական հիմնական ցուցանիշները. վերջին տասնամյակում (1990-2001թթ). մոտ 8 անգամ նվազել է բնակչության բնական աճի տեմպը, ծնելիությունը կրճատվել է ավելի քան 2 անգամ: Հիվանդացության ընդհանուր աճի պայմաններում նվազել է առողջապահական ռեսուրսների սպառումը բնակչության կողմից: Հիվանդանոցային բուժման համար դիմող անձանց տեսակարար կշիռը կրճատվել է շուրջ 2.5 անգամ (4.9 հոսպիտալացում 100 բնակչի հաշվով 2001թ-ին, 12.0 հոսպիտալացում՝ 1991թ-ին), ամբուլատոր-պոլիկլինիկական հաճախումների ցուցանիշը՝ շուրջ 3.5 անգամ (6.7 միլիոն

³ ՀՀ առողջապահության նախարարության վիճակագրական տեղեկագիր, 1998թ.

այցելություն 2001թ-ին, 22.7 միլիոն այցելություն 1992-ին): Ավելի քան 1.5 անգամ իջել է հիվանդանոցային մահճակալների ծանրաբեռնվածությունը (2001թ-ին՝ 44 %, 1991թ-ին 73 %):

Ստորև բերվող աղյուսակի տվյալները բնութագրում են հիմնական ժողովրդագրական և բնակչության առողջական վիճակի ցուցանիշները 1991թ-ի և 1998-2001թթ-ի կտրվածքով:

Ինչպես երևում է բերված տվյալներից, կյանքի միջին տևողությունը 2001թ-ին 1998թ. համեմատությամբ փոքր-ինչ նվազել է, իսկ 1991թ-ի նկատմամբ աճել է 2.5 տարով, բնակչության բնական աճը տարեցտարի անշեղորեն կրճատվում է, մանկական մահացությունը 1991թ. նկատմամբ որոշակիորեն կրճատվել է, իսկ մայրական մահացությունը, վերջին տարիների կտրուկ տատանումներից հետո 2001թ-ին գրեթե հավասարվել է 1991թ-ի ցուցանիշին: Այս ցուցանիշը (23.9՝ 2001թ-ին) դեռևս մնում է բարձր, համեմատած Եվրոմիության միջին ցուցանիշի հետ (5.6; 2000թ.), սակայն ավելի ցածր է, քան թե ԱՊՀ երկրների միջինը (34.8; 2001թ.)⁴:

Աղյուսակ 1. Հայաստանի ժողովրդագրական և բնակչության առողջական վիճակը բնութագրող հիմնական ցուցանիշները 1991-2001թթ.

h/h	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1991թ.	1998թ.	1999թ.	2000թ.	2001թ.
1	ծնվելու պահին կյանքի միջին տևողությունը (ընդհանուր), տարի	71.0	74.7	73.2	73.4	73.5
2.	բնակչության բնական աճը 1000 բնակչի հաշվով	15.1	4.25	3.3	2.7	2.1
3	մանկական մահացությունը (մինչև 1 տարեկան մահացած երեխաների թիվը 1000 կենդանածինների հաշվով), մարդ	17.9	14.7	15.4	15.6	15.4
4	մայրական մահացությունը (մահացած ծննդկանների թիվը 100.000 կենդանածինների հաշվով), մարդ	23.1	20.1	35.0	69.7	23.9

Աղբյուրները. Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, Ազգային վիճակագրական ծառայություն, ՀՀ Առողջապահության նախարարության վիճակագրական տեղեկագիր, European Health for all database, WHO/Europe

Ընդհանուր առմամբ, վերոհիշյալ ցուցանիշները վկայում են այն մասին, որ չնայած նախորդ տասնամյակի ծանր սոցիալ-տնտեսական ճգնաժամին՝ Հայաստանին հաջողվել է հիմնականում պահպանել առողջապահական համակարգի գործունակությունը: Մինչև 2001թ-ը (օպտիմալացման սկիզբը) առողջապահական ենթակառուցվածքներում կրճատումներ գրեթե չէին կատարվել (բացառությամբ 2-3 բուժօգնականների փակման, որոնց շենքերը գտնվում էին վթարային վիճակում):

Հաշվի առնելով առողջապահության համակարգում կուտակված հիմնախնդիրների կարևորությունը, որոնց շարքում առավել հրատապ է հանդիսանում բնակչության առավել աղքատ խավերի համար բուժօգնության ծառայությունների մատչելիության ապահովումը, ՀՀ Կառավարության կողմից 2003թ. հուլիսին հաստատված աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրում (ԱՀՌԾ) հատուկ կարևորվել է առողջապահության ոլորտում

⁴ European Health for All database, WHO

իրականացվելիք քայլերի վրա: Համաձայն այդ փաստաթղթի՝ «առողջապահության ոլորտում ծրագիրը նպատակ ունի շրջադարձ կատարել համակարգի զարգացման վերջին տարիներին նկատված անբարենպաստ միտումներից և առավելագույնս իրականացնել քաղաքացիների առողջության պահպանման սահմանադրական իրավունքը՝ կտրուկ բարձրացնելով պետության կողմից երաշխավորվող բուժօգնության մատչելիությունը և որակը (առաջին հերթին՝ բնակչության աղքատ խմբերի համար): (...) Առաջարկվող միջոցառումները, մասնավորապես նպատակ են հետապնդելու ապահովել ՄԱԿ-ի կողմից սահմանված հազարամյակի զարգացման մանկամահացության և մայրամահացության նվազեցման թիրախային ցուցանիշները»: ԱՀՌԾ-ով սահմանված են առողջապահության պետական ֆինանսավորման բարելավման, նպատակակետեր 2004-2015 թթ. համար, ինչպես նաև ծրագրային գերակայություններ՝ առաջնային բուժօգնության, մոր և մանկան առողջության պահպանման, տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՁԻԱՀ-ի կանխարգելման ուղղություններով:

2. Բնակչությանը բուժօգնության ցուցաբերման և առողջապահության պետական ֆինանսավորման գործընթացները կանոնակարգող իրավական դաշտը

1990թ. Հայաստանի անկախության հռչակումից հետո առողջապահությանն առնչվող առաջին օրենսդրական ակտը Գերագույն Խորհրդի կողմից 1992թ.-ին ընդունված «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին» օրենքն էր: 1995թ.-ին հանրաքվեով ընդունված *Սահմանադրության* 34-րդ հոդվածում ամրագրված է. «Յուրաքանչյուր ոք ունի առողջության պահպանման իրավունք: Բժշկական օգնության և սպասարկման կարգը սահմանվում է օրենքով: Պետությունն իրականացնում է բնակչության առողջության պահպանման ծրագրեր, նպաստում ֆիզկուլտուրայի և սպորտի զարգացմանը»: Սահմանադրության ընդունումից մեկ տարի անց՝ 1996թ. Ազգային ժողովի կողմից ընդունվեց *«Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»* օրենքը, 1997թ.-ին՝ *«Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին»* օրենքը, 1998թ.՝ *«Դեղերի մասին»* օրենքը, 2002թ.՝ *«Մարդու օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին»*, *«Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»*, *«Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին»* օրենքները:

Բացի վերոհիշյալ օրենքներից, որոնք հիմնականում կամ գերազանցապես վերաբերվում են առողջապահության ոլորտին, բնակչության բուժօգնության կազմակերպման, ինչպես նաև առողջապահության համակարգի գործունեության վրա անմիջական ազդեցություն են գործում նաև մի շարք այլ օրենքներ, որոնցից կարելի է առանձնացնել *«Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին»* (1993թ.), *«Գովազդի մասին»*, *«Տեղական ինքնակառավարման մասին»* (1996թ.), *«Զինժառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»* (1998թ.), *«Կրթության մասին»*, *«Սննդամթերքի անվտանգության մասին»* (1999թ.), *«Գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»* (2000թ.), *«Լիցենզավորման մասին»*, *«Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին»*, *«Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»* (2001թ.), *«Երեխայի իրավունքների մասին»*, *«Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»*, *«Բարեգործության մասին»* (2002թ.) օրենքները, ինչպես նաև ՀՀ քաղաքացիական, աշխատանքային, քաղաքացիական դատավարության, քրեական դատավարության օրենսգրքերը: Առողջապահության ոլորտի ձեռնարկությունների գործունեությունը կարգավորվում է նաև հարկային ոլորտը, ինչպես նաև աշխատանքի վարձատրության և պարտադիր սոցիալական ապահովագրության վճարների հարցերը կանոնակարգող օրենքներով:

Առողջապահության ֆինանսավորման ոլորտում գործող իրավահարաբերությունները նպատակահարմար է դիտարկել երկու տեսանկյունից՝ *պետական ֆինանսավորում* և *վճարովի ծառայությունների* կանոնակարգում: Մինչև 1998թ-ը *առողջապահության ոլորտի պետական բյուջեից կատարվող ֆինանսավորումը* իրականացվում էր առողջապահության նախարարության (հանրապետական ենթակայության բուժփնիմնարկներ) և մարզպետարանների (տեղական ենթակայության բուժփնիմնարկներ) միջոցով՝ ֆինանսների նախարարության կենտրոնական գանձապետարանի կողմից բյուջեով նախատեսված միջոցների հատկացման հաշվին: 1998թ-ին Համաշխարհային Բանկի և ՀՀ Կառավարության միջև կնքված «Առողջապահության ֆինանսավորման և առողջության առաջնային պահպանման զարգացման» վարկային համաձայնագրի շրջանակներում ստեղծվեց ՀՀ Կառավարությանն առընթեր պետական առողջապահական գործակալությունը (ՊԱԳ)՝ իր մարզային ստորաբաժանումներով: Նման կարգավիճակով ՊԱԳ-ը գործեց մինչև 2002թ. հուլիսի 8-ը, երբ ՀՀ Նախագահի ՆՀ-1132-Ն հրամանագրով Կառավարության կառուցվածքի վերանայման արդյունքում այն ընդգրկվեց ՀՀ առողջապահության նախարարության կազմի մեջ:

ՊԱԳ-ի ստեղծումն ուղղված էր առողջապահության ոլորտում «ծառայություններ մատուցող-գնորդ» գործառույթների տարաբաժանմանը, ինչը պետք է բերեր առողջապահության ֆինանսավորման բարելավմանը, պետության կողմից ֆինանսավորվող բուժօգնության որակի և մատչելիության բարելավման: Այնուհանդերձ, ինչպես ցույց տվեցին հետագա տարիների զարգացումները, պետական բյուջեից առողջապահության ոլորտին հատկացվող անբավարար և թերի ֆինանսավորման արդյունքում համակարգը 1999-2001թթ. հայտնվեց աննախադեպ ճգնաժամային իրավիճակում, որի արդյունքում բուժփնիմնարկներում գոյացան աշխատավարձերի բազմամսյա պարտքեր: Իրավիճակը բարելավվեց միայն 2002թ-ին, երբ հաջողվեց ապահովել ոլորտի լիարժեք ընթացիկ ֆինանսավորումը և մարել նախորդ տարիներին կուտակված պարտքերի զգալի մասը (տես աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի պետական ֆինանսավորումը 1999-2002 թթ.

h/h	ՑՈՒՑԱՆԻՇՆԵՐ	1999թ.	2000թ.	2001թ.	2002թ.
1	համախառն ներքին արդյունք (ՀՆԱ)*, մլրդ դրամ	987.4	1031.3	1175.5	1357.3
2	առողջապահական պետական ծախսեր (պլանային) որպես ՀՆԱ-ի տոկոս**	2.1	1.9	1.5	1.2
3	առողջապահական պետական ծախսեր (փաստացի) որպես ՀՆԱ-ի տոկոս**	1.2	0.8	1.0	1.2
4	պետական բյուջեում առողջապահության համար պլանավորված ծախսեր, մլրդ դրամ**	20.5	20.3	18.2	16.3
5	պետական բյուջեից առողջապահությանն ուղղված փաստացի ծախսեր, մլրդ դրամ**	12.4	8.8	13.7	16.0
6	պետական բյուջեում առողջապահության համար պլանավորված ծախսերի տեսակարար կշիռ, տոկոս**	7.0	6.4	7.5	6.2
7	պետական բյուջեից առողջապահությանն ուղղված փաստացի ծախսերի տեսակարար կշիռ, տոկոս**	5.4	4.0	6.4	6.1

Աղբյուրները. * - Հայաստանի վիճակագրական տարեգիրք, 2002, Ազգային վիճակագրական ծառայություն

** - ՀՀ ՖԷՆ և Առողջապահության նախարարության տվյալներ, փորձագիտական գնահատականներ

ՊԱԳ-ը կնքում է պայմանագրեր բուժփիննարկների հետ ՀԾՓ-ի շրջանակներում («պետպատվեր») բժշկական օգնության ցուցաբերման վերաբերյալ: Բուժփիննարկները կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվությունները յուրաքանչյուր ամիս ներկայացնում են ՊԱԳ-ի համապատասխան տարածքային ստորաբաժանում, որոնց հիման վրա ՊԱԳ-ը ֆինանսավորման հայտեր է ներկայացնում գանձապետարանին: Դրամական միջոցների իրական հոսքերը կարգավորվում են գանձապետարանի միջոցով: Կան առողջապահական որոշ ծրագրեր, որոնց գծով պետական ֆինանսավորումը իրականացվում է ուղղակիորեն առողջապահության նախարարության կողմից (սանիտարա-հակահամաճարակային ծառայություն, դատաբժշկական փորձաքննություն, դժվարամատչելի ախտորոշիչ ծառայություններ և այլն):

Ինչ վերաբերում է *բուժօգնության վճարովի ծառայություններին*, ապա մինչև Հայաստանի Հանրապետության Սահմանադրության ընդունումը (1995թ.) առողջապահության ոլորտում պաշտոնական վճարովի ծառայությունների ներմուծումը սահմանափակվում էր համապատասխան օրենսդրական դաշտի բացակայությամբ: Փաստորեն գործում էր Հայկական ԽՍՀ Սահմանադրության այն դրույթը, որի համաձայն բուժօգնությունը անվճար էր ողջ բնակչության համար՝ անկախ սոցիալական, առողջական և այլ հանգամանքներից: ՀՀ Սահմանադրության ընդունմանը հաջորդեց 1996թ-ին «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» օրենքի ընդունումը, որն իրավական առումով հնարավորություն ստեղծեց տարաբաժանել բուժօգնությունը «անվճար-վճարովի» սկզբունքով և հստակեցնել պետության կողմից ֆինանսավորվող բուժօգնության ծավալները: Օրենքը նախատեսում էր, որ ամեն տարի Կառավարության կողմից պետք է հաստատվեն պետական նպատակային առողջապահական ծրագրերը, որոնք ենթակա են ֆինանսավորման պետական բյուջեի միջոցների հաշվին (ավելի ուշ՝ 2000թ-ի ապրիլին ընդունված Օրենքի փոփոխության համաձայն, պետական նպատակային ամենամյա ծրագրերը հաստատվում են Ազգային ժողովի կողմից՝ պետական բյուջեի ընդունման ընթացքում): Ներկայումս գործում է Կառավարության 2003թ. փետրվարի 6-ի թիվ 246-Ն որոշումը՝ «2003թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին»:

Կառավարության կողմից հաստատված՝ առողջապահության ոլորտում պետական երաշխիքների առաջին փաթեթը ուժի մեջ մտավ 1997թ-ի հուլիսի 1-ից, որն էլ համարվում է Հայաստանում վճարովի բուժօգնության ներդրման սկիզբը: Սկսած 1997թ-ից՝ Կառավարությունը ամեն տարի հաստատում է պետության կողմից երաշխավորված բուժօգնության և սպասարկման մասին փաթեթը (միջազգային տերմինաբանությամբ՝ Հիմնական Ծառայությունների Փաթեթ կամ ՀԾՓ), որով սահմանվում են պետության կողմից ֆինանսավորվող բժշկական օգնության տեսակները, բնակչության սոցիալական խմբերը, որոնք օգտվում են անվճար բուժապասարկման իրավունքից, և այլ կազմակերպա-ֆինանսական դրույթներ: Այսպիսով, այն բոլոր ծառայությունները, որոնք ընդգրկված չեն ՀԾՓ-ում, կարող են իրականացվել միայն վճարովի հիմունքներով:

Վճարովի բժշկական ծառայությունների դաշտը պետության կողմից գրեթե կանոնակարգված չէ: Բուժփիննարկների ղեկավարները ինքնուրույն են հաստատում ինչպես վճարովի բուժօգնության գները, այնպես էլ դրանց մատուցման կարգը: Տարբեր բուժփիննարկներում նույնատիպ ծառայությունների գները կարող են էականորեն տարբերվել միմյանցից (ավելի մանրամասն այս հարցի մասին՝ տես գլուխ 4): Կարևոր է նշել, որ պաշտոնական վճարովի ծառայությունների ներմուծումը չվերացրեց առողջապահության համակարգում առկա ստվերային վճարումների երևույթը, որոնք շարունակում են լայնորեն կիրառվել ինչպես ՀԾՓ-ի շրջանակներում, այնպես էլ դրանում չընդգրկված բուժօգնության դեպքերում: Համաձայն ՀԲ-ի տվյալների՝ 1999թ-ին Հայաստանում բուժօգնության դիմած

քաղաքացիների 91 %-ը կատարել են ստվերային վճարումներ⁵, որն ամենաբարձր ցուցանիշն է եղել նախկին ԽՍՀՄ և Արևելյան Եվրոպայի երկրների շարքում: Առողջապահության ոլորտում ոչ պաշտոնական կամ ստվերային վճարումները, ըստ տարբեր փորձագիտական գնահատումների, կազմում են տվյալ ոլորտի ընդհանուր ֆինանսական հոսքերի 45-ից 60 %-ը⁶: Ինչպես երևում է այս տվյալներից՝ ստվերային վճարումների հիմնախնդիրը բավականին ծավալուն է և դրա համակողմանի վերլուծությունը դուրս է գալիս տվյալ ուսումնասիրության շրջանակներից:

3. Հայաստանի Հանրապետության առողջապահության ոլորտի ինստիտուցիոնալ կառուցվածքը

Հայաստանի առողջապահության համակարգը բուժօգնության կազմակերպման առումով բաղկացած է առաջնային, երկրորդային (մասնագիտացված) և երրորդային (նեղ մասնագիտացված) օղակներից: Առաջնային օղակը ներկայացված է ամբուլատոր-պոլիկլինիկական բուժհաստատությունների կազմում գործող առաջնային մակարդակի բուժաշխատողներով (ընտանեկան բժիշկ, թերապևտ, մանկաբույժ, բուժքույր)⁷: Երկրորդային բուժօգնությունը մատուցվում է ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի նեղ մասնագետների, ինչպես նաև ստացիոնար բուժօգնարկների (հիվանդանոց, դիսպանսեր, ծննդատուն և այլն) բուժաշխատողների կողմից: Երրորդային մակարդակը ներկայացված է հիմնականում Երևանում գտնվող նեղ մասնագիտացված ստացիոնար բուժհաստատություններով (կամ բազմապրոֆիլ հիվանդանոցների կազմում գործող նեղ մասնագիտական բաժանմունքներով):

Սեփականության ձևի առումով Հայաստանի առողջապահության համակարգը գլխավորապես բաղկացած է պետական սեփականություն հանդիսացող բուժհաստատություններից: Մինչև 2001թ-ը բուժօգնարկների լայնամասշտաբ սեփականաշնորհում տեղի չէր ունեցել, մասնավորեցվել էին դեղատնային ցանցը (գրեթե ամբողջովին), ատամնաբուժական պոլիկլինիկաները և որոշ առողջարանային հաստատություններ: 2001-2003թթ. ընթացքում մասնավորեցվեցին շուրջ երեք տասնյակ բուժօգնարկներ, այդ թվում՝ մի շարք խոշոր բազմապրոֆիլ հիվանդանոցներ: Ներկայումս առողջապահության ոլորտում մասնավորեցման գործընթացը ժամանակավորապես կասեցված է:

Կառավարման տեսանկյունից համակարգը բաժանված է երկու մակարդակների՝ հանրապետական ենթակայության բուժօգնարկներ (տարածքային առումով գտնվում են Երևանում և ենթարկվում են ՀՀ առողջապահության նախարարությանը), իշխանության տեղական մարմինների ենթակայության բուժօգնարկներ (Երևանում և մարզերում գտնվող): Ամբուլատոր-պոլիկլինիկական ողջ համակարգը հանդիսանում է տեղական ենթակայության: Մասնավորեցված բուժօգնարկների կառավարման առումով պետական մարմինների լիազորությունները հիմնականում իրականացվում են բժշկական գործունեության լիցենզավորման, ինչպես նաև ՀԾՓ-ում ընդգրկված ծառայությունների մատուցման պայմանագրերի կնքման և դրանց դիմաց ֆինանսավորման մեխանիզմների միջոցով:

⁵ Lewis, M. (2000), *Who is Paying for Health Care in Europe and Central Asia?*, Washington, DC, World Bank.

⁶ Համաշխարհային բանկի կողմից աջակցվող Առողջապահության ֆինանսավորման բարեփոխումների ծրագրի նախագիծը կազմող փորձագիտական խումբ (1996), Պետական առողջապահական գործակալություն(2000).

⁷ Առողջության առաջնային պահպանման (ԱՄ) և ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգերը հաճախ նույնացվում են, ինչը ճիշտ չէ: Ամբուլատոր-պոլիկլինիկական համակարգի մասն են կազմում նաև պոլիկլինիկաների կազմում գործող նեղ մասնագետները, որոնց կողմից մատուցվում է երկրորդային մակարդակի բուժօգնություն:

Հայաստանի առողջապահության ոլորտում վերջին տարիներին իրականացված առավել նշանակալից գործընթացներից է բուժօգնության ցանցի օպտիմալացումը, որն սկսվել է 2001թ-ին: Օպտիմալացմանը նախորդել էր 1996թ.-ից առողջապահության համակարգում սկսված վարչական ապակենտրոնացման գործընթացը, որի արդյունքում առանձնացան և նախկինում գոյություն ունեցող շրջանային մոտ 40 բուժմիավորմանը իրավաբանական անձի կարգավիճակով փոխարինելու եկան 40 հիվանդանոց, 14 ծննդատուն, շտապ բուժօգնության 9 կայան, մեծահասակների և խառը 40, ինչպես նաև մանկական 22 պոլիկլինիկա, գյուղական առողջության 49 կենտրոն ու գյուղական բժշկական 204 ամբուլատորիա և նույնիսկ մի քանի խորհրդատվություններ: Այսպիսով, մարզերում /առանց Գյումրի և Վանաձոր քաղաքների/ շրջանային 40 բուժմիավորմանը փոխարինելու եկան պետական փակ բաժնետիրական ընկերության կարգավիճակով 378 բժշկական կազմակերպություններ: Ինչ վերաբերում է Երևան քաղաքին, ապա այստեղ առկա առողջապահական հիմնարկների մասին տեղեկությունները բերվում են ստորև.

Աղյուսակ 3. Երևան քաղաքում գործող առողջապահական հաստատությունները մինչև օպտիմալացման գործընթացը

Վարչական ենթակայությունը	Հիվանդանոցներ		Պոլիկլինիկաներ		Դիսպանսերներ	Ծննդատներ	Շտապօգնության կայաններ	Ընդամենը
	մեծահասակների	մանկական	մեծահասակների	մանկական				
Հանրապետական	17	5	2	2	2	3		31
Երևանի քաղաքապետարանի	7	4	29	11	3	7	1/8	69
Ընդամենը	24	9	31	13	5	10	8	100

Աղբյուրը. ՀՀ առողջապահության նախարարություն

Հայաստանի Հանրապետության Կառավարության 2001թ. փետրվարի 5-ի թիվ 80 որոշմամբ հաստատվեց «Հայաստանի Հանրապետության առողջապահության համակարգի օպտիմալացման հայեցակարգը» և ըստ առանձին մարզերի օպտիմալացման ծրագրերի ներկայացման ժամանակացույցը: 2001թ.-ի փետրվար-սեպտեմբեր ամիսների ընթացքում Կառավարության կողմից հաստատվեցին բոլոր 10 մարզերի և Երևան քաղաքի առողջապահության համակարգերի օպտիմալացման ծրագրերը, որոնցով նախատեսվում էր այդ գործընթացը հիմնականում ավարտել 2001թ.-ի ընթացքում:

ՀՀ առողջապահության նախարարության կողեգիան, 2002թ.-ի սկզբին քննարկելով օպտիմալացման արդյունքները 2001թ.-ի առաջին 9 ամիսների տվյալների հիման վրա, որոշեց 2001թ.-ը համարել այդ գործընթացի առաջին փուլ, իսկ օպտիմալացումը շարունակել և ավարտել 2002-2003թթ.-ին: Միաժամանակ ամփոփվեցին առաջին փուլի արդյունքները, որոնց համաձայն ազատվել են ավելի քան 48 հազ. քառ.մ. մակերեսով տարածություններ, լուծարման և վերակազմակերպման է ենթարկվել 128 կազմակերպություն, կրճատվել են շուրջ 4000 հիվանդանոցային մահճակալներ և ավելի քան 2000 հաստիքներ (առանց Երևան քաղաքի), տես ստորև բերվող աղյուսակը.

Աղյուսակ 4. Առողջապահության համակարգի օպտիմալացման արդյունքները ըստ Հայաստանի մարզերի


NN	Մարզը	Կրճատված մահճակալների թիվը	Կրճատված հաստիքների թիվը	Ազատված տարածքը (քառ. մետր)
1	Շիրակ	733	-	9114
2	Կոտայք	275	46	580
3	Արարատ	580	600	1800
4	Արմավիր	335	252	7950
5	Լոռի	770	220	7069
6	Արագածոտն	310	63	5586
7	Տավուշ	351	462	800
8	Գեղարքունիք	48	150	5335
9	Վայոց Ձոր	235	68	6350
10	Սյունիք	345	161	3810
Ընդամենը		3 982	2 022	48 394

Աղբյուր. ՀՀ առողջապահության նախարարություն

Համաձայն ՀՀ ԱՆ պաշտոնական դիրքորոշման՝ օպտիմալացման ընթացքում կրճատվել են հիմնականում վարչա-տնտեսական և համատեղությամբ աշխատող անձիք, ինչպես նաև որոշ կենսաթոշակային տարիքի հասած աշխատակիցներ, այսինքն՝ բուժանճնակազմի լայնամասշտաբ կրճատումներ չեն կատարվել:

Հետևյալ պատկերը բնութագրում է Հայաստանի մարզերի բուժհիմնարկների թվաքանակում կատարված փոփոխությունները՝ օպտիմալացումից առաջ և հետո:

Պատկեր 1. ՀՀ բուժհիմնարկների թվաքանակը օպտիմալացումից առաջ և հետո:



Աղբյուր. ՀՀ առողջապահության նախարարություն

4. Առողջապահական ծառայությունների գնագոյացումը և բուժօգնություն իրականացնողների վճարման մեխանիզմները

Հայաստանում առողջապահական ծառայությունների գնագոյացման գործընթացը դիտարկելիս խնդիրը պետք է բաժանել երկու մասի. ՀԾՓ-ի շրջանակներում մատուցվող և պետական բյուջեից ֆինանսավորվող ծառայությունների գներ, որոնք հաստատվում են պետության կողմից, և վճարովի ծառայությունների գներ, որոնք հաստատվում են առանձին բուժհիմնարկների կողմից:

Պետպատվերի շրջանակներում ցուցաբերված բուժօգնության գները հաստատվում են ՀՀ առողջապահության նախարարության կողմից: Քանի որ ՀԾՓ-ն, որպես կանոն, շատ ավելի ծավալուն ընդգրկում ունի, քան թե թույլ են տալիս պետական բյուջեի իրական հնարավորությունները, այդ գների սահմանումը պատմականորեն հիմնվում է առաջին հերթին առկա ֆինանսական միջոցների ծավալի, և ոչ թե ծառայությունների ծախսատարության կամ ինքնարժեքի վրա: Այլ կերպ ասած՝ ելնելով տարբեր հանգամանքներից (այդ թվում՝ քաղաքական), պետության կողմից երաշխավորված բուժօգնության փաթեթը ընդգրկում է ծառայությունների բավականին լայն շրջանակ, որոնց իրական գներով ֆինանսավորումը վեր է պետական բյուջեի հնարավորություններից: Ըստ փորձագիտական գնահատականների՝ ներկա ՀԾՓ-ի իրական արժեքը շուրջ 5 անգամ գերազանցում է պետական բյուջեից առողջապահության ոլորտին հատկացվող գումարի չափը, իսկ դա իր հերթին նշանակում է, որ ՀԾՓ-ում ընդգրկված ծառայությունների գները մոտ 5 անգամ ցածր են դրանց իրական ինքնարժեքից:

Այսպիսով, յուրաքանչյուր հաջորդ տարվա բյուջեն պլանավորելիս առողջապահության նախարարությունը հենվում է առաջին հերթին ֆինանսների նախարարության կողմից կատարվող մակրոտնտեսական կանխատեսումների վրա, որոնց արդյունքում պետական բյուջեի կառուցվածքում առողջապահության ոլորտի համար նախատեսվում է ֆինանսավորման որոշակի ծավալ: Ակնկալվող ֆինանսավորման ծավալը բաժանվում է ՀԾՓ-ի կազմում ընդգրկվող հիվանդանոցային դեպքերի, առաջնային բուժօգնության սպասվելիք ծավալների և այլ պատմական վիճակագրական ցուցանիշների վրա՝ ստանալով ըստ մարդաշնչի տարեկան ֆինանսավորման նորմատիվը (առաջնային օդակի համար) և մեկ դեպքի միջին արժեքը՝ ըստ հիմնական նոզոլոգիական խմբերի (հիվանդանոցային

բուժօգնության համար): Մոտավորապես նույն սխեմայով է իրականացվում նաև պետական բյուջեից ֆինանսավորվող բուժօգնության այլ տեսակների գնագոյացումը:

Փաստորեն, առողջապահության նախարարության դերը՝ որպես տվյալ ոլորտում պետական քաղաքականություն իրականացնող մարմին, բժշկական ծառայությունների գնագոյացման գործում բավականին սահմանափակ է: Առողջապահության նախարարությունը ստիպված է «տեղավորվել» ֆինանսների նախարարության կողմից նախապես որոշված ընդհանուր բյուջեի շրջանակներում՝ միաժամանակ քաջ գիտակցելով, որ ՀԾՓ-ի համար սահմանվող գները հեռու են իրականությունից, չեն կարող ապահովել որակյալ և մատչելի բուժօգնության ցուցաբերում, հետևաբար, դրանով իսկ հող են ստեղծում ստվերային վճարումների երևույթի շարունակման և խորացման համար:

ՀԾՓ-ում ընդգրկված ծառայությունների ֆինանսավորման համար կիրառվում են բուժօգնություն իրականացնողների վճարման երկու հիմնական մեխանիզմներ. *ըստ մարդաշնչի* (“*per capita*”) և *ըստ դեպքի կամ ըստ մատուցված ծառայությունների* (“*fee per case*” կամ “*fee for service*”): Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի ծառայությունները առաջնային բուժօգնության մասով (տեղամասային թերապևտների, մանկաբույժների և ընտանեկան բժիշկների կողմից մատուցվող ծառայություններ) ֆինանսավորվում են ըստ մարդաշնչի սկզբունքով՝ ելնելով տվյալ բուժօգնության կողմից սպասարկվող տարածքի բնակչության (կամ այսպես կոչված «ամրակցված բնակչության») թվաքանակից: Առողջապահության նախարարության կողմից ըստ մարդաշնչի ֆինանսավորման տարեկան նորմատիվները հաստատվում են տարեկան կտրվածքով և յուրաքանչյուր տարի վերանայվում են: Այս ծառայությունները հռչակված են անվճար ողջ ազգաբնակչության համար: Ամբուլատոր-պոլիկլինիկական օղակում մատուցվող նեղ մասնագիտական և ախտորոշիչ-լաբորատոր ծառայությունները անվճար են միայն սոցիալապես անապահով խմբերում ընդգրկված քաղաքացիների համար և պետության կողմից ֆինանսավորվում են ըստ փաստացի մատուցված ծառայությունների ծավալի:

Հիվանդանոցային օղակում ՀԾՓ-ի շրջանակներում պետությունը երաշխավորում է միայն որոշակի հիվանդությունների անվճար բուժումը՝ ողջ ազգաբնակչության համար, կամ ստացիոնար բուժօգնության ողջ ծավալը (որոշ բացառություններով)՝ սոցիալապես անապահով խմբերին պատկանող քաղաքացիների համար: Այս ծառայությունների ֆինանսավորումը կատարվում է ըստ դեպքի՝ միջինացված գներով: Այս սկզբունքին զուգահեռ՝ հիվանդանոցների հետ ՊԱԳ-ի կողմից կնքվող պայմանագրերում սկսած 2000թ-ից սկսել է կիրառվել «գլոբալ բյուջեի» գաղափարը, որն ուղղված էր առաջին հերթին բուժօգնության կողմից պարտքերի կուտակման անվերահսկելի գործընթացի կասեցմանը: Համաձայն այդ սկզբունքի՝ ՊԱԳ-ի և բուժօգնության միջև կնքվող պայմանագրում նախապես սահմանվում է տվյալ հիվանդակի տարեկան «գլոբալ բյուջեն», այսինքն՝ այն առավելագույն գումարը, որից ավելի այդ բուժօգնությունը չի կարող ֆինանսավորվել ՊԱԳ-ի կողմից:

Վճարովի ծառայությունների գնագոյացման գործընթացն այսօր Հայաստանում որևէ կերպ պետության կողմից կանոնակարգված չէ: Բուժօգնությունների տնօրենները ինքնուրույն են սահմանում այդ գները՝ ղեկավարվելով շուկայական մրցակցության, ծառայությունների ծախսատարության և գնի վրա ազդող այլ գործոնների վերաբերյալ ունեցած սեփական պատկերացումներով: Այնուհանդերձ, տարբեր բուժօգնություններում գործող վճարովի ծառայությունների գնացուցակների վերլուծությունը թույլ է տալիս կատարել որոշ եզրահանգումներ ընդհանուր տեղեկությունների մասին:

Նախ՝ ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնությունների վճարովի ծառայությունների գները (մասնագիտական խորհրդատվությունների և ախտորոշիչ հետազոտությունների համար սահմանված), որպես կանոն ավելի ցածր են համամասն ծառայությունների համար ստացիոնար բուժօգնությունների կամ ախտորոշիչ կենտրոնների կողմից սահմանված գներից, ինչը արտացոլում է ինչպես ամբուլատոր-պոլիկլինիկական օղակի նկատմամբ բնակչության

մոտ ձևավորված որոշակի անվատահոռության զգացումը, այնպես էլ այդ օղակում մատուցվող ծառայությունների որակի օբյեկտիվ մակարդակը:

Երկրորդը՝ մարզային բուժօգնությունում գործող վճարովի ծառայությունների գները, որպես կանոն, ավելի ցածր են նույնատիպ ծառայություններ մատուցող մայրաքաղաքային բուժօգնությունների գներից, ինչը ունի երկու հիմնական պատճառ. նախ Երևանի բուժօգնությունները անհամեմատ ավելի հագեցած են փորձառու մասնագետներով և ժամանակակից բժշկական սարքավորումներով, ինչը բարձրացնում է բուժօգնության որակն ու արժեքը, ապա՝ մարզերի հետ համեմատած Երևանի ազգաբնակչության վճարունակությունը ավելի բարձր է:

Երրորդը՝ վճարովի ծառայությունների համար սահմանվող գները շատ քիչ դեպքերում են հիմնավորվում տնտեսագիտական հաշվարկներով: Գործող տնտեսագիտական ծառայություններն ունեն փոքր թվով բուժօգնություններ: Բուժօգնությունների մեծ մասում վճարովի ծառայությունների գները սահմանելիս հիմք են ընդունում համանման ծառայությունների համար պետության կողմից հաստատված պետպատվերի գները: Այս երևույթն իր հերթին ունի երկու հիմնական պատճառ. առաջինը տնտեսագիտական ծառայության և համապատասխան հաշվարկների բացակայության պայմաններում այդ բուժօգնությունների ղեկավարները հաճախ այլընտրանք չունեն, քան թե կրկնօրինակել պետպատվերի գնացուցակը իրենց վճարովի ծառայությունների համար (դրանով իսկ այդ գների հիմնավորվածության պատասխանատվությունը դնելով առողջապահության նախարարության վրա), և երկրորդը՝ պետպատվերի գները, ինչպես արդեն նշվեց վերևում, լինելով ավելի ցածր այդ ծառայությունների իրական շուկայական արժեքից՝ հնարավորություն են ստեղծում ծառայությունների դիմաց վճարող քաղաքացիների համար կատարել նաև ոչ պաշտոնական վճարներ (ինչպես բուժանձնակազմի վարձատրության, այնպես էլ դեղորայքի և այլ անհրաժեշտ բժշկական պիտույքների համար): Միաժամանակ պետք է նշել, որ նույնիսկ այն առանձին (փոքրաթիվ) բուժօգնություններում, որտեղ վճարովի ծառայությունների գները մոտ են կամ համապատասխանում են դրանց շուկայական արժեքին՝ ոչ պաշտոնական վճարումները նույնպես լիովին վերացված չեն:

Վճարովի ծառայությունների դիմաց վճարումները կատարվում են, որպես կանոն, կանխիկ ձևով՝ բուժօգնության դրամարկում: Չնայած ըստ գործող հաշվապահական կարգի կանխիկ վճարման դեպքում դրամարկի մուտքի անդորրագիրը պետք է տրամադրվի այդ վճարումը կատարող քաղաքացուն, ստացիոնար բուժօգնությունում դրանք փակցվում են հիվանդության պատմագրում՝ որպես վճարման կատարման փաստացի ապացույց, և հետագայում ենթակա են ստուգման հիվանդանոցի ադմինիստրացիայի կողմից: Ոչ կանխիկ վճարման ձևը նույնպես կիրառվում է, սակայն համեմատաբար քիչ դեպքերում (բանկային փոխանցումներ են կատարվում հիմնականում ձեռնարկությունների կամ կազմակերպությունների կողմից՝ իրենց աշխատակիցների կամ այլ հովանավորվող անձանց բուժօգնության դիմաց):

Ինչ վերաբերում է բժշկական ապահովագրության սահմաններում գործող բուժօգնության ֆինանսավորման մեխանիզմներին, ապա պարտադիր բժշկական ապահովագրությունը (ՊԲԱ) Հայաստանում դեռևս բացակայում է (չնայած համապատասխան օրենքի նախագիծը պարբերաբար դրվում է քննարկման սկսած 1993թ-ից), իսկ կամավոր բժշկական ապահովագրությունը (ԿԲԱ) դեռևս գտնվում է սաղմնային վիճակում: ԿԲԱ համակարգից հիմնականում օգտվում են միջազգային կազմակերպությունների, դիվանագիտական ներկայացուցչությունների, ինչպես նաև օտարերկրյա կապիտալով գործող ձեռնարկությունների աշխատակիցները, որոնց ընդհանուր թիվը չի անցնում տաս հազարից: ԿԲԱ-ով Հայաստանում զբաղվում են գործող շուրջ 20 մասնավոր ապահովագրական ընկերությունների մոտ կեսը: Ապահովագրական ընկերությունները, որպես կանոն, ունեն կնքված պայմանագրեր տարբեր բուժօգնությունների հետ, իսկ որոշ դեպքերում որպես ապահովագրական ընկերության հիմնադիրներ հանդես են գալիս հենց բժշկական

հաստատությունները կամ դրանք ներկայացնող առանձին անհատներ, դրանով իսկ ձևավորելով ամերիկյան HMO⁸-ների նմանվող կառույցներ: Այնուհանդերձ, հաշվի առնելով առողջապահական համակարգում ոչ պաշտոնական վճարումների առկայությունը՝ ապահովագրական ընկերությունների մեծ մասը ներկայումս գերադասում են ապահովագրված անձանց ցուցաբերված բուժօգնության արժեքի փոխհատուցումը իրականացնել ոչ թե բուժօգնարկին վճարում կատարելու, այլ անմիջականորեն տվյալ անձի կատարած ծախսերի ուղղակի փոխհատուցման ձևով, որի համար կիրառվում են բուժօգնության միջինացված գներ:

⁸ Health Maintenance Organization, կամ Առողջության պահպանման կազմակերպություն – նախորդ դարի 70-ական թվականներին ձևավորված և հետագայում ԱՄՆ-ում լայն տարածում ստացած կազմակերպության ձև, որն իր մեջ միավորում է ինչպես ապահովագրողի, այնպես էլ բուժօգնություն իրականացնողի գործառույթները:

Վերջնական փորձագիտական գնահատում⁹

1. Ներածություն

Սույն հաշվետվության նպատակն է ՀՀ առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրության փոփոխությունների և լրացումների վերլուծությունը և դրա հիման վրա ՀՀ Կառավարության կողմից հաստատված ԱՀՌԾ-ի ռազմավարության իրականացման ընթացքի գնահատումը՝ ԱՀՌԾ-ում հռչակված քաղաքականության սկզբունքների տեսանկյունից:

Նախորդ հաշվետվությունը ներկայացնելուց հետո անցած ժամանակահատվածում՝ 2003թ. հոկտեմբերից մինչև 2004թ. հուլիս ամիսը ներառյալ, ՀՀ Կառավարությունը ընդունել է առողջապահության ոլորտին առնչվող մի շարք որոշումներ (Ազգային ժողովի կողմից նույն ժամանակահատվածում առողջապահությանն առնչվող նոր օրենքներ կամ գործող օրենքներում փոփոխություններ չեն ընդունվել): Օրենսդրական-նորմատիվային դաշտի բաղկացուցիչ մաս են կազմում նաև ՀՀ առողջապահության նախարարության հրամանները, որոնք ընդունվել են ի կատարումն Կառավարության որոշումների: Սույն հաշվետվության մեջ հիմնական ուշադրությունը դարձվել է այն որոշումների վրա, որոնք այս կամ այն չափով առնչվում են ԱՀՌԾ-ով Կառավարության ստանձնած պարտավորությունների իրականացման ընթացքին, ինչպես նաև այն որոշումներին, որոնք ուղղակիորեն չբխելով ԱՀՌԾ-ից, այնուհանդերձ ունեն համակարգային նշանակություն և կարող են էական ազդեցություն ունենալ բնակչության առողջության վիճակի բարելավման կամ առողջապահության համակարգի գործունեության վրա: Օրենսդրական փոփոխությունների վերլուծության ընթացքում անդրադարձ չի կատարվել այն նորմատիվային փաստաթղթերին (Կառավարության որոշումներ, հրամաններ), որոնք վերաբերվել են առանձին (կոնկրետ) բուժօգնականների վերակազմակերպմանը, մասնավորեցմանը և այլն:

Հատուկ ուշադրություն է դարձվել Կառավարության երկու որոշումների վրա. 2004թ. հունվարի 22-ի թիվ 100-Ն որոշումը «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկը հաստատելու մասին» և 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշումը «Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին»: Նման մոտեցումը պայմանավորված է նրանով, որ դրանցից առաջինը ուղղակիորեն բխում է ԱՀՌԾ-ից և կարևորվում է որպես առաջիկա տարիներին այդ ուղղությամբ Կառավարության անելիքների ամփոփ ուղեցույց, իսկ երկրորդը հանդիսանում է 2004թ. ընթացքում բնակչության առողջության պահպանման և բուժօգնության կազմակերպման գործում Կառավարության ստանձնած պարտավորությունները սահմանող հիմնական փաստաթուղթը:

2. Առողջապահության ոլորտը կարգավորող օրենսդրական փոփոխությունների վերլուծությունը ԱՀՌԾ-ով սահմանված առողջապահության ոլորտի ծրագրային գերակայությունների տեսանկյունից

⁹ - Առողջապահության ոլորտի փորձագիտական գնահատման երկրորդ և երրորդ փուլերը ներկայացված են միասնաբար:

2.1 ԱՀՌԾ-ի կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկը

Սույն հաշվետվության նպատակների տեսանկյունից առաջին հերթին անհրաժեշտ է առանձնացնել ՀՀ Կառավարության 2004թ. հունվարի 22-ի թիվ 100-Ն որոշումը, որով հաստատվել է աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագրի կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկը: Նշված որոշմամբ նաև նախատեսվում է, որ ՀՀ նախարարները և ՀՀ Կառավարությանն առընթեր մարմինների ղեկավարները յուրաքանչյուր եռամսյակ պետք է ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն ներկայացնեն նշված ցանկում ընդգրկված միջոցառումների կատարման ընթացքի մասին տեղեկանք, ինչպես նաև տեղեկություններ համագործակցելու պատրաստակամություն հայտնած շահագրգիռ կողմերի (ոչ կառավարական հատված) մասին: Մասնակցային գործընթացի կազմակերպման տեսանկյունից նաև հատկանշական է, որ Կառավարության նույն որոշմամբ առաջարկվում է «ԱՀՌԾ-ի իրականացման գործում շահագրգիռ քաղաքացիական հասարակության ներկայացուցիչներին համապատասխան միջոցառման կատարման համար պատասխանատու պետական կառավարման մարմին ներկայացնել առաջարկություններ այդ միջոցառման իրականացման գործընթացում իրենց հնարավոր մասնակցության վերաբերյալ»¹⁰:

Նշված որոշմամբ հաստատված միջոցառումների ցանկից (որը բավականին ծավալուն է՝ 55 էջ) առանձնացնենք առողջապահության ոլորտին վերաբերվող հատվածը: Փաստաթուղթը ընդհանուր առմամբ ունի հետևյալ կառուցվածքը. յուրաքանչյուր ոլորտի համար սահմանված է գերակայությունը, այնուհետև՝ դրան հասնելուն ուղղված քաղաքականության ուղղությունները, յուրաքանչյուր քաղաքականության ուղղության իրականացման համար նախատեսված են համապատասխան միջոցառումներ, որոնցից յուրաքանչյուրի համար, իր հերթին, նախատեսված է ակնկալվող արդյունքը, կատարողը (հանձնիս պետական կառավարման համապատասխան մարմին) և կատարման ժամկետը:

Առողջապահության ոլորտի համար սահմանված է հետևյալ գերակայությունը. «առողջապահության որակի և մատչելիության ապահովում» (կարծում ենք, տվյալ դեպքում ավելի ճիշտ կլիներ օգտագործել «բուժօգնության որակ և մատչելիություն» բառակապակցությունը, քանզի «առողջապահություն» տերմինը կիրառվում է որպես կանոն բնակչության առողջության պահպանման կազմակերպա-իրավական համակարգի սահմանման համար): Նշված գերակայության շրջանակներում սահմանված են հետևյալ քաղաքականության ուղղությունները.

1. առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացում՝ շեշտադրելով առողջության առաջնային պահպանման և հանրային առողջապահական համակարգերի գերակայությունը,
2. առողջապահական համակարգի ֆինանսավորման մեխանիզմների շարունակական բարելավում,
3. ընտանեկան բժշկության զարգացում,
4. հանրապետության գյուղական բնակչության բուժօգնության բարելավում,
5. պետական ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում հիվանդանոցային բուժօգնության ոլորտում,
6. բուժօգնության որակի բարելավում և վերահսկում,
7. մոր և մանկան առողջության պահպանման գերակայության ապահովում,
8. մայրական և պերինատալ մահացության կրճատում,

¹⁰ ՀՀ ՊՏ, N 14 (313) 10 մարտի 2004թ.

9. աղքատ և սոցիալապես անապահով խմբերի կանանց և տղամարդկանց վերարտադրողական առողջության բարելավում,
10. պալարախտի, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի և մալարիայի դեմ արդյունավետ պայքարի ապահովում,
11. տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ապահովում,
12. երեխաների աճի և զարգացման ռազմավարության գերակայություն,
13. երեխաների բուժօգնության կազմակերպման որակի և մատչելիության բարելավում, երեխաների հիվանդացության և մահացության կրճատում:

Վերոհիշյալ քաղաքականության ուղղությունների իրականացման նպատակով Կառավարության որոշմամբ հաստատված են 45 միջոցառումներ: Այդ միջոցառումների կատարման ժամկետ է սահմանված 2004-2006թթ. ժամանակահատվածը (այդ թվում կան միջոցառումներ, որոնք նախատեսվում են ավարտել արդեն 2005թ-ին, իսկ առանձին միջոցառումներ պետք է ունենան շարունակական բնույթ): Բոլոր միջոցառումների դեպքում որպես պատասխանատու կատարող նշված է ՀՀ առողջապահության նախարարությունը, իսկ առանձին դեպքերում վերջինիս հետ միասին որպես կատարող նշված են նաև ՀՀ մարզպետարանները, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ՀՀ ֆինանսների և էկոնոմիկայի նախարարությունը: Այդ միջոցառումները ընդգրկում են նաև այն ուղղությունները, որոնց գծով Կառավարության կողմից ընդունված որոշումները ներկայացված են սույն հաշվետվության մեջ:

2.2 Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն, մոր և մանկան առողջության պահպանում

2003թ. ընթացքում Կառավարությունը հաստատել է առաջնային բուժօգնության ոլորտին առնչվող երկու կարևոր ծրագրային փաստաթղթեր՝ *մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ռազմավարությունը (2003թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշում)*¹¹, և *ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2003-2008թթ. ռազմավարությունը (2003թ. նոյեմբերի 13-ի թիվ 1533-Ն որոշում)*¹²: Նշված երկրորդ որոշմամբ միաժամանակ հաստատվել է նաև *ՀՀ-ում առողջության առաջնային պահպանման կազմակերպման և ֆինանսավորման նոր մեթոդների մշակման 2003-2004թթ. փորձարարական ծրագիրը*:

Համաձայն ԱՀՌԾ-ի՝ «բնակչության աղքատության հաղթահարման համատեքստում որպես գերակա ուղղություն է դիտվում առողջապահական ծառայությունների մատչելիության բարձրացումը՝ հիմնական ուշադրությունը կենտրոնացնելով բուժօգնության առաջնային օղակի վրա»¹³: Այս տեսանկյունից հատկապես անհրաժեշտ է կարևորել «ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2003-2008թթ. ռազմավարությունը», որտեղ սահմանվում են ՀՀ Կառավարության քաղաքականության մոտեցումները ԱԱՊ ոլորտում, ԱԱՊ նպատակը, հիմնական սկզբունքները, բարեփոխումների հիմնական ուղղությունները, ինչպես նաև դրանց իրականացման փուլերը և միջոցառումները: Ռազմավարական սույն փաստաթուղթը պարունակում է նաև առաջարկություններ ԱԱՊ բնագավառի նորմատիվների սահմանման, կադրային ներուժի վերապատրաստման, ԱԱՊ համակարգի

11 ՀՀՊՏ 2003, N 45 (280), 3 սեպտեմբերի 2003թ.

12 ՀՀՊՏ 2003, N 61 (296), 17 դեկտեմբերի 2003թ.

13 ՀՀ Կառավարության «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», 2003թ.

կազմակերպա-իրավական ձևերի, ընտանեկան բժշկության հետազոտությունների, ԱԱՊ ֆինանսավորման ուղղությունների, բնակչության ազատ հավաքագրման սկզբունքի և մի շարք այլ կարևոր հարցերի վերաբերյալ, որոնք սերտորեն առնչվում են ԱԱՊ համակարգի բարեփոխումների հետ: Ուսումնասիրության մեջ պարունակվող մի շարք դրույթներ ուղղակիորեն առնչվում են ԱՀՌԾ-ի այն դրույթի հետ, որ «պետք է շարունակվի և ընդլայնվի ընտանեկան բժշկության համակարգի ներդրումը հանրապետության ողջ տարածքում: ԸԲԽ-ները և ԱԲԽ-ները աստիճանաբար պետք է ստանան ինքնուրույն կարգավիճակ՝ հիմնված ըստ սպասարկվող (գրանցված) բնակչության թվի ֆինանսավորման, ռեսուրսների անկախ տնօրինման և բուժօգնության կազմակերպման գործում ինքնուրույն որոշումներ ընդունելու սկզբունքների վրա»: Այս առումով կարևորվում է նաև Կառավարության նույն որոշմամբ հաստատված «Առողջության առաջնային պահպանման կազմակերպման և ֆինանսավորման նոր մեթոդների մշակման 2003-2004թթ. փորձարարական ծրագիրը», որը ուղղված է ընտանեկան բժշկության սկզբունքների վրա հիմնված առողջության առաջնային պահպանման մոդելների մշակմանն ու փորձարկմանը, ընտանեկան բժշկության պրակտիկայի կազմակերպչական-կառավարման հիմքերի ստեղծմանն ու դրանց հետազոտության ամրապնդմանը:

Ընտանեկան բժշկության ներդրման գործում կարևորվում է ՀՀ առողջապահության նախարարի 2003թ. հուլիսի 21-ի թիվ 613 հրամանը՝ «Ընտանեկան բժշկության միօրինակացված կրթական ծրագիրը հաստատելու մասին», որով զգալիորեն ուժեղացվում են ՀՀ-ում ընտանեկան բժիշկների պատրաստման մեթոդաբանական հիմքերը: Նշված հրամանով նաև հանձնարարվում է Երևանի պետական բժշկական համալսարանին և Առողջապահության ազգային ինստիտուտին՝ ձեռնարկել անհրաժեշտ քայլեր Ընտանեկան բժշկության միօրինակացված կրթական ծրագիրը գործողության մեջ դնելու համար:

Առաջնային բուժօգնության որակի բարելավման տեսանկյունից պետք է առանձնացնել նաև ՀՀ Կառավարության 2004թ. փետրվարի 19-ի թիվ 211-Ն որոշումը՝ «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների ընտանեկան բժիշկների կողմից հիվանդների բուժման ուղեգրման կարգը և սպասարկման ձևերը հաստատելու մասին», և 2004թ. ապրիլի 8-ի N 539-Ն որոշումը՝ «Ընտանեկան բժշկի գործունեության կազմակերպման դրույթները և ընտանեկան բժշկի գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնելու ձևը հաստատելու մասին»: Այս որոշումներով հաստատվում են ընտանեկան բժշկի գործառույթները, սահմանվում են այն բուժօգնության ձևերն ու տեսակները, որոնք պետք է կարողանա ապահովել ընտանեկան բժիշկը: Կառավարությունը սահմանել է նաև ընտանեկան բժիշկների կողմից սոցիալապես անապահով և հատուկ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժման և հետազոտման, ինչպես նաև մասնագիտական և լաբորատոր ախտորոշիչ հետազոտությունների ուղեգրման կարգերը և համապատասխան ուղեգրերի ձևերը: Տեղեկատվության ներկայացման հաստատված նոր ձևերը նպատակ ունեն ապահովել անհրաժեշտ տեղեկատվության հավաքագրումն ու վերլուծությունը՝ ընտանեկան բժիշկների աշխատանքի որակն ու արդյունքները վերահսկելու նպատակով:

2004թ. հուլիսի 15-ին ՀՀ Կառավարության կողմից հավանության է արժանացել «Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման փորձարարական կարգով փոխհատուցման մասին» որոշումը (սույն հաշվետվության կազմման պահին այն դեռևս վավերացված չէր ՀՀ Նախագահի կողմից, այդ իսկ պատճառով չենք կարող նշել որոշման համարը): Այս որոշմամբ ստեղծվում են ֆինանսա-կազմակերպչական խթաններ ընտանեկան բժիշկների և առաջնային բուժօգնության բնագավառում խմբային պրակտիկայով զբաղվող այլ մասնագետների համար՝ բնակչության ազատ հավաքագրմամբ զբաղվելու և մատուցվող առաջնային բուժօգնության ծառայությունների որակն ու մատչելիությունը բարելավելու նպատակով: Նշված որոշմամբ Կառավարությունը նախատեսում է մինչև 40 տոկոս հավելյալ ֆինանսավորում հատկացնել առաջնային օղակի այն բժիշկներին, ովքեր աշխատում են բնակչության ազատ հավաքագրման սկզբունքով, ընդ որում, հավելյալ ֆինանսավորման չափը կախման մեջ է դրվում հավաքագրված բնակչության քանակից (մինչև հաստատված նվազագույն

թվաքանակը հավաքագրելու դեպքում՝ 10-ից 25 տոկոս, նվազագույնից մինչև օպտիմալ թվաքանակը՝ 15-ից 35 տոկոս, օպտիմալ թվաքանակը և դրանից ավել հավաքագրելու դեպքում՝ 40 տոկոս հավելյալ ֆինանսավորում): Որոշմամբ նաև ընդլայնվում է բնակչության ազատ հավաքագրում իրականացնող փորձարարական ամբուլատոր-պոլիկլինիկական բուժօգնության կենտրոնի ցանկը: Այս որոշումը պետք է դիտարկել որպես ԱՀՌԾ-ով նախատեսված ԱԱՊ ոլորտի բարեփոխումների իրականացմանն ուղղված կարևոր քայլերից մեկը:

Ինչպես նշվեց, ԱՀՌԾ-ի նպատակների տեսանկյունից կարևորվում է նաև «Մոր և մանկան առողջության պահպանման 2003-2015թթ. ռազմավարությունը»: Ըստ ԱՀՌԾ-ի՝ «կանանց և երեխաների առողջության պահպանման, այդ թվում՝ վերարտադրողական առողջության խնդիրներին համարժեք ուշադրության ցուցաբերումը սկզբունքային նշանակություն ունի առողջ սերունդ ունենալու, հետևաբար՝ բնակչության առողջական վիճակի բարելավման և աղքատության հաղթահարման տեսանկյունից: Այդ նպատակով անհրաժեշտ է վերահաստատել կանանց և երեխաների առողջության հարցերի գերակայությունը ազգային մակարդակով (...):»: Այս խնդիրների տեսանկյունից Կառավարության կողմից հաստատված ռազմավարությունը սահմանում է մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված նպատակները, այդ նպատակներին հասնելու ռազմավարությունները և ուղիները, ինչպես նաև մոր և մանկան առողջության պահպանմանն ուղղված նպատակային ծրագրերը:

Ընդհանուր առմամբ, վերլուծելով վերոհիշյալ ռազմավարական փաստաթղթերը ԱՀՌԾ-ում հռչակված սկզբունքների տեսանկյունից, պետք է նշել, որ դրանք համարժեքորեն արտացոլում են ԱՀՌԾ-ի նպատակները, բխում են այդ փաստաթղթից և ուղղված են ԱՀՌԾ-ով նախատեսված խնդիրների իրականացմանը: Քանի որ երկու փաստաթղթերն էլ ունեն միջնաժամկետ և երկարաժամկետ փուլեր, այդ առումով կարևորվում է դրանց հետագա ներդրման և դրանցով նախատեսված միջոցառումների իրականացման շարունակական մոնիտորինգը:

2.3. Տարափոխիկ հիվանդությունների և ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելում

Ինչպես նշված է ԱՀՌԾ-ում՝ «աղքատությունը սերտորեն առնչվում է նաև այնպիսի տարափոխիկ հիվանդությունների հետ, ինչպիսիք են տուբերկուլյոզը (պալարախտ), սեռավարակները և ՉԻԱՀ-ը»: ՀՀ Կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1680-Ն որոշմամբ հաստատվել են *տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագիրը, ազգային ծրագրի իրականացման ժամկանացույցը, ինչպես նաև առողջապահական ազգային ծրագրերը համակարգող հանրապետական միջգերատեսչական խորհրդի կազմը*:

Տուբերկուլյոզի դեմ պայքարի ազգային ծրագրով նախատեսվում է ստեղծել տուբերկուլյոզի դեմ պայքարի միջոցառումների իրականացման աշխատանքների ղեկավարման միասնական համակարգ, զարգացնել հակատուբերկուլյոզային ծառայության կանխարգելման ոլորտի մասնագիտացված ծառայությունները, ուսումնական հաստատություններում տուբերկուլյոզի կանխարգելման նպատակով իրականացնել համապատասխան կրթական ծրագրեր:

Առողջապահական ազգային ծրագրերը համակարգող հանրապետական միջգերատեսչական խորհուրդը փոխարինել է նախկինում գործող ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման հանրապետական միջգերատեսչական խորհրդին և այսուհետ պետք է զբաղվի ինչպես ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման, այնպես էլ տուբերկուլյոզի դեմ պայքարի հարցերով, ընդ որում՝ որոշմամբ նախատեսվել է, որ առողջապահական ազգային ծրագրերը համակարգող հանրապետական միջգերատեսչական խորհուրդը կարող է ստեղծել ենթահանձնախմբեր՝ ըստ առողջապահական ոլորտային ծրագրերի: Սոցիալական կարևորագույն նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի հարցում Կառավարության որդեգրած մնան մոտեցումը կարող է գնահատվել նաև որպես ԱՀՌԾ-ով նախատեսված «առողջապահության համակարգի կառավարման գործում պետության

կարգավորիչ և վերահսկիչ դերի ուժեղացմանն» ուղղված քայլ (առավել մանրամասն՝ տես ստորև):

2.4 Առողջապահության համակարգի արդյունավետության և վերահսկելիության բարձրացումը

ԱՀՌԾ-ով նախատեսված ուղղություններից է նաև «առողջապահության համակարգի արդյունավետության և վերահսկելիության բարձրացումը», որի շրջանակներում նախատեսված է հիմնական շեշտը դնել համակարգի օպտիմալացման ու կառավարման բարեփոխումների, ինչպես նաև առողջապահության համակարգի կառավարման գործում պետության կարգավորիչ և վերահսկիչ դերի ուժեղացման վրա:

Հայաստանի առողջապահության համակարգի օպտիմալացման աշխատանքները հիմնականում իրականացվել են 2001-2002թթ. ընթացքում (տես սույն ծրագրի շրջանակներում կազմված առաջին միջանկյալ հաշվետվությունը), որոնք ընդգրկել էին հիմնականում Հայաստանի մարզերի առողջապահական հաստատությունները, իսկ Երևան քաղաքի առողջապահական ցանցը օպտիմալացման գրեթե չէր ենթարկվել: *2003թ. հոկտեմբերի 30-ի ՀՀ Կառավարության թիվ 1413-Ն որոշմամբ Երևան քաղաքի առողջապահական հաստատությունների օպտիմալացման ծրագրի շրջանակներում իրականացվեց մի շարք կազմակերպությունների վերակազմակերպում՝ միաձուլման ձևով¹⁴*: 35 բուժհաստատությունների (այդ թվում՝ Երևանի 11 պոլիկլինիկաների) միաձուլման արդյունքում ստեղծվեցին 9 բժշկական կենտրոններ, ևս մեկ բուժօգնական միացվեց Երևանի պետական բժշկական համալսարանին: Նշված որոշումը միանշանակ չընկալվեց առողջապահության համակարգի և բժշկական հասարակության, այդ թվում՝ միջազգային և տեղական փորձագետների կողմից, քանի որ օպտիմալացմանն ուղղված քայլերի հետ միասին այն պարունակում էր իր մեջ նաև որոշակի հակասություններ:

Նորաստեղծ ինը բուժօգնականներից չորսը ձևավորվեցին միևնույն կամ համանման պրոֆիլների բուժօգնականների միաձուլման արդյունքում, այսինքն՝ դրանց ստեղծման հիմքում դրվեց մասնագիտական գործունեության համանմանության սկզբունքը (անհետաձգելի բուժօգնություն, ուռուցքաբանություն, տարափոխիկ հիվանդություններ, հոգեբուժություն): Նշված բուժօգնականների պարագայում լուրջ տարածայնություններ սկզբնական շրջանում ի հայտ չեկան, չհաշված այն մտահոգությունը, որ միավորված բուժօգնականներից շատերը տարածքային առումով հաճախ գտնվում էին միմյանցից զգալիորեն հեռու:

Մնացած հինգ նորաստեղծ բուժօգնականների ստեղծման հիմքում, ընդհակառակը, ի սկզբանե դրվեց տարածքային տեղաբաշխման սկզբունքը, այսինքն՝ միաձուլվեցին Երևան քաղաքի տարբեր մասերում տարածքային առումով միմյանց մոտ գտնվող բուժհաստատությունները: Այս բոլոր միաձուլումների արդյունքում առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնականները միացվեցին մասնագիտացված հիվանդանոցային (երկրորդային և երրորդային մակարդակների) բուժօգնականների հետ: Ստեղծված իրավիճակը լուրջ մտահոգություններ է առաջացնում՝ առաջին հերթին առաջնային բուժօգնության հետագա ճակատագրի առումով: Գաղտնիք չէ, որ առողջապահության համակարգում ավանդաբար ավելի մեծ ուշադրություն է դարձվել հիվանդանոցային բուժօգնությանը, ինչն արտահայտվել է ֆինանսական, մարդկային և այլ ռեսուրսների անհամաչափ բաշխման մեջ՝ ի օգուտ վերջինիս: Այս իրավիճակը ընդհանուր

¹⁴ ՀՀ ՊՏ 2003, N 59 (294), 3 դեկտեմբերի 2003թ., ուղղված տարբերակը՝ ՀՀ ՊՏ 2003, N (), 2003թ.

առմամբ պահպանվում է նաև այսօր, ինչից ելնելով էլ ԱՀՌԾ-ով նախատեսված է առողջապահական քաղաքականության մեջ այսուհետ շեշտը դնել ԱԱՊ օղակի զարգացման վրա: Այնուհանդերձ, օպտիմալացման նման ձևով իրականացումը, այսինքն՝ ԱԱՊ բուժհիմնարկները հիվանդանոցների հետ միասին նույն կառույցներում ընդգրկելը, կարող է բերել հակառակ արդյունքին, այսինքն՝ նսեմացնել ԱԱՊ օղակի դերը բնակչության առողջության պահպանման, հիվանդությունների կանխարգելման և վաղ հայտնաբերման գործում:

Այս մտավախության հիմքում ընկած է այն իրողությունը, որ բուժօգնության առաջնային և երկրորդային մակարդակները (այսինքն՝ ամբուլատոր-պոլիկլինիկական և հիվանդանոցային բուժհաստատությունները) բնակչության առողջության պահպանման ընդհանուր գործում ի սկզբանե ունեն տարբեր մեկնակետեր. եթե առաջնային օղակը պետք է զբաղվի նախ և առաջ հիվանդությունների կանխարգելմամբ, վաղ հայտնաբերմամբ և ամբուլատոր բուժմամբ (կամ, այլ կերպ ասած, «մարդկանց առողջ պահելով»), ապա հիվանդանոցային օղակը շահագրգռված է ավելի շատ հիվանդներ բուժելու (նույնն է թե՛ «ավելի շատ հիվանդներ ունենալու») մեջ, և այս հակասությունը արտացոլված է նաև այդ օղակների ֆինանսավորման մեխանիզմներում: Ինչպես հայտնի է, առաջնային օղակի բուժհաստատությունները ֆինանսավորվում են ըստ սպասարկվող բնակչության թվաքանակի, իսկ հիվանդանոցները՝ ըստ բուժված հիվանդների (դեպքերի) թվի: Հաշվի առնելով, որ նորաստեղծ (միավորված) բուժհիմնարկների կազմում իրենց կադրային, ֆինանսական և տեխնոլոգիական պոտենցիալով գերակշիռ դեր են խաղալու հիվանդանոցային բուժհիմնարկները (պատահական չէ, որ միաձուլված բուժհիմնարկների ղեկավարությունը առանց բացառության ստանձնել են ոչ թե դրանց կազմում ընդգրկված պոլիկլինիկաների, այլ հիվանդանոցների նախկին ղեկավարները), առաջանում է հիմնավոր մտավախություն այն կապակցությամբ, որ բնակչության առողջության առաջնային պահպանման գործառույթները կարող են ստորադասվել հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման շահերին:

Երևան քաղաքի բուժհիմնարկների նմանօրինակ օպտիմալացման նախապատրաստական գործընթացում տեղ են գտել էական բացթողումներ. նախատեսվող քայլերը չեն քննարկվել բժշկական մասնագիտական լայն հասարակության ներգրավմամբ, մի շարք դեպքերում հաշվի չեն առնվել միավորվող բուժհիմնարկների ֆունկցիոնալ և նպատակային համատեղելիության հարցերը: Ասվածի մասին է վկայում նաև այն հանգամանքը, որ Կառավարության լրացուցիչ որոշումներով արդեն իսկ վերոհիշյալ գործընթացը ենթարկվել է որոշակի վերանայումների. երկու բուժհիմնարկներ դուրս են բերվել այդ ցանկից և փաստորեն շարունակել են պահպանել իրենց նախկին՝ առանձին բուժհիմնարկի կարգավիճակը (դրանք են՝ «Նորք» ինֆեկցիոն կլինիկական հիվանդանոցը, որը միացվել էր ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի կանխարգելման կենտրոնին և «Մաշկաբանության և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների» գիտական կենտրոնին, և «Լ.Ա. Հովհաննիսյանի անվան սրտաբանության գիտահետազոտական ինստիտուտը», որը ընդգրկվել էր «Բանաքեռ-Չեյթուն» բժշկական կենտրոնի կազմում՝ նախկին 8-րդ բուժմիավորման և մի շարք պոլիկլինիկաների հետ միասին):

2.5 Պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնությունն ու սպասարկումը 2004թ.-ին

Ինչպես հայտնի է, «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին» ՀՀ Օրենքի պահանջների համաձայն Ազգային ժողովը հաստատում է ամենամյա առողջապահական պետական նպատակային ծրագրերը: Ելնելով հաստատված ծրագրերից՝ ՀՀ Կառավարությունը սահմանում է պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման ծավալները՝ ըստ բուժօգնության

տեսակների, դրանց շրջանակներում անվճար բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, ինչպես նաև անվճար բուժօգնության կազմակերպման և ֆինանսավորման կարգը: Ստորև ներկայացնում ենք Կառավարության 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշման հիմնական դրույթների վերլուծությունը նախորդ տարվա (2003թ. փետրվարի 6-ի թիվ 246-Ն) նույնատիպ որոշման համեմատությամբ:

Ընդհանուր առմամբ, Կառավարության նշված որոշումը իր կառուցվածքով, բովանդակությամբ և տրամաբանությամբ հիմնականում կրկնում է նախորդ տարիների համանման որոշումները: 2004թ-ին որոշակի փոփոխություններ են կատարվել անվճար բուժօգնություն ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում (այն ընդլայնվել է): Միաժամանակ այս որոշմամբ հաստատվել է Երևան քաղաքի հիվանդանոցային բուժօգնություն համավճարային սկզբունքի կիրառման կարգը, որը 2003թ-ին փորձարկվել էր երեք ամիսների ընթացքում (սկսած հոկտեմբերի 1-ից):

2004թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեցող բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկում կատարվել են հետևյալ փոփոխությունները.

1. «Միայնակ մայրերի երեխաներ (մինչև 18 տարեկան)» կատեգորիան փոխարինվել է «Միածնող երեխաներ (մինչև 18 տարեկան)» կատեգորիայով,
2. «Ծնողազուրկ երեխաներ (միակողմանի, երկկողմանի՝ մինչև 18 տարեկան)» կատեգորիան փոխարինվել է «Առանց ծնողական խնամքի մնացած երեխաներ (մինչև 18 տարեկան) և առանց ծնողական խնամքի մնացած երեխաների թվին պատկանող անձինք (18-23 տարեկան)» կատեգորիայով:

Նշված ցանկում ավելացվել են հետևյալ երկու կատեգորիաները՝

3. «Զինձառայողներ և նրանց ընտանիքների անդամներ»,
4. «Մինչև 18 տարեկան՝ դիսպանսեր հսկողության տակ գտնվող երեխաներ»:

Վերոհիշյալ բոլոր փոփոխությունները ընդլայնում են անվճար բուժօգնություն ստանալու իրավունքից օգտվող անձանց շրջանակը, հատկապես վերջին երկու կետերում նշված լրացումները, որոնք նման քաղաքացիների ընդհանուր թվաքանակի զգալի ավելացում են ենթադրում: Այս ցանկերի նման ընդլայնումը, որը կատարվում է առողջապահության բյուջետային ֆինանսավորման 19 տոկոս ավելացման պայմաններում, առաջին հայացքից կարող է թվալ ֆինանսապես հիմնավորված քայլ, սակայն, եթե հաշվի առնենք այն իրողությունը, որ պետության կողմից առողջապահության ֆինանսավորմանը հատկացվող միջոցները ընդհանուր առմամբ շարունակում են մնալ անբավարար՝ համեմատած առողջապահության համակարգի իրական կարիքների հետ, ապա կարող ենք նշել, որ ֆինանսավորման որոշակի ավելացման պայմաններում անվճար բուժօգնությունից օգտվելու իրավունք ունեցող քաղաքացիների թվաքանակի միաժամանակյա ընդլայնումը կարող է խոչընդոտել ցանկալի արդյունքի ձեռքբերմանը, այն է՝ պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնության զները աստիճանաբար մոտեցնել դրանց իրական ինքնարժեքին, դրանով իսկ անհրաժեշտ նախապայմաններ ստեղծելով այդ ծառայությունների իրական մատչելիության ապահովման համար:

Վերոհիշյալ հիմնախնդիրների համատեքստում պետք է դիտարկել նաև Երևան քաղաքի հիվանդանոցային բուժօգնություն համավճարի կիրառման մասին որոշումը, որը տարածվում է պետության կողմից երաշխավորված անվճար բուժօգնություն և սպասարկում ստացող անձանց վրա՝ բացառությամբ վերոհիշյալ սոցիալական և այլ խմբերում ընդգրկված անձանց, ինչպես նաև, ի լրացումն դրա, այն քաղաքացիների, որոնք, համաձայն Կառավարության որոշման, նույնպես իրավունք ունեն ստանալ անվճար բուժօգնություն՝

հաստատված հատուկ կարգի համաձայն¹⁵: Ինչպես նշվեց, այս կարգը փորձարկվել էր դեռևս 2003թ-ի 4-րդ եռամսյակի ընթացքում՝ համաձայն ՀՀ Կառավարության 2003թ. օգոստոսի 14-ի թիվ 1038-Ն որոշման¹⁶:

Համավճարի կիրառման մասին որոշման մեջ ասված է, որ այն նպատակ ունի բժշկական օգնության և սպասարկման գները մոտեցնելու իրական ծախսերին, լրացնելու պետական բյուջեով նախատեսված և իրականում անհրաժեշտ ծախսերի տարբերությունը (ճեղքվածքը), թեթևացնելու պետական բյուջեի բեռը: Այս առումով կարևոր է նշել, որ սրանով իսկ պետությունը պաշտոնապես ընդունում է այն իրողությունը, որ պետպատվերի սահմաններում մատուցվող բուժօգնության գները չեն համապատասխանում դրանց իրական ծախսերին, և որ առկա է համապատասխան ճեղքվածք, որն անհրաժեշտ է լրացնել այլ աղբյուրների հաշվին: Այս փաստը պետք է գնահատել որպես ինքնին դրական երևույթ, որը կարող է էական դեր խաղալ պետության կողմից առողջապահության ոլորտում ստանձնած իր պարտավորությունների իրատեսական գնահատման և դրա հիման վրա համապատասխան քաղաքականության մշակման գործում: Միաժամանակ պետք է նշել, որ համավճարների կիրառման մասին հիմնավորումների մեջ ոչինչ չի ասվում բնակչության համար բուժօգնության որակն ու մատչելիությունը բարձրացնելու նպատակների մասին, մինչդեռ հենց այս խնդիրներն են, որ համաձայն ԱՀՌԾ-ի պետք է հանդիսանան առողջապահության բնագավառում պետական քաղաքականության ելակետերը: Նման մոտեցման դեպքում «պետական բյուջեի բեռի թեթևացումը» և նման կարգի այլ խնդիրները, իրենց կարևորությամբ հանդերձ, պետք է մղվեն երկրորդ պլան, քանի որ համավճարների կիրառումը առաջին հերթին պետք է դիտարկվեր որպես գործիք՝ լրացուցիչ ֆինանսական միջոցներ հավաքագրելու և դրանով իսկ բուժօգնության որակն ու մատչելիությունը բարձրացնելու նպատակով:

Այսպիսով, համավճարների կիրառման մասին որոշման կիրառումը պետք է դիտարկել հենց այս տեսանկյունից, այսինքն՝ որքանով կարող են դրանք (համավճարները) նպաստել վերոհիշյալ խնդիրների լուծմանը: Այս առումով ցավոք պետք է նշենք, որ առայժմ համավճարների կիրառման փորձը ցանկալի արդյունքների չի բերել: Հիմնական խնդիրը կայանում է նրանում, որ համավճարների կիրառման հարցում Կառավարությանը չի հաջողվել մինչև վերջ լինել հետևողական և սկզբունքային, և հերթական անգամ տուրք է տրվել պոպուլիզմին: Նախ, ինչպես արդեն նշվեց, համավճարները ի սկզբանե չեն տարածվում բնակչության սոցիալապես անապահով և որոշ այլ խմբերում ընդգրկված անձանց հիվանդանոցային բուժօգնության դեպքերի վրա, մինչդեռ ակնհայտ է, որ այդ դեպքերը նույնպես պետության կողմից ֆինանսավորվում են նույն («ոչ իրատեսական») գներով, ինչ որ հիվանդանոցային բուժօգնության մնացած դեպքերը, որոնց վրա համավճարները տարածվում են: Այլ կերպ ասած, եթե խնդրին մոտենանք համավճարների կիրառման հիմքում դրված ելակետային սկզբունքների տեսանկյունից, համաձայն որոնց՝ համավճարները պետք է բուժօգնության գները մոտեցնեն դրանց իրական ծախսերին և ծածկեն առկա ճեղքվածքը, ապա ստացվում է, որ հենց առավել կարիքավոր (սոցիալապես անապահով խմբերին պատկանող) քաղաքացիների համար դա տեղի չի ունենում, քանի որ նրանք դուրս են բերված համավճարների համակարգից: Երկրորդը՝ համավճարների չափերը

¹⁵ Կառավարության նշված որոշմամբ հաստատված պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման կազմակերպման ու ֆինանսավորման կարգի համաձայն՝ բացի բնակչության սոցիալապես անապահով և առանձին (հատուկ) խմբերում ընդգրկված քաղաքացիներից պետպատվերի սահմաններում անվճար բուժօգնություն կարող են ստանալ («հատուկ ցուցումների դեպքում») նաև հիվանդանոցային բուժօգնության համար ՀՀ առողջապահության ու աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարների կողմից ուղեգրված քաղաքացիները, ինչպես նաև ՀՀ մարզպետների և Երևանի քաղաքապետի կողմից ուղեգրված անձինք ու հիվանդանոցներում ստեղծվող հանձնաժողովների որոշմամբ նման իրավունք ստացող քաղաքացիները՝ այդ հիվանդանոցների սահմանափակված բյուջեի պայմանագրային ծավալների որոշակի չափաբաժնի (2-3 տոկոս) սահմաններում:

¹⁶ ՀՀ ՊՏ, N 46 (281), 10 սեպտեմբերի 2003թ.

սահմանելիս¹⁷ դրանք ուղղակիորեն չեն կապվել բուժօգնության իրական ծախսերի և պետպատվերի գործող գների տարբերության չափի հետ: Համավճարները սահմանվել են որոշակի, հիմնականում՝ կլոր գումարների չափով (օրինակ՝ 10 000 դրամ), որոնք, փաստորեն նորից չեն ծածկում բուժօգնության իրական ծախսերի և պետության կողմից հատկացվող գումարների տարբերությունը: Այլ կերպ ասած՝ դրանք ուղղակի չեն ծառայում իրենց նպատակին, և որպես արդյունք, համավճարների կիրառումից հավաքագրվում են համեմատաբար ոչ մեծ, պետական բյուջեի հաշվին հատկացվող միջոցների համեմատությամբ ոչ էական գումարներ, որոնք սկզբունքային տարբերություն չեն ստեղծում հիվանդանոցային բուժօգնության համար՝ պետպատվերի սահմաններում ցուցաբերվող բուժօգնության որակը էապես բարձրացնելու և այն բնակչության կարիքավոր խավերի համար իրոք մատչելի դարձնելու տեսանկյունից: Որպես ասվածի հիմնավորում նշենք, որ ըստ ՀՀ առողջապահության նախարարության ՊԱԳ-ի տվյալների՝ 2003թ. 4-րդ եռամսյակի ընթացքում համավճարներից հավաքագրվել է ընդամենը 17.2 մլն. դրամ, իսկ 2004թ. առաջին հինգ ամիսներին՝ 29.8 մլն. դրամ գումար:

3. Առողջապահության ֆինանսավորման ոլորտում ԱՀՌԾ-ով նախատեսված քայլերի իրականացումը

ԱՀՌԾ-ում զգալի տեղ է հատկացված առողջապահության ոլորտում պետական ծախսերի աստիճանական ավելացմանը: Նախատեսվում է, որ առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը կհանդիսանա ոլորտում իրավիճակի բարելավման առաջնահերթ ուղղություններից մեկը: Ըստ ԱՀՌԾ-ի՝ «ծրագրային ամբողջ ժամանակահատվածի ընթացքում առողջապահության ոլորտի պետական ծախսերը ունենալու են աճի միտում (2004-2015թթ.՝ տարեկան միջինը՝ 14%): 2004-2006թթ. ժամանակահատվածում աճի տեմպերը լինելու են ավելի բարձր (տարեկան՝ միջինը 19%)՝ 2010-2015թթ. կայունանալով տարեկան միջինը 11%-ի շրջակայքում»:

Ստորև բերվող աղյուսակում առողջապահության պետական ֆինանսավորման՝ ԱՀՌԾ-ով նախատեսված ցուցանիշները համեմատված են 2003-2004թթ. փաստացի ցուցանիշների հետ.

Աղյուսակ 1. Պետական բյուջեի ծախսերի ծրագրային և փաստացի ցուցանիշները առողջապահության բնագավառում 2003-2004թթ

	2003թ.		2004թ.	
	Նախատեսված է ԱՀՌԾ-ով	Հաստատված է պետական բյուջեով	Նախատեսված է ԱՀՌԾ-ով	Հաստատված է պետական բյուջեով
Ընդամենը, մլրդ. դրամ	21.0	21.0	25.9	25.0
պետական բյուջեի ընդհանուր ծախսերի նկատմամբ, %	6.6	6.3	7.8	7.9
փոփոխությունը նախորդ տարվա նկատմամբ, %	31.2	30.4	23.5	19.0

Ինչպես երևում է բերված տվյալներից՝ ԱՀՌԾ-ով նախատեսված ցուցանիշները ընդհանուր առմամբ պահպանվել են, չնայած առկա որոշակի շեղումներին, որոնք վերաբերվում են հիմնականում 2004թ-ին: Այսպես, ԱՀՌԾ-ով պլանավորվածի նկատմամբ

¹⁷ Համաձայն Կառավարության որոշման՝ համավճարների չափերը սահմանում է ՀՀ առողջապահության նախարարը՝ համաձայնեցնելով ֆինանսների և էկոնոմիկայի նախարարի հետ:

առողջապահության ֆինանսավորումը 3.5 տոկոսով ավելի պակաս է նախատեսվել, չնայած բյուջեի ընդհանուր ծախսերում տեսակարար կշռի առումով ԱՀՌԾ-ով նախատեսված ցուցանիշը նույնիսկ գերազանցվել է (7.9 տոկոս՝ 7.8-ի փոխարեն): Նախորդ տարվա առողջապահական բյուջետային ծախսերի նկատմամբ նախատեսված աճի ցուցանիշը կազմել է 19 տոկոս՝ ԱՀՌԾ-ով նախատեսված 23.5-ի փոխարեն (միաժամանակ նշենք, որ այդ ցուցանիշը համապատասխանում է 2004-2006թթ. համար ԱՀՌԾ-ով նախատեսված միջին ցուցանիշին):

ԱՀՌԾ-ով նաև նախատեսված է, որ «ծրագրային ողջ ժամանակահատվածում առողջապահության ոլորտում պետական ծախսերի աճը գերազանցելու է ընդհանուր բյուջետային ծախսերի աճին՝ հանգեցնելով պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում առողջապահության բաժնի ավելացմանը»: Այս առումով հետաքրքիր է նշել, որ պետական բյուջեի ընդհանուր ծախսերը 2003թ. 334.2 մլրդ. դրամի փոխարեն 2004թ. նախատեսվել են 317 մլրդ. դրամ, կամ 17.2 մլրդ. դրամով (5.1 %-ով) պակաս: Միաժամանակ 2004թ. նախորդ տարվա համեմատ կրճատվել են նաև բյուջեի եկամուտները՝ 12.9 մլրդ. դրամով: Այս երևույթը ավելի լավ հասկանալու համար դիտարկենք բյուջեի եկամուտների կառուցվածքը 2003-2004թթ. ընթացքում (տես աղյուսակ 2-ը):

Աղյուսակ 2. Պետական բյուջեի եկամուտների կառուցվածքը 2003-2004թթ., (մլն. դրամ)

	2003	2004	Աճը (+), Նվազումը (-), %
ընդամենը եկամուտներ և պաշտոնական տրանսֆերտներ, այդ թվում.	286,978.8	274,122.5	- 4.5
հարկային եկամուտներ	207,597.3	242,555.9	+ 16.8
պետական տուրք	12,826.7	14,569.0	+ 13.6
ոչ հարկային եկամուտներ	5,168.3	5,347.4	+ 3.5
կապիտալի գործառնություններից եկամուտներ	435.4	723.4	+ 66.1
պաշտոնական տրանսֆերտներ	60, 952.1	10,926.8	- 5.6 անգամ
<i>Աղբյուր. ՀՀ ՊՏ, N 15(250), 19.03.2003թ. և N 17(316), 29.03.2004թ.</i>			

Ինչպես երևում է բերված տվյալներից՝ բյուջեի եկամտային մասը 2004թ.-ին ավելի պակաս է պլանավորվել «պաշտոնական տրանսֆերտների» կտրուկ կրճատման հաշվին, մինչդեռ բյուջեի եկամուտների մյուս բոլոր աղբյուրների գծով (ինչպես հարկային, այնպես էլ ոչ հարկային) աճ է նախատեսվել: Այս երևույթը բացատրվում է նրանով, որ 2003թ. տվյալները ներառում են «Լինսի» հիմնադրամից գոյացող մուտքերը, որոնք նախատեսված չեն 2004թ. բյուջեում՝ հիմնադրամի ծրագրերի ավարտման պատճառով: Այսպիսով, եթե համեմատվող ցուցանիշների համադրելիության ապահովման նպատակով 2003թ. պետական բյուջեից հանենք «Լինսի» հիմնադրամի միջոցները, ապա պատկերը այլ կլինի. եկամուտների գծով 2004թ.-ի պետական բյուջեն կգերազանցի նախորդ տարվա համապատասխան ցուցանիշը 14.1 %-ով, իսկ ծախսերի գծով՝ 6.3 %-ով¹⁸: Այսպիսով, կարող ենք արձանագրել, որ Կառավարությունը 2004թ.-ին կատարել է ԱՀՌԾ-ով ստանձնած իր պարտավորությունը՝ առողջապահության բյուջետային ծախսերը բյուջեի ընդհանուր ծախսերից ավելի առաջանցիկ տեմպերով ավելացնելու վերաբերյալ: ԱՀՌԾ-ով նախատեսված մեկ այլ ցուցանիշի իրականացումը՝ «պետական բյուջեի ծախսերի կառուցվածքում առողջապահության տեսակարար կշիռը 2006 թ. հասցնել 9%-ի», նման դինամիկայի պայմաններում թվում է բավականին իրատեսական:

¹⁸ Հայաստանի Հանրապետության պետական բյուջե. համառոտ ուղեցույց: ՀՀ Ֆինանսների և էկոնոմիկայի նախարարություն, Երևան, 2004թ.

Այժմ դիտարկենք պետական բյուջեից առողջապահությանը հատկացված միջոցների կառուցվածքն ըստ առողջապահական հիմնական ծրագրերի: ԱՀՌԾ-ում նշված է.

«Առողջապահության բնագավառի պետական ծախսերի ներդրության վերաբաշխումներն ուղղորդվելու են հետևյալ գերակայություններով.

1. հաշվի առնելով առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության մատչելիության ավելի բարձր մակարդակը և ազգաբնակչությանը տարածքային կտրվածքով հասանելիության ավելի մեծ աստիճանը՝ պետական բյուջեի կառուցվածքում ավելացվելու է առաջնային բուժօգնության բաժինը՝ ի հաշիվ հիվանդանոցային բուժօգնությանը տրամադրվող միջոցների տեսակարար կշռի կրճատման,

2. ինչպես հիվանդանոցային, այնպես էլ առաջնային բուժօգնության կառուցվածքում գերակա են համարվելու մոր և մանկան առողջության պահպանումը և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարը»:

Ստորև բերվող աղյուսակում ներկայացված են առողջապահության ոլորտին պետական բյուջեից հատկացված գումարներն ըստ հիմնական ծրագրերի 2003-2004թթ.

Աղյուսակ 3. Առողջապահության ոլորտի ֆինանսավորումը պետական բյուջեից՝ ըստ հիմնական ծրագրերի 2003-2004թթ.

Ծրագիրը	2003		2004		Բացարձակ աճը (%)
	Մլն. դրամ	Տեսակարար կշիռը (%)	Մլն. դրամ	Տեսակարար կշիռը (%)	
առողջապահության ոլորտի պետական կառավարում	233.2	1.1	502.5	2.0	+115.5
հիվանդանոցային բուժօգնություն	11,625.4	55.3	12,649.8	50.6	+8.8
առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն	7,021.3	33.4	8,588.9	34.3	+22.3
հիգիենիկ հակահամաճարակային ծառայություն	584.6	2.8	1,000.0	4.0	+71.1
առողջապահական ծառայություններ և ծրագրեր	1,549.5	7.4	2,269.9	9.1	+46.5
ԸՆԴԱՍԵՆԸ ԱՌՈՂՋԱՊԱՀՈՒԹՅՈՒՆ	21,014.0	100	25,011.1	100	+19.0

Աղբյուր. ՀՀ ՊՏ, N 15(250), 19.03.2003թ. և N 17(316), 29.03.2004թ.

Այսպիսով, ինչպես երևում է բերված տվյալներից, առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորմանը հատկացված գումարները աճել են 22.3 %-ով, իսկ ընդհանուր առողջապահական ծախսերում դրանց տեսակարար կշիռն աճել է 0.9 %-ով: Միաժամանակ, հիվանդանոցային բուժօգնության համապատասխան ցուցանիշը (տեսակարար կշիռը ընդհանուր առողջապահության բյուջեում) իրոք նվազել է 4.7 %-ով, իսկ հիվանդանոցային բուժօգնության համար հատկացված ֆինանսավորման բացարձակ աճը (8.8 %) եղել է նվազագույնը բոլոր առողջապահական ծրագրերի մեջ: Այս միտումները համապատասխանում են ԱՀՌԾ-ով նախատեսվածին: Դրա հետ միաժամանակ անհրաժեշտ է նշել հետևյալը. առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորման աճը իր տեմպերով զիջել է առողջապահական մնացած ծրագրերին (բացի հիվանդանոցային բուժօգնությունից, ինչպես արդեն նշվեց): Նույնը վերաբերվում է նաև առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորման տեսակարար կշռի աճին առողջապահական ընդհանուր ծախսերում (առողջապահության ոլորտի պետական կառավարման ծախսերը ավելի քան կրկնապատկվել են, մինևույն ժամանակ առողջապահական այլ ծառայությունների և ծրագրերի ֆինանսավորումը աճել է

շուրջ կիսով չափ, իսկ հիգիենիկ հակահամաճարակային ծառայությանը՝ ավելի քան 70 %-ով): Այս երևույթի պատճառները ավելի հստակ վերլուծելու համար դիտարկենք նաև բուն առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորմանը հատկացված միջոցների բաշխումն ըստ առանձին ենթաձևերի:

Աղյուսակ 4. Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորումն ըստ առանձին ենթաձևերի 2003-2004թթ. , (մլն. դրամ)

Ենթաձևեր	2003	2004	Աճը (+), Նվազումը (-), %
15 տարեկան և ավելի բարձր տարիքի անձանց առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր *	1,955.6	3,138.8	+60.5
մինչև 15 տարեկան երեխաների առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր*	1,391.0	2,284.5	+64.2
կենտրոնացված կարգով դեղորայքի ձեռքբերման գծով պետական պատվեր	3,020.0	1,500.0	-50.3
դիսպանսերային բժշկական օգնության գծով պետական պատվեր	371.6	557.4	+50.0
մանկաբարձագինեկոլոգիական բժշկական օգնության գծով պետական պատվեր	283.2	466.7	+64.8
* - 2004թ.-ին այս ծրագրերի տարիքային շերտ սահմանվել է 18 տարին			
Աղբյուր. ՀՀ ՊՏ, N 15(250), 19.03.2003թ. և N 17(316), 29.03.2004թ.			

Այսպիսով, եթե առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորման ընդհանուր պատկերից առանձնացնենք կենտրոնացված կարգով դեղորայքի գնումների ենթաձևերը, որի գծով տեղի է ունեցել ֆինանսավորման կրկնակի կրճատում¹⁹, ապա կտեսնենք, որ մյուս ենթաձևերով, որոնք և իրականում կազմում են առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության հիմնական (բովանդակային) մասը, ֆինանսավորման աճը կազմել է 50-ից 65 %: Այլ կերպ ասած՝ ավելի մանրակրկիտ վերլուծության ժամանակ տեսնում ենք, որ առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության համար պետական բյուջեից հատկացված ֆինանսավորումը 2004թ-ին ունեցել է առաջանցիկ աճի միտում՝ համեմատած առողջապահությանը հատկացված ընդհանուր ֆինանսավորման աճի տեմպերի հետ:

Փորձենք առանձին վերլուծել նաև մոր և մանկան առողջության պահպանման և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի գերակայության՝ ԱՀՌԾ-ով սահմանված դրույթի ֆինանսական հիմնավորումը: Այստեղ պետք է նկատի ունենալ, որ սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդություններից առողջապահության բյուջեում հիվանդանոցային բուժօգնության մասով առանձնացված են տուրերկույրոգի և սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների դեմ պայքարի ֆինանսավորումը (վերջինս ընդգրկում է նաև ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի դեմ պայքարը), իսկ առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության մասում դրանք ընդհանրապես առանձին տողով առանձնացված չեն: Փաստորեն, սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ

¹⁹ Անհրաժեշտ է նկատի ունենալ, որ կենտրոնացված կարգով դեղորայքի գնումների համար բյուջեի այս տողով հատկացվող գումարները տնօրինվում են ոչ միայն ՀՀ առողջապահության նախարարության, այլ նաև այլ՝ ուժային նախարարությունների և գերատեսչությունների կողմից:

պայքարը առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնության ֆինանսավորման մեջ տարալուծված է մինչև 18 տարեկան երեխաների, 18 տարեկանից բարձր անձանց, ինչպես նաև դիսպանսերային բուժօգնության ենթաժառանգներում՝ ի թիվս այլ հիվանդությունների: Ելնելով վերոհիշյալից, ստորև բերվող տվյալները սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի ֆինանսավորման պատկերի մասով պետք է համարել որոշ չափով պայմանական (տես աղյուսակ 5):

Աղյուսակ 5. Մոր և մանկան առողջության պահպանման, ինչպես նաև սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի ծրագրերի ֆինանսավորումը պետական բյուջեից 2003-2004թթ. (մլն. դրամ)

Ծրագիրը / ենթաժրագիրը	2003	2004	Աճը (%)
Հիվանդանոցային բուժօգնություն.	11,625.4	12,649.8	+8.8
այդ թվում.			
- տուբերկուլյոզի բուժօգնության գծով պետական պատվեր	548.3	717.6	+30.9
- սեռական ճանապարհով փոխանցվող հիվանդությունների բուժօգնության գծով պետական պատվեր	48.1	61.9	+28.7
- մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության գծով պետական պատվեր	1,309.1	1,571.0	+20.0
Առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) բուժօգնություն.	7,021.3	8,588.9	+22.3
այդ թվում.			
- մինչև 15 (2004թ-ին՝ մինչև 18) տարեկան երեխաների առողջության առաջնային պահպանման գծով պետական պատվեր	1,391.0	2,284.5	+64.2
- մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության գծով պետական պատվեր	283.2	466.7	+64.8

Այսպիսով, եթե համեմատենք առաջնային (ամբուլատոր-պոլիկլինիկական) և հիվանդանոցային բուժօգնության գծով ֆինանսավորման աճի միջին ցուցանիշները մոր և մանկան առողջության պահպանման և սոցիալական հատուկ նշանակություն ունեցող հիվանդությունների դեմ պայքարի ծրագրերով նախատեսված ֆինանսավորման աճի տեմպերի հետ, ապա դժվար չէ համոզվել, որ վերջիններս ավելի բարձր են, ինչը կարելի է համարել որպես նշված գերակայությունների դրսևորում պետական բյուջեում:

4. Եզրակացություններ և առաջարկություններ

ՀՀ Կառավարությունը 2003-2004թթ. ընթացքում որոշակի առաջընթաց է արձանագրել ԱՀՌԾ-ից բխող քայլերի իրականացման գործում: Նշված առաջընթացի արտահայտությունն են Կառավարության մի շարք որոշումների ընդունումը, ինչպես նաև դրանց հիման վրա ՀՀ առողջապահության նախարարության կողմից համապատասխան հրամանների արձակումը: Կառավարության կողմից ձեռնարկված քայլերը ընդգրկում են ԱՀՌԾ-ով սահմանված այնպիսի գերակայություններ, ինչպիսիք են առողջապահության պետական ֆինանսավորման տարեցտարի ավելացումը, առողջության առաջնային պահպանման օղակի ֆինանսավորման առաջանցիկ տեմպերով աճը, ընտանեկան բժշկության ներդրումը, մոր և մանկան առողջության պահպանումը, ՄԻԱՎ/ԶԻԱՀ-ի դեմ պայքարը և այլն:

Նշված ուղղություններով Կառավարության կողմից ձեռնարկված քայլերը դրանց ներդրման առումով կարող են բաժանվել երկու խմբի.

1. կոնկրետ ժամանակահատվածում (որպես կանոն՝ տվյալ տարվա ընթացքում) իրականացվելիք քայլեր, ինչպիսիք են, օրինակ, բյուջետային ֆինանսավորման աճը ապահովող միջոցառումները,
2. ավելի երկարատև հեռանկարում իրականացման ենթակա քայլեր, որոնց վերաբերյալ Կառավարությունը ընդունել կամ հաստատել է համապատասխան ծրագրեր (օրինակ՝ ԱԱՊ ռազմավարությունը կամ մոր և մանկան առողջության պահպանման ռազմավարությունը հաստատող որոշումները):

Առաջին խմբին դասվող միջոցառումները վերահսկողության և մոնիտորինգի տեսանկյունից ավելի չափելի են, մինչդեռ երկրորդ խմբին դասվող քայլերը լոկ հիմք են հանդիսանում հետագա կոնկրետ գործողությունների ձեռնարկման համար, և որպես այդպիսիք կարիք են զգում շարունակական մոնիտորինգի: Այլ կերպ ասած, չնայած Կառավարության կողմից ԱՀՌԾ-ով նախատեսված որևէ գերակա ուղղությամբ ռազմավարության կամ գործողությունների ծրագրի հաստատումն արդեն ինքնին կարող է համարվել դրական առաջընթաց, սակայն այստեղ ավելի կարևորվում է այդ փաստաթղթերով նախատեսված գործողությունների կոնկրետ ծրագրի ներդրումը, որը, որպես կանոն, ունի միջնաժամկետ բնույթ:

ԱՀՌԾ-ի իրականացման ուղղությամբ կարևոր քայլ է հանդիսանում Կառավարության կողմից ԱՀՌԾ-ի կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկի հաստատումը, որը թույլ է տալիս ավելի կոնկրետացնել և առարկայական դարձնել Կառավարության ստանձնած պարտավորությունների կատարման վերահսկումը: Նշված միջոցառումների ցանկով առողջապահության ոլորտում նախատեսված քայլերի վերաբերյալ փորձագիտական գնահատականը տրված է Աղյուսակ 7-ում:

Այսպիսով, ինչպես ցույց է տալիս 2003-2004թթ. ընթացքում Կառավարության իրականացրած միջոցառումների սույն վերլուծությունը, նախ՝ ընդհանուր դրական առաջընթացի հետ միասին դրանցում առկա են նաև որոշակի շեղումներ ԱՀՌԾ-ով նախանշված ցուցանիշներից, և երկրորդը՝ միշտ չէ, որ որպես ԱՀՌԾ-ից բխող քայլեր Կառավարության կողմից ընդունված որոշումները իրականում ունենում են նախատեսված (կամ ենթադրվող) դրական արդյունքը (օրինակ՝ Երևան քաղաքի բուժօգնականների օպտիմալացման կամ հիվանդանոցային համակարգում համավճարների ներդրման մասին որոշումները):

Ելնելով վերոհիշյալից՝ անհրաժեշտ է առնվազն առաջիկա երեք-չորս տարիների ընթացքում շարունակել ինչպես Կառավարության կողմից 2003-2004թթ. հաստատված որոշումներով նախատեսված քայլերի իրականացման մոնիտորինգը, այնպես էլ ԱՀՌԾ-ով նախատեսված այն քայլերի վերահսկողությունը, որոնք ենթադրում են Կառավարության կողմից ամեն տարի որոշակի քաղաքականության իրականացում: Ասվածը հատկապես կարևորվում է ԱՀՌԾ-ով նախատեսված սկզբունքային ուղղություններից մեկի իրագործման տեսանկյունից, այն է՝ «բնակչության առողջության պահպանման և բարելավման խնդիրների հաջող լուծման, այդ թվում՝ աղքատների համար բուժօգնության մատչելիությունը բարձրացնելու նպատակով անհրաժեշտ է ապահովել քաղաքացիական հասարակության բոլոր ինստիտուտների մասնակցությունը և համակարգված գործողությունները: Դա ենթադրում է ինչպես պետական մարմինների, այնպես էլ մասնավոր հատվածի, այդ թվում՝ հասարակական կազմակերպությունների անմիջական ու ակտիվ ներգրավում նախատեսվող ծրագրերի իրականացման և մոնիտորինգի գործում»²⁰:

²⁰ ՀՀ Կառավարության «Աղքատության հաղթահարման ռազմավարական ծրագիր», 2003թ.

Աղյուսակ 6. ԱՀՌԾ-ի կատարումն ապահովող 2004-2006թթ. միջոցառումների ցանկի²¹ առողջապահության ոլորտին վերաբերվող քաղաքականության ուղղություններով առկա առաջընթացի գնահատում

<i>Քաղաքականության ուղղությունը</i>	<i>Քաղաքականության ընդհանուր գնահատականը²²</i>	<i>NN</i>	<i>Գնահատականը հիմնավորող գործողություն</i>	<i>Գործողության գնահատականը</i>
1. առողջապահության ոլորտում պետական ծախսերի ավելացում՝ շեշտադրելով առողջության առաջնային պահպանման և հանրային առողջապահական համակարգերի զերակայությունը	↑	1	ՀՀ 2004թ. պետական բյուջեի մասին ՀՀ Օրենքը	↑
		2	ՀՀ Կառավարության 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշում (մասնավորապես՝ ամբուլատոր-պոլիկլինիկական մեկ հաճախման գինն ավելացել է և դարձել 900 դրամ՝ 2003թ. 450 դրամի դիմաց)	↑
2. առողջապահական համակարգի ֆինանսավորման մեխանիզմների շարունակական բարելավում ²³	=	1	«Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման փորձարարական կարգով փոխհատուցման մասին» ՀՀ Կառավարության որոշում	↑
		2	ՀՀ Կառավարության 2003թ. օգոստոսի 14-ի թիվ 1038-Ն և 2004թ. մարտի 4-ի թիվ 318-Ն որոշումները պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին (համավճարների ներդրման մասով)	? ↑↓

²¹ Հաստատված է ՀՀ Կառավարության 2004թ. հունվարի 22-ի թիվ 100-Ն որոշմամբ

²² Գնահատման սանդղակ. ↑ - իրավիճակը բարելավվել է, =, իրավիճակը գրեթե չի փոխվել, ↓ - իրավիճակը վատթարացել է, ? - գործողության արդյունքը կամ հավանական հետևանքը միանշանակ չէ, ↑↓ - տեղի են ունեցել և՛ դրական, և՛ բացասական տեղաշարժեր:

²³ Այս, ինչպես նաև որոշ այլ դեպքերում առանձին վերցրած գործողության գնահատականը դրական է, սակայն ընդհանուր առմամբ տվյալ քաղաքականության ուղղության ընդհանուր գնահատականը չեզոք է, քանի որ առանձին գործողությունը կամ գործողությունները դեռևս չեն հասցրել էական ազդեցություն գործել իրավիճակի վրա:

3. ընտանեկան բժշկության զարգացում	↑	1	ՀՀ Կառավարության 2003թ. նոյեմբերի 13-ի թիվ 1533-Ն որոշումը՝ «ՀՀ բնակչության առողջության առաջնային պահպանման 2003-2008թթ. ռազմավարությունը և ՀՀ-ում առողջության առաջնային պահպանման կազմակերպման և ֆինանսավորման նոր մեթոդների մշակման 2003-2004թթ. փորձարարական ծրագիրը հաստատելու մասին»	↑
		2	ՀՀ կառավարության 2004թ. փետրվարի 19-ի թիվ 211-Ն որոշումը՝ «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների ընտանեկան բժիշկների կողմից հիվանդների բուժման ուղեգրման կարգը և սպասարկման ձևերը հաստատելու մասին»	↑
		3	ՀՀ կառավարության 08.04.04թ. թիվ 539-Ն որոշումը՝ «Ընտանեկան բժշկի գործունեության կազմակերպման դրույթները և ընտանեկան բժշկի գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնելու ձևերը հաստատելու մասին»	↑
		4	ՀՀ առողջապահության նախարարի 2003թ. հուլիսի 21-ի թիվ 613 հրամանը՝ «Ընտանեկան բժշկության միօրինակացված կրթական ծրագիրը հաստատելու մասին»	↑
		5	«Ընտանեկան բժշկի կողմից իրականացվող բժշկական օգնության և սպասարկման փորձարարական կարգով փոխհատուցման մասին» ՀՀ Կառավարության 2004թ. հուլիսի որոշումը	↑
		6	ՀՀ առողջապահության նախարարի 15.07.04թ. հրաման՝ «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների միջոցով անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին և առանձին հիվանդություններով տառապող անձանց դեղերով ապահովելու կարգը»	↑
4. հանրապետության գյուղական բնակչության բուժօգնության բարելավում	↑	1	ՀՀ առողջապահության նախարարության կողմից մարզային ախտորոշիչ կենտրոնների հետ դժվարամատչելի ախտորոշիչ հետազոտությունների գծով պետպատվերի պայմանագրերի կնքում	↑

		2	պետբյուջեի միջոցներով բժշկական սարքավորումների և տրանսպորտային միջոցների ձեռքբերում մարզային բուժհաստատությունների համար (ընթացքի մեջ է)	↑
		3	Հանրապետության մարզերի շուրջ 80 բժշկական գյուղական ամբուլատորիաներին, որոնց ՀԲ առողջապահական վարկային ծրագրի շրջանակներում տրամադրվել է շտապ օգնության մեքենա, 2004թ. ՀՀ առողջապահության նախարարության կողմից տրվել է թույլտվություն՝ շտապ օգնության կանչերը իրականացնել պետական պատվերի շրջանակներում	↑
5. պետական ֆինանսական միջոցների արդյունավետ օգտագործում հիվանդանոցային բուժօգնության ոլորտում	=	1	ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռնարկվող ընթացիկ միջոցառումներ	=
6. բուժօգնության որակի բարելավում և վերահսկում	=	1	Բուժօգնության որակի բարելավման առաջին քայլերն են կատարվում սահմանափակ թվով փորձարարական ԱԱՊ բուժհիմնարկներում՝ ԱՄՆ ՄՁԳ-ի ֆինանսավորմամբ իրականացվող ՀՄԲԾ-ի կողմից	=
		2	ՀՀ կառավարության 2004թ. փետրվարի 19-ի թիվ 211-Ն որոշումը՝ «Ամբուլատոր-պոլիկլինիկական բժշկական կազմակերպությունների ընտանեկան բժիշկների կողմից հիվանդների բուժման ուղեգրման կարգը և սպասարկման ձևերը հաստատելու մասին»	↑
		3	ՀՀ կառավարության 08.04.04թ. N 539-Ն որոշումը՝ «Ընտանեկան բժշկի գործունեության կազմակերպման դրույթները և ընտանեկան բժշկի գործունեության մասին տեղեկատվություն ներկայացնելու ձևերը հաստատելու մասին»	↑
7. մոր և մանկան առողջության պահպանման գերակայության ապահովում	↑	1	ՀՀ Կառավարության 2003թ. օգոստոսի 8-ի թիվ 1000-Ն որոշում	↑
		2	ՀՀ առողջապահության նախարարության 25.03.2004թ. թիվ 34-Ա հրամանով հաստատվել է «Կրծքով սնուցման խրախուսման ծրագրի և «Մանկանը բարեկամ ծննդատներ» նախաձեռնությունների ներդրման 2004թ.-ի գործողությունների պլանը և ուսումնական դասընթացների ժամանակացույցը	↑

8. մայրական և պերինատալ մահացության կրճատում ²⁴	=	1	ՀՀ առողջապահության նախարարի 266-Ա և 571-Ա հրամաններով կազմվել և հաստատվել է ծրագիր և գործողությունների պլան «Հղիների սոցիալ հոգեբանական աջակցության և ծննդաբերության ֆիզիկական նախապատրաստում» թեմայով	↑
9. աղքատ և սոցիալապես անապահով խմբերի կանանց և տղամարդկանց վերարտադրողական առողջության բարելավում	=	1	ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռնարկվող ընթացիկ միջոցառումներ	=
10. պալարախտի, ՄԻԱՎ/ՉԻԱՀ-ի և մալարիայի դեմ արդյունավետ պայքարի ապահովում	=	1	ՀՀ Կառավարության 2003թ. դեկտեմբերի 4-ի թիվ 1680-Ն որոշում	↑
11. տարափոխիկ հիվանդությունների կանխարգելման ապահովում	=	1	ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռնարկվող ընթացիկ միջոցառումներ	=
12. երեխաների աճի և զարգացման ռազմավարության գերակայություն	=	1	ՀՀ առողջապահության նախարարության կողմից ձեռնարկվող ընթացիկ միջոցառումներ	=
13. երեխաների բուժօգնության կազմակերպման որակի և մատչելիության բարելավում, երեխաների հիվանդացության և մահացության կրճատում:	=	1	ՀՀ առողջապահության նախարարության 05.04.2004թ. N37-Ա հրամանով հաստատվել է «Երեխայի առողջության առաջնային պահպանման» հանրապետական ծրագրի 2004թ. գործողությունների պլանը և դասընթացների ուսումնական գրաֆիկը	↑

²⁴ տվյալ քաղաքականության ուղղությունը բնութագրող վիճակագրական տվյալներ չեն բերվում, քանի որ 2003թ. առողջապահական վիճակագրության ցուցանիշները սույն հաշվետվության կազմման պահին դեռևս հանրության համար մատչելի չէին

ՀԱՎԵԼՎԱԾ 1. ՑԱՆԿ՝ Առողջապահության ոլորտին առնչվող իրավական ակտերի

ՀՀ Օրենքներ

N	Իրավական ակտի անվանումը	Ընդունման տարին
1.	ՀՀ Օրենքը «Բնակչության բժշկական օգնության և սպասարկման մասին»	1996
2.	ՀՀ Օրենքը «ՀՀ բնակչության սանիտարահամաճարակային անվտանգության ապահովման մասին»	1992
3.	ՀՀ Օրենքը «Մարդու իմունային անբավարարության վիրուսից առաջացած հիվանդության կանխարգելման մասին»	1997
4.	ՀՀ Օրենքը «Դեղերի մասին»	1998
5.	ՀՀ Օրենքը «Մարդուն օրգաններ և (կամ) հյուսվածքներ փոխպատվաստելու մասին»	2002
6.	ՀՀ Օրենքը «Մարդու վերարտադրողական առողջության և վերարտադրողական իրավունքների մասին»	2002
7.	ՀՀ քաղաքացիական օրենսգիրքը	1998
8.	ՀՀ Օրենքը «Թմրամիջոցների և հոգեմետ նյութերի մասին»	2002
9.	ՀՀ Օրենքը «Հայաստանի Հանրապետությունում հաշմանդամների սոցիալական պաշտպանության մասին»	1993
10.	ՀՀ Օրենքը «Զինձառայողների և նրանց ընտանիքների անդամների սոցիալական ապահովության մասին»	1998
11.	ՀՀ Օրենքը «Երեխայի իրավունքների մասին»	2002
12.	ՀՀ Օրենքը «Սննդամթերքի անվտանգության մասին»	1999
13.	ՀՀ Օրենքը «Լիցենզավորման մասին»	2001
14.	ՀՀ Օրենքը «Տեղական ինքնակառավարման մասին»	1996
15.	ՀՀ Օրենքը «Կրթության մասին»	1999
16.	ՀՀ Օրենքը «Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի մասին»	2001
17.	ՀՀ Օրենքը «Պետական ոչ առևտրային կազմակերպությունների մասին»	2001
18.	ՀՀ Օրենքը «Բարեգործության մասին»	2002
19.	ՀՀ Օրենքը «գովազդի մասին»	1996
20.	ՀՀ Օրենքը «գիտական և գիտատեխնիկական գործունեության մասին»	2000
21.	ՀՀ Օրենքը «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին»	2002

Կառավարության որոշումներ

1.	«2003թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման մասին»	06/02/2003 թիվ 246-Ն
2.	«Անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերի և հիվանդությունների ցանկերը հաստատելու մասին»	08/06/1999 թիվ 396
3.	«Երևան քաղաքի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	06/08/2001 թիվ 701
4.	«ՀՀ Կոտայքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	22/02/2001 թիվ 128
5.	«ՀՀ Շիրակի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	24/02/2001 թիվ 138
6.	«ՀՀ Արարատի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	25/04/2001 թիվ 345
7.	«ՀՀ Արմավիրի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	25/04/2001 թիվ 341
8.	«ՀՀ Լոռու մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	16/05/2001 թիվ 432
9.	«ՀՀ Վայոց Ձորի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	21/06/2001 թիվ 556
10.	«ՀՀ Տավուշի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	21/06/2001 թիվ 557
11.	«ՀՀ Գեղարքունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	31/07/2001 թիվ 696
12.	«ՀՀ Սյունիքի մարզի առողջապահության համակարգի օպտիմալացման ծրագիրը հաստատելու մասին»	17/09/2001 թիվ 864

ՀՀ Առողջապահության նախարարության հրամաններ

1.	«2003թ. բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար առաջնային /ամբուլատոր-պոլիկլինիկական/ բուժօգնության տրամադրման կարգը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 185
2.	«2003թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում երեխաների բուժօգնության տրամադրման կարգը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 184
3.	«2003թ. պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում մանկաբարձագինեկոլոգիական բուժօգնության տրամադրման կարգը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 191
4.	«2003թ. բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բժշկական օգնություն պահանջող հիվանդությունների և վիճակների ցանկը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 193
5.	«2003թ. բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում հիվանդանոցային բուժօգնության կազմակերպման կարգը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 196
6.	«2003թ. բնակչությանը պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում դիսպանսերային բուժօգնության կազմակերպման կարգը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 196/1
7.	«ՀՀ առողջապահության համակարգի ամբուլատոր-պոլիկլինիկական կազմակերպությունների կողմից բուժանձնակազմի վարձատրման համար սահմանված միավորների, ինչպես նաև սպասարկվող բնակչության առավելագույն թվի սահմանը գերազանցող դեպքերում տեղամասային սկզբունքով աշխատող բժիշկների (տեղամասային թերապևտի, մանկաբույժի, ընտանեկան բժշկի) գործունեության համար տրվող ժամանակավոր թույլտվության և վարձատրման հաշվարկման կարգը հաստատելու մասին»	28/03/2003 թիվ 195
8.	«Ամբուլատոր-պոլիկլինիկական, մասնագիտացված հիվանդանոցային և դիսպանսերային բժշկական հաստատությունների կողմից անվճար կամ արտոնյալ պայմաններով դեղեր ձեռք բերելու իրավունք ունեցող բնակչության սոցիալական խմբերին և առանձին հիվանդություններով տառապող անձանց դեղերով ապահովելու կարգը հաստատելու մասին»	07/03/2001 թիվ 128

ՅԱՎԵԼՎԱԾ 2. Օրենքներ և կանոնակարգեր

ՉԱՅԱՍՏԱՆԻ ՉԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔԸ ՋՐՕԳՏԱ- ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Ընդունված է 2002 թ. հունիսի 4-ին

ԳԼՈՒԽ 1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հոդված 1. Օրենքի խնդիրները

Սույն օրենքի խնդիրը ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեության հիմունքները, դրանց ստեղծման ու գործունեության դադարման հիմքերը, ինչպես նաև պետական և այլ մարմինների հետ դրանց փոխհարաբերությունների սկզբունքները սահմանելն է՝ նպատակ ունենալով բարձրացնել Հայաստանի Հանրապետության ոռոգման համակարգի արդյունավետությունը:

Հոդված 2. Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին օրենսդրությունը:

Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կարգավորվում է սույն օրենքով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով, Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, իրավական այլ ակտերով, ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների կանոնադրություններով:

Հոդված 3. Օրենքում օգտագործվող հիմնական հասկացությունները:

Սույն օրենքում օգտագործվող հիմնական հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

- ջրօգտագործողների ընկերություն՝ (այսուհետ՝ Ընկերություն)՝ սույն օրենքի համաձայն՝ ջրօգտագործողների կողմից ստեղծվող կազմակերպություն,
- ջրօգտագործողների միություն (այսուհետ՝ Միություն)՝ սույն օրենքի համաձայն՝ ջրօգտագործողների ընկերությունների կողմից ստեղծվող կազմակերպություն,
- ոռոգման համակարգեր՝ ոռոգման և ցամաքուրդային ջրանցքներ, խողովակաշարեր, հիդրոտեխնիկական կառուցվածքներ, հորեր, պոմպակայաններ, ջրամբարներ, լճակներ՝ ճանապարհներով, շենքերով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով, այդ թվում՝ ջրակոհհամակարգերի պահպանման գոտիներ,

- սպասարկման տարածք՝ Միության կամ Ընկերության կողմից սպասարկվող աշխարհագրական տարածք, որը գտնվում է նրանց կողմից շահագործվող ոռոգման համակարգի սպասարկման տակ,
- սպասարկման ենթատարածք՝ Ընկերության սպասարկման տարածքի որոշակի մաս, որը ներառում է ոռոգման մեկ ներտնտեսային ցանց,
- հիդրոմիավոր՝ սպասարկման տարածքի որոշակի մաս, որը ոռոգման ջուր է ստանում մեկ ջրաղբյուրից, գլխամասային կառուցվածքից կամ ջրթողից,
- ներկայացուցչական գոտի՝ Ընկերության սպասարկման տարածքի մաս, որի ջրօգտագործողներն իրենց կազմից մեկ կամ մի քանի ներկայացուցիչ են ընտրում Ընկերության ներկայացուցիչների ժողովին մասնակցելու համար:

Հոդված 4. Ընկերության և Միության իրավական կարգավիճակը, նպատակն ու խնդիրները:

Ընկերությունը և Միությունը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող, իրավաբանական անձի կարգավիճակ ունեցող կազմակերպություններ են, որոնք, առաջնորդվելով հանրային շահերով, իրականացնում են ոռոգման համակարգի շահագործումն ու պահպանումը: Ընկերությունը և Միությունը հիմնադրվում են ջրօգտագործողներին ոռոգման ջրով ապահովելու նպատակով՝ սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով:

Ընկերությունը ոռոգման ջուր է մատակարարում իր սպասարկման տարածքում գտնվող ջրօգտագործողներին, իսկ Միությունը՝ իր սպասարկման տարածքի Ընկերություններին:

Ընկերության և Միության խնդիրներն են՝

ա) ոռոգման համակարգը շահագործելը, պահպանելը և ջուր բաշխելն իրենց անդամներին՝ ըստ ջրօգտագործման տարեկան պլանի՝ պայմանագրային հիմունքով,

բ) ջուր մատակարարելը սպասարկման տարածքում գտնվող Ընկերության և Միության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողներին,

գ) սպասարկման տարածքում գտնվող ոռոգման համակարգը և ջրային աղբյուրները վերականգնելը և շինարարական աշխատանքներ իրականացնելը,

դ) ջրամատակարարից ոռոգման ջուր ձեռք բերելը կամ բնական ջրային օբյեկտներից ջրառը՝ համապատասխան թույլտվության ամրագրության դեպքում,

ե) իրականացված ծառայությունների դիմաց Ընկերության և Միության անդամներից և ոչ անդամներից գումարներ գանձելը (ներառյալ՝ ջրավազանի, ջրատարի շահագործման և վերանորոգման ծախսերը),

զ) Ընկերության և Միության անդամների շահերը ներկայացնելը և պաշտպանելը,

է) Ընկերության և Միության անդամներին ոռոգման առաջավոր ձևեր ուսուցանելն ու ոռոգման նոր մեթոդների և տեխնոլոգիաների ներդրումն ապահովելը,

ը) հիդրոտեխնիկական սարքավորումներ ձեռք բերելը, փոխարինելը, շահագործելը և պահպանելը,

թ) ջրամատակարարումը կառավարելը, ինչպես նաև ջրերը նպատակային ու արդյունավետ օգտագործելը, ջրային օբյեկտներն աղտոտելը և սպառումը կանխելը,

ժ) հողերի բարելավման նպատակով անհրաժեշտ միջոցառումներ իրականացնելը, ցամաքուրդի համակարգը սպասարկելը,

ժա) բնապահպանական անվտանգությունն ապահովելը, հողատարման երևույթների և հողերի աղակալումն ու գերխոնավացումը կանխելը, ինչպես նաև ոռոգման համակարգի, ջրհավաք կառույցների պաշտպանությունն ապահովելը,

ժբ) ոռոգման համակարգի կառավարմանը մասնակցելը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը համապատասխան:

Պետության կողմից ոռոգման համակարգի շահագործմանը և պահպանմանն ուղղված օգնությունները, ինչպես նաև գյուղատնտեսական նշանակության մյուս օգնությունները կարող են տրամադրվել Ընկերությունների և Միությունների միջոցով:

Հոդված 5. Ընկերության և Միության գործունեության սկզբունքները

Ընկերությունը և Միությունը, սույն օրենքով և այլ իրավական ակտերով սահմանված կարգով, իրականացնում են միայն ոռոգման համակարգի շահագործման և պահպանման գործառույթներ:

Ընկերությունը և Միությունն իրենց գործունեությունը կազմակերպելիս առաջնորդվում են հետևյալ սկզբունքներով.

ա) Ընկերություն և Միություն հիմնադրելիս բոլոր հավանական անդամների մասնակցության իրավունքի ապահովման,

բ) Ընկերությունում և Միությունում արդար ու օրինական որոշումների ընդունման,

գ) Ընկերության և Միության գործունեության վերաբերյալ Ընկերության և Միության անդամների ազատ տեղեկատվություն ստանալու իրավունքի,

դ) ջրի արդարացի բաշխում Ընկերության և Միության անդամներին և ոչ անդամներին՝ հաշվի առնելով ջրի քանակը և Ընկերության և Միության յուրաքանչյուր անդամի և ոչ անդամի ոռոգման ենթակա հողատարածքը և մշակաբույսերը,

ե) ջրային պաշարների արդյունավետ և խնայողաբար օգտագործման, ոչ արտադրական կորուստների կրճատման,

զ) ջրօգտագործողների իրավունքների և օրինական շահերի ապահովման,

է) ջրամատակարարման, շահագործման և վերանորոգման աշխատանքների համար սահմանված համապատասխան ծախսերի հավաքման ուղղությամբ բոլոր իրավական միջոցների ապահովման:

ԳԼՈՒԽ 2. ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 6. Ընկերության հիմնադրումը

Ընկերությունը հիմնադրվում է կամավորության սկզբունքով՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանված կարգով:

Ընկերություն հիմնադրելու նպատակով սեփականության կամ օգտագործման իրավունքով տվյալ ոռոգման համակարգում հողատարածք ունեցող ֆիզիկական և/կամ իրավաբանական անձինք կազմավորում են նախաձեռնող խումբ: Նախաձեռնող խումբը հատակեցնում է հիմնադրվող Ընկերության սպասարկման ենթակա տարածքը՝ ղեկավարվելով Ընկերության մեջ տեխնիկատնտեսական նպատակահարմար առավելագույն տարածք ընդգրկելու սկզբունքով, ստեղծում է հիմնադիր կոմիտե: Հիմնադիր կոմիտեն կազմավորվում է ապագա Ընկերության ոչ ավելի, քան ինն անդամից:

Հիմնադիր կոմիտեն իր անդամներից ընտրում է նախագահ և ընդունում իր գործունեության կանոնակարգը:

Հիմնադիր կոմիտեն մշակում է Ընկերության կանոնադրությունը, կազմում է Ընկերության ոռոգման համակարգի հատակագիծը՝ ըստ սպասարկման ենթատարածքների, նշելով այդ տարածքների չափերը և տեղադրությունը, ինչպես նաև կազմում է Ընկերության հավանական անդամների ցուցակը՝ ըստ սպասարկման ենթատարածքների, նախապատրաստում է Ընկերության բյուջեի նախագիծը և Ընկերության աշխատանքային պլանը:

Ընկերության սպասարկման տարածքում կարող են ամբողջությամբ ընդգրկվել մեկից ավելի հիդրոմիավորներ՝ պահպանելով հիդրոմիավորների անբաժանելիության սկզբունքը:

Հիմնադիր կոմիտեն, Ընկերության հավանական անդամներին Ընկերության կանոնադրության նախագծին ծանոթացնելուց հետո, այդ նախագիծը, ոռոգման համակարգի հատակագիծը՝ ըստ սպասարկման ենթատարածքների, և հավանական անդամների ցուցակն ուղարկում է սույն օրենքի 32-րդ հոդվածով սահմանված՝ Ընկերությունների և Միությունների գործունեությունը կանոնակարգող խորհուրդ (այսուհետ՝ Կանոնակարգող խորհուրդ)՝ համաձայնեցնելու համար:

Կանոնակարգող խորհուրդը կարող է մերժել Ընկերության հիմնադրումը, եթե

- ա) կանոնադրությունը հակասում է սույն օրենքի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին,
- բ) պահպանված չէ հիդրոմիավորի անբաժանելիության սկզբունքը,
- գ) սպասարկման տարածքում գտնվող ոռոգման համակարգը հնարավորություն չունի ջուր ստանալ անմիջականորեն ջրամատակարարից կամ այլ աղբյուրից:

Կանոնակարգող խորհրդի համաձայնությունը ստանալուց հետո՝ մեկ ամսվա ընթացքում, հիմնադիր կոմիտեն հրավիրում է հիմնադիր ժողով՝ ձեռնարկելով համապատասխան միջոցներ՝ Ընկերության բոլոր հավանական անդամներին հրավիրելու ուղղությամբ:

Հիմնադիր ժողովն իրավագոր է, եթե մասնակցում է ըստ սպասարկման ենթատարածքների ցուցակներում ընդգրկված հավանական անդամների կեսից ավելին:

Հիմնադիր կոմիտեի նախագահը ղեկավարում է հիմնադիր ժողովի աշխատանքները:

Հիմնադիր ժողովը հաստատում է Ընկերության կանոնադրությունը, եթե հիմնադիր ժողովին մասնակցող հավանական անդամների կեսից ավելին կողմ է քվեարկում: Եթե Ընկերության հավանական անդամների թիվը մեծ է, նպատակահարմարությունից ելնելով, կարող են անցկացվել հիմնադիր ժողովներ՝ ըստ ենթատարածքների:

Եթե հիմնադիր ժողովին կամ ըստ ենթատարածքների հիմնադիր ժողովներին չեն մասնակցում Ընկերության անհրաժեշտ թվով անդամներ, ապա հիմնադիր ժողովի կամ ըստ ենթատարածքների հիմնադիր ժողովների անցկացումը կարող է հետաձգվել, որից հետո Ընկերության անհրաժեշտ թվով անդամների կրկին չհավաքվելու դեպքում հիմնադիր կոմիտեի գործունեությունը դադարեցվում է, և ստեղծվում է նոր հիմնադիր կոմիտե:

Հիմնադիր ժողովն ընտրում է Ընկերության վարչական խորհուրդ (ենթատարածքներում վարչական խորհրդի անդամներ), վերստուգող հանձնաժողով (ենթատարածքներում վերստուգող հանձնաժողովի անդամներ), կանոնադրությամբ նախատեսվելու դեպքում մաս վեճեր լուծող հանձնաժողով (ենթատարածքներում վեճեր լուծող հանձնաժողովի անդամներ), լսում է հիմնադիր կոմիտեի հաշվետվությունը:

Հիմնադիր ժողովը նշանակում է Ընկերության առաջին ժողովի գումարման ժամկետը:

Ընկերության գրանցումից հետո հիմնադիր կոմիտեի անդամներն իրավունք ունեն Ընկերության հիմնադրման գործընթացի ժամանակ իրենց կատարած ծախսերի համար Ընկերության ժողովի որոշմամբ ստանալ փոխհատուցում:

Հոդված 7. Ընկերության կանոնադրությունը

Ընկերության կանոնադրությունն Ընկերության հիմնադիր փաստաթուղթն է:

Ընկերության կանոնադրությունը հաստատում է հիմնադիր ժողովը: Ընկերության կանոնադրության անբաժանելի մասն են Ընկերության կողմից սպասարկվող տարածքի նկարագրությունը, այդ տարածքի ոռոգման համակարգի գծագրերը և հատակագիծը:

Ընկերության կանոնադրությունը պետք է բովանդակի՝

ա) Ընկերության անվանումը,

բ) Ընկերության գտնվելու վայրը,

գ) Ընկերության գործունեության նպատակը և խնդիրները,

դ) Ընկերությանն անդամակցելու հիմքերն ու կարգը, անդամությունից դուրս գալու և անդամությունից հեռացնելու կարգը,

ե) Ընկերության անդամների իրավունքները և պարտականությունները,

զ) Ընկերության ժողովի նախապատրաստման և անցկացման կարգը, հարցերի ցանկը, որոնց վերաբերյալ որոշումները պետք է ընդունվեն Ընկերության անդամների ձայների 2/3-ով,

է) անդամավճարների տեսակները, չափերը, գանձման կարգը և ժամկետները,

ը) Ընկերության կազմակերպական կառուցվածքը, կառավարման մարմինների կազմավորման կարգն ու ժամկետները, իրավասությունները և նրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը,

թ) վերստուգող մարմին կազմավորելու կարգը, նրա հաշվետվություններ ներկայացնելու ժամկետները և կարգը,

ժ) կանոնադրությամբ նախատեսված վեճեր լուծող մարմնի իրավասությունները, կազմավորման և գործունեության կարգը,

ժա) գույքի կազմավորման կարգը,

ժբ) Ընկերության կողմից իր անդամներին հասցված վնասները փոխհատուցելու կարգը,

ժգ) Միությանն անդամակցելու կարգը,

ժդ) Ընկերության վերակազմակերպման կարգը,

ժե) Ընկերության լուծարման կարգը:

Կանոնադրությունը կարող է բովանդակել նաև սույն օրենքով նախատեսված և Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու վերաբերյալ առաջարկություններ ներկայացնելու համար պետք է նախապես ստանալ Կանոնակարգող խորհրդի դրական եզրակացությունը:

Հոդված 8. Ընկերության պետական գրանցումը

Ընկերության պետական գրանցումը կատարվում է «Երավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան: Ընկերությունն իրավաբանական անձի կարգավիճակ է ձեռք բերում պետական գրանցման պահից:

Ընկերության պետական գրանցման համար անհրաժեշտ է ներկայացնել Ընկերություն հիմնադրելու մասին հիմնադիր ժողովի արձանագրությունը, Ընկերության կանոնադրությունը, Կանոնակարգող խորհրդի դրական եզրակացությունը, ինչպես նաև «Երավաբանական անձանց պետական գրանցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով նախատեսված փաստաթղթերը:

Ընկերություն հիմնադրելու մասին հիմնադիր ժողովի արձանագրությունն ստորագրում են ժողովի նախագահը և քարտուղարը, իսկ Ընկերության անդամ իրավաբանական անձանց առկայության դեպքում արձանագրությանը կցվում է դրանց կառավարման համապատասխան լիազորություններ ունեցող մարմնի որոշումը:

Պետական գրանցումն իրականացնող մարմինը կարող է մերժել Ընկերության գրանցումը, եթե ներկայացվող հիմնադիր փաստաթղթերը չեն

համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրության պահանջներին:

Պետական գրանցումը մերժելը կամ գրանցումից խուսափելը կարող է բողոքարկվել դատարան՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հոդված 9. Ընկերության անդամակցությունը

Ընկերության անդամներ կարող են լինել այն ֆիզիկական և իրավաբանական անձինք, ովքեր Ընկերության սպասարկման տարածքում ունեն հողատարածք՝ սեփականության կամ երեք տարուց ավելի ժամկետով օգտագործման իրավունքով:

Հողի վարձակալության պայմանագիր ունեցող անձինք կարող են Ընկերության անդամ դառնալ վարձատուի գրավոր համաձայնության կամ պայմանագրում համապատասխան դրույթի առկայության դեպքում:

Ընկերության նոր անդամներն ընդունվում են վարչական խորհրդի որոշմամբ:

Վարչական խորհուրդը թեկնածուին տեղեկացնում է նրան Ընկերության անդամ ընդունելու իրենց որոշման մասին, և նրա անդամությունը գրանցում է Ընկերության գրանցամատյանում: Ընկերության նոր անդամից գանձվում է մուտքի վճար, որի չափը սահմանում է Ընկերության ընդհանուր ժողովը:

Ընկերության անդամ դառնալ ցանկացող անձանց դիմումը մերժվում է, եթե՝

ա) Ընկերության կանոնադրությամբ նախատեսված է, որ նոր անդամներ կարող են ընդունվել ոռոգման շրջանի վերջում: Այդ դեպքում անդամության թեկնածուին տեղեկացնում են Ընկերության անդամ ընդունելու ժամկետի մասին,

բ) թեկնածուի անդամության իրավունքն առաջացել է հողի նկատմամբ սեփականության իրավունք ձեռք բերելու հետևանքով, սակայն նախորդ սեփականատերն Ընկերությանն ունեցած պարտքերը չի մարել, իսկ նոր սեփականատերը հրաժարվում է վճարել,

գ) թեկնածուն նախկինում հեռացվել է Ընկերությունից, սակայն նրան հեռացնելուց հետո դեռևս չի անցել երեք տարի:

Ֆիզիկական անձի մահվան դեպքում Ընկերության հանդեպ ունեցած նրա պարտավորությունները փոխանցվում են իրավահաջորդին:

Հոդված 10. Ընկերության անդամների իրավունքները և պարտականությունները

Ընկերության անդամներն իրավունք ունեն՝

ա) ստանալ Ընկերության կողմից համամասնության և արդարացիության սկզբունքներով բաշխվող ոռոգման ջուր՝ կնքված պայմանագրերին համապատասխան,

բ) մասնակցել Ընկերության կողմից որոշումների ընդունման աշխատանքներին,

գ) քվեարկել Ընկերության ժողովներում,

դ) քննարկման համար հարցեր մտցնել Ընկերության ընդհանուր ժողովի օրակարգ,

ե) Ընկերության կառավարման մարմիններում ընտրվելու համար թեկնածուներ առաջադրել և ընտրվել այդ մարմիններում,

զ) օգտվել Ընկերության մատուցած ծառայություններից,

է) ստանալ Ընկերության կողմից իրեն հասցված վնասի փոխհատուցում,

ը) ծանոթանալ Ընկերության հաշվապահական փաստաթղթերին:

Ընկերության անդամը պարտավոր է՝

ա) կատարել կանոնադրության և Ընկերության ընդհանուր ժողովի ընդունած այլ փաստաթղթերի պահանջները,

բ) կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում մուծել Ընկերության սահմանած վճարները,

գ) Ընկերության հետ կնքել ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր,

դ) ժամանակին վճարել մատակարարված ջրի վճարները,

ե) պահպանել ոռոգման ժամանակացույցը,

զ) հոգատար վերաբերմունք ցուցաբերել Ընկերությանը պատկանող և Ընկերության կողմից օգտագործվող գույքի նկատմամբ,

է) փոխհատուցել իր մեղքով Ընկերության վնասված սարքավորումների վերանորոգման և/կամ պահեստամասերի փոխարինման ծախսերը,

ը) Ընկերության պարտավորությունների համար Ընկերության անդամները կրում են սուբսիդիար պատասխանատվություն՝ Ընկերության հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների չափով,

թ) Ընկերությանը տեղեկատվություն տալ իր մշակած հողատարածքի և ջրի օգտագործման վերաբերյալ,

ժ) ոռոգման համակարգի կայուն աշխատանքի ապահովման նպատակով Ընկերությանը թույլատրել օգտագործելու իր հողատարածքում գտնվող ջրատարները և հիդրոտեխնիկական մյուս սարքավորումները,

ժա) Ընկերության աշխատողներին թույլատրել իրենց հողատարածքում կատարելու ոռոգման համակարգի շահագործման և պահպանման համար անհրաժեշտ աշխատանքները,

ժբ) պահպանել ոռոգման համակարգի շահագործման կանոնների պահանջները:

Ընկերության անդամներն ունեն նաև Ընկերության կանոնադրությամբ սմրագրված այլ իրավունքներ և պարտականություններ:

Ընկերության կանոնադրության և/կամ ներքին կանոնների պահանջները խախտելու դեպքում Ընկերության անդամները տուգանվում են կամ դադարեցվում է նրանց ջրի մատակարարումը, եթե այլ բան նախատեսված չէ ջրի մատակարարման պայմանագրով:

Հողված 11. Ընկերությունից անդամների դուրս գալը և անդամության դադարման հիմքերը

Ընկերության անդամները կանոնադրությամբ նախատեսված կարգով իրավունք ունեն դադարեցնել իրենց անդամությունը: Կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ Ընկերությունից դուրս գալ ցանկացող անդամն այդ իրավունքից օգտվում է միայն ոռոգման շրջանի վերջում: Եթե Ընկերությունն այդ անդամի համար կատարել է ծախսեր նախագծման, շինարարության կամ ոռոգման համակարգի շահագործման նպատակով, ապա նա կարող է Ընկերությունից դուրս գալ միայն այդ ծախսերի՝ իր մասի համարժեք գումարը հատուցելուց հետո:

Ընկերությունում անդամությունը դադարում է, եթե Ընկերության անդամը կորցրել է Ընկերության անդամ լինելու համար օրենքով սահմանված իրավական հիմքերը: Ընկերության անդամը դուրս է գալիս Ընկերությունից, եթե վաճառել է Ընկերության սպասարկման տարածքում գտնվող հողատարածքը: Այդ դեպքում վաճառողը և գնորդը պետք է գրավոր հայտնեն վարչական խորհուրդ, թե նրանցից ով է վճարելու Ընկերությանն ունեցած պարտքը: Գնորդը կարող է անդամ դառնալ Ընկերությանն ունեցած պարտքը մարելուց հետո:

Ընկերության անդամը կարող է վարչական խորհրդի որոշմամբ հեռացվել Ընկերությունից, եթե՝

- ա) պարբերաբար խախտում է Ընկերության կանոնադրության և ներքին կանոնակարգի պահանջները,
- բ) առանց հարգելի պատճառի ուշացնում է Ընկերության կողմից գանձվող վճարները,
- գ) հրաժարվում է կատարել Ընկերության կողմից գանձվող վճարները,
- դ) հրաժարվում է վերականգնել Ընկերությանն իր մեղքով հասցված վնասները:

Ընկերության կանոնադրությամբ կարող են նախատեսվել անդամությունից հեռացման այլ հիմքեր:

Հողված 12. Ընկերության կազմակերպական կառուցվածքը

Ընկերության կառավարման մարմիններն են՝

- ա) Ընկերության ընդհանուր ժողովը կամ ներկայացուցիչների ժողովը,
- բ) Ընկերության վարչական խորհուրդը:

Ընկերության գործադիր մարմինը տնօրինությունն է:

Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու նպատակով ընդհանուր ժողովն ընտրում է վերստուգիչ հանձնաժողով:

Ընկերության կանոնադրությամբ կարող է ստեղծվել վեճեր լուծող հանձնաժողով:

Ընկերության կազմակերպական կառուցվածքը և մարմինների լիազորությունները սահմանվում են սույն օրենքով և Ընկերության կանոնադրությամբ:

Վարչական խորհրդի անդամները և նախագահը, վերստուգող հանձնաժողովի անդամները և նախագահը, վեճեր լուծող հանձնաժողովի անդամներն ու նախագահը Ընկերության վճարովի աշխատողներ չեն:

Հոդված 13. Ընկերության ընդհանուր ժողովը

Ընկերության կառավարման բարձրագույն մարմինը Ընկերության անդամների ընդհանուր ժողովն է:

Ընկերության ընդհանուր ժողովը գումարվում է սույն օրենքով և կանոնադրությամբ սահմանված կարգով, վարչական խորհրդի որոշմամբ, ըստ անհրաժեշտության, առնվազն տարին մեկ անգամ:

Ընկերության կանոնադրությամբ նախատեսված ժամկետներում գումարվող ընդհանուր ժողովից բացի հրավիրվող ընդհանուր ժողովները համարվում են արտահերթ:

Արտահերթ ընդհանուր ժողովներ գումարվում են Սիւրբյան, Ընկերության վարչական խորհրդի որոշմամբ, ընկերության անդամների մեկ երրորդի, վերստուգող հանձնաժողովի, ինչպես նաև Կանոնակարգող խորհրդի նախաձեռնությամբ:

Ընկերության գործադիր մարմինը պարտավոր է ընդհանուր ժողով գումարելուց ոչ ուշ, քան 30 օր առաջ այդ մասին գրավոր ծանուցել Ընկերության անդամներին: Ծանուցագրում պետք է նշվեն ընդհանուր ժողովի անցկացման ամսաթիվը, ժամը, տեղը և օրակարգում քննարկման համար նախատեսված հարցերը:

Վարչական խորհուրդն ընդհանուր ժողով անցկացնելուց 20 օր առաջ պարտավոր է Ընկերության անդամներին մատչելի ձևով հնարավորություն ընձեռել նախօրոք ծանոթանալու Ընկերության բոլոր նյութերին:

Ընկերության անդամներն իրավունք ունեն ոչ ուշ, քան ընդհանուր ժողովի գումարման օրվանից 10 օր առաջ, Ընկերության գործունեությանը վերաբերող հարցերի վերաբերյալ առաջարկություն ներկայացնել ընդհանուր ժողովի օրակարգում մտցնելու համար:

Ընդհանուր ժողովն իրավագոր է, եթե նրա աշխատանքներին մասնակցում է Ընկերության անդամների 50 %-ից ավելին: Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասություններն են՝

- ա) Ընկերության կանոնադրության մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելը,
- բ) վարչական խորհրդի կանոնակարգը հաստատելը,
- գ) վերստուգող հանձնաժողովի կանոնակարգը հաստատելը.
- դ) վարչական խորհրդի անդամներին ընտրելը և նրանց լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը,

ե) վերստուգող հանձնաժողով ընտրելը և դրա լիազորությունները վաղաժամկետ դադարեցնելը,

զ) Ընկերության գործունեությունը ստուգելու նպատակով անկախ ատոլիտ հրավիրելը,

է) վեճեր լուծող հանձնաժողով ընտրելը,

ը) Ընկերության անդամներից ու ոչ անդամներից կատարվող գանձումների տեսակները և չափերը որոշելը,

թ) Ընկերության տարեկան հաշվետվություններն ու հաշվապահական հաշվեկշիռները հաստատելը և վնասները բաշխելը,

ժ) ջրի օգտագործման տարեկան պլանը և ջրի բաշխման ժամանակացույցը հաստատելը,

ժա) Ընկերության ամենամյա բյուջեն հաստատելը,

ժբ) Ընկերության ներքին կանոնակարգը հաստատելը,

ժգ) Ընկերության անդամների նկատմամբ կիրառվող տուգանքների չափերը հաստատելը,

ժդ) Կանոնակարգող խորհրդի համաձայնությամբ Ընկերությունը վերակազմակերպելու, Միության մեջ ընդգրկվելու և լուծարման մասին որոշումներ ընդունելը, լուծարման հանձնաժողով ընտրելն ու լուծարման հաշվեկշիռները հաստատելը,

ժե) ջրատնտեսական համակարգերի ու կառույցների վերանորոգման և հիմնանորոգման պլանները հաստատելը,

ժզ) ոռոգման համակարգի և ջրօգտագործման կառավարման ներքին կանոնները հաստատելը,

ժէ) վարձատրվող աշխատողների թվաքանակը և հաստիքացուցակը հաստատելը,

ժը) Ընկերության անդամների համար արտոնություններ սահմանելը:

Ընկերությունը վերակազմակերպելու, Միության մեջ ընդգրկվելու, լուծարելու, կանոնադրությունում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումներն ընդունվում են Ընկերության անդամների ընդհանուր ձայների թվի 2/3-ով:

Ընկերության ընդհանուր ժողովում կարող է քննարկվել Ընկերության գործունեությանը վերաբերող ցանկացած այլ հարց:

Ընկերության ընդհանուր ժողովի բացառիկ իրավասությունները չեն կարող վերապահվել Ընկերության այլ մարմնի:

Ընդհանուր ժողովի նիստերն արձանագրում է ընդհանուր ժողովի քարտուղարը: Ընդհանուր ժողովի նիստերի արձանագրությունները ստորագրում են ընդհանուր ժողովի նախագահը և քարտուղարը: Դրանք կնիքով կնքվում և մշտապես պահվում են Ընկերությունում:

Նմանօրինակ պահանջները տարածվում են նաև վարչական խորհրդի, վերստուգող և վեճեր լուծող հանձնաժողովների արձանագրությունների վրա:

Ընդհանուր ժողովի նիստերը վարում է վարչական խորհրդի նախագահը, նրա բացակայության դեպքում՝ վարչական խորհրդի նախագահի տեղակալը:

Ընդհանուր ժողովը որոշում ընդունում է Ընկերության՝ ժողովին մասնակից անդամների ձայների պարզ մեծամասնությամբ, եթե սույն օրենքով կամ Ընկերության կանոնադրությամբ այլ բան նախատեսած չէ:

Առանձին հարցերի վերաբերյալ որոշում ընդունելիս Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել գաղտնի քվեարկություն:

Հոդված 14. Ընկերության անդամի ձայնի իրավունքը

Ընկերության կանոնադրությամբ սահմանվում է ձայների այն քանակը, որը կարող է ունենալ Ընկերության անդամն ընդհանուր ժողովում: Ընկերության անդամների ձայների քանակը սահմանվում է հետևյալ սկզբունքներից մեկով.

ա) Ընկերության անդամն ունի մեկ ձայն,

բ) Ընկերության անդամի ձայների քանակը որոշվում է Ընկերության սպասարկման տարածքում նրա ունեցած հողատարածքի չափից:

Ընկերության յուրաքանչյուր անդամ պետք է ունենա առնվազն մեկ ձայն, սակայն նրա ունեցած ձայների քանակը չի կարող գերազանցել Ընկերության անդամների ընդհանուր ձայների 1/4ը:

Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ ընդհանուր ժողովում Ընկերության անդամի ձայնի իրավունքը կախված է Ընկերության հանդեպ նրա ունեցած պարտավորությունների կատարումից:

Հոդված 15. Ներկայացուցիչների ժողովը

Ընկերությունում մեծ թվով անդամների առկայության դեպքում, եթե դժվար է ընդհանուր ժողով գումարելը, Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել Ընկերության անդամների ներկայացուցիչների ժողով:

Ներկայացուցիչների ժողովն ունի սույն օրենքով նախատեսված ընդհանուր ժողովի բոլոր իրավասությունները:

Ներկայացուցիչների ժողովը հրավիրելու նպատակով, Ընկերության կանոնադրությամբ, Ընկերության սպասարկման տարածքը բաժանվում է ներկայացուցչական գոտիների, որոնք պետք է հստակ նշված լինեն Ընկերության սպասարկման տարածքի շահագործման պլանում: Ընկերության անդամները ներկայացուցչական գոտիներից մեկ կամ մի քանի ներկայացուցիչ են ընտրում ներկայացուցիչների ժողովին մասնակցելու համար:

Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են ըստ գոտիների ներկայացուցիչների թիվը, ընտրությունների անցկացման ժամկետները և կարգը, իրավասությունները, ժողովում նրանց ունեցած ձայների քանակը:

Ընկերության ընդհանուր ժողովի համար սահմանված՝ Ընկերության հիմնադրման և կառավարման սկզբունքները գործում են նաև ներկայացուցիչների ժողովի համար:

Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ ներկայացուցչի ընտրության ժամանակ Ընկերության անդամի ձայնի իրավունքը կախված է Ընկերությանը նրա կատարած վճարումներից:

Ներկայացուցչի լիազորություն չունեցող Ընկերության անդամներն իրավունք ունեն ներկա գտնվել ներկայացուցիչների ժողովի նիստերում՝ խորհրդակցական ձայնի իրավունքով:

Հոդված 16. Ընկերության վարչական խորհուրդը

Ընկերության վարչական խորհուրդն իրականացնում է Ընկերության ընդհանուր դեկավարումը, բացառությամբ այն հարցերի, որոնք սույն օրենքով և Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են որպես Ընկերության ընդհանուր ժողովի և ներկայացուցիչների ժողովի (այսուհետ՝ ժողով) բացառիկ իրավասություն:

Ժողովն Ընկերության անդամների թվից ընտրում է հինգ անդամից ոչ պակաս վարչական խորհուրդ՝ երեք տարի ժամկետով: Վարչական խորհրդի անդամների քանակը և նրանց ընտրության կարգը սահմանվում է Ընկերության կանոնադրությամբ: Ընկերությանը պարտք ունեցող անդամները չեն կարող ընտրվել վարչական խորհրդի կազմում:

Վարչական խորհուրդը հաշվետու է Ընկերության ժողովին:

Վարչական խորհրդի լիազորությունները սահմանվում են սույն օրենքով և Ընկերության կանոնադրությամբ:

Վարչական խորհուրդն իրականացնում է Ընկերության ժողովի հրավիրման և նրա օրակարգի հաստատման հետ կապված կազմակերպական աշխատանքները:

Վարչական խորհուրդը ժողովի հաստատմանը ներկայացնելու համար նախապատրաստում է՝

ա) Ընկերության բյուջեի նախագիծը,

բ) Ընկերության տարեկան հաշվետվությունը և հաշվեկշիռը,

գ) ջրի բաշխման և ոռոգման համակարգի վերանորոգման աշխատանքների պլանները:

Վարչական խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

ա) Ընկերության անդամներ ընդունելը և անդամությունը դադարեցնելը,

բ) այլ կազմակերպությունների հետ պայմանագրեր կնքելը,

գ) մոնիտորինգ կազմակերպելը,

դ) Ընկերության ֆինանսական և հաշվապահական գործունեությունը համակարգելը,

ե) Ընկերության գործադիր տնօրենին ու գլխավոր հաշվապահին աշխատանքի ընդունելը և աշխատանքից ազատելը,

զ) կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր:

Վարչական խորհուրդն իրականացնում է՝

ա) Ընկերության ընդհանուր կառավարումը,

բ) Ընկերության գործադիր մարմնի գործունեության վերահսկումը,

զ) կանոնադրությամբ սահմանված՝ Ընկերության գործունեությունը կանոնակարգող ընթացակարգերի պահպանումը,

դ) սույն օրենքով, ընկերության կանոնադրությամբ և ժողովի որոշումներով նախատեսված այլ խնդիրներ:

Վարչական խորհուրդն իր կազմից երեք տարի ժամկետով ընտրում է վարչական խորհրդի նախագահ և նախագահի տեղակալ, որոնց լիազորությունները սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ: Վարչական խորհրդի նախագահի, նրա տեղակալի համար Ընկերության կանոնադրությամբ կարող են սահմանվել ավելի կարճ ժամկետներ:

Վարչական խորհրդի նախագահը ղեկավարում է ժողովի աշխատանքները, վարչական խորհրդի նիստերը և ներկայացնում է Ընկերությունն այլ կազմակերպություններում:

Վարչական խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության, բայց ոչ պակաս, քան ամիսը մեկ անգամ:

Վարչական խորհրդի արտահերթ նիստերը գումարվում են վարչական խորհրդի նախագահի կամ վարչական խորհրդի անդամների 1/3-ի նախաձեռնությամբ:

Վարչական խորհրդի նիստերն իրավագոր են, եթե դրանց մասնակցում է անդամների ոչ պակաս, քան 3/4-ը: Վարչական խորհրդի որոշումներն ընդունվում են նրա անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ:

Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ վարչական խորհրդի նախագահը քվեարկում է ձայների հավասարության դեպքում:

Վարչական խորհրդի անդամները կամ վարչական խորհրդի նախագահը կարող են հեռացվել ժողովի որոշմամբ, եթե թույլ են տվել պարտականությունների խախտումներ, որոնց ցանկը կարող է սահմանվել Ընկերության կանոնադրությամբ:

Նույն ժողովում կազմակերպվում են վարչական խորհրդի անդամների նոր ընտրություններ:

Հոդված 17. Ընկերության գործադիր մարմինը

Ընկերության գործադիր մարմինն Ընկերության տնօրինությունն է, որի ղեկավարն Ընկերության տնօրենն է:

Ընկերության կանոնադրությամբ կարող է Ընկերության տնօրինությանը վերապահվել՝

ա) Ընկերության բյուջեի, ոռոգման համակարգերի շահագործման և պահպանման աշխատանքային պլանը, ինչպես նաև վարչական խորհրդին ներկայացվող այլ փաստաթղթեր նախապատրաստելը,

բ) Ընկերության սպասարկման տարածքում գտնվող անդամների և ոչ անդամների գրանցման, նրանց հողատարածքների չափերի և տեղադրման նկարագրության, Ընկերության ստացած ոռոգման ջրի, Ընկերության անդամների և ոչ անդամների կողմից տրված ոռոգման ջրի ստացման հայտերը և ջրաբաշխման մատյանները վարելը,

գ) ոռոգման համակարգերի շահագործումը և պահպանումն ապահովելը,

դ) հաստատված բյուջեի և ոռոգման համակարգերի շահագործման ու պահպանման աշխատանքային պլանի հիման վրա վարչական խորհրդի հաստատմանը ներկայացվող պայմանագրեր նախապատրաստելը,

ե) ջրամատակարարի կողմից կատարվող ոռոգման ջրի մատակարարման նկատմամբ հսկողություն և ջուր ստանալը ու բաշխելն Ընկերության անդամներին,

զ) Ընկերության տնօրինության աշխատակազմում աշխատանքի ընդունելը և աշխատանքից ազատելը,

է) վարձատրվող աշխատողների համար պարտադիր կատարման ենթակա հրամաններ և հրահանգներ հրապարակելը,

ը) Ընկերության վարչական խորհրդի հաստատած կանոնակարգի համաձայն՝ Ընկերության ֆինանսական միջոցները կառավարելը,

թ) սույն օրենքով և Ընկերության կանոնադրությամբ նախատեսված այլ հարցեր: Ընկերության տնօրենի իրավասությունները սահմանվում են կանոնադրությամբ:

Ընկերության կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ Ընկերության գործադիր մարմնի ղեկավարի ընտրությունը կատարվում է մրցութային կարգով:

Վարչական խորհուրդն Ընկերության տնօրենի և գլխավոր հաշվապահի հետ կնքում է աշխատանքային պայմանագրեր, որտեղ որոշվում են նրանց իրավասությունների ժամկետները:

Ընկերության տնօրենի, հաշվապահի և վճարովի աշխատողների վճարման կարգն ու աշխատավարձի չափը որոշում է Ընկերության ժողովը՝ Ընկերության վարչական խորհրդի առաջարկությամբ:

Ընկերության վճարովի աշխատողներն իրավունք չունեն ընտրվել Ընկերության վարչական խորհրդում, վերստուգող հանձնաժողովում կամ վեճեր լուծող հանձնաժողովում:

Հոդված 18. Վերստուգող հանձնաժողովը

Վերստուգող հանձնաժողովը հսկողություն է իրականացնում Ընկերության վարչական խորհրդի, նրա գործադիր մարմնի և վարչական խորհրդի նախագահի կողմից իրականացվող ֆինանսական և տնտեսական գործունեության նկատմամբ:

Վերստուգող հանձնաժողովն ընտրվում է Ընկերության ժողովի կողմից ուղղակի քվեարկությամբ, երեք տարի ժամկետով և երեք անդամից ոչ պակաս:

Վարչական խորհրդի անդամը միաժամանակ չի կարող լինել նաև վերստուգող հանձնաժողովի անդամ:

Ընկերության ժողովն ընդունում է վերստուգող հանձնաժողովի լիազորությունների և գործունեության կարգի մասին կանոնակարգ:

Վերստուգող հանձնաժողովն Ընկերության ֆինանսատնտեսական գործունեության ստուգում իրականացնում է տարեկան առնվազն մեկ անգամ: Վերստուգող հանձնաժողովը, իր նախաձեռնությամբ, ժողովի որոշմամբ կամ վարչական խորհրդի անդամների ընդհանուր քանակի 2/3-ի որոշմամբ, ցանկացած ժամանակ կարող է իրականացնել Ընկերության

Ֆինանսատնտեսական գործունեության ստուգում: Վերստուգող հանձնաժողովի կողմից իրականացված ստուգման արդյունքների վերաբերյալ եզրակացությունը ներկայացվում է Ընկերության ժողով:

Վերստուգող հանձնաժողովի պահանջով Ընկերության վարչական խորհուրդը և Ընկերության տնօրինությունը պարտավոր են տրամադրել Ընկերության ֆինանսատնտեսական փաստաթղթերը:

Վերստուգող հանձնաժողովը հաշվետու է Ընկերության ժողովին:

Վերստուգող հանձնաժողովի գործունեությունը վաղաժամկետ դադարեցվում է Ընկերության ժողովի որոշմամբ: Նույն ժողովում ընտրվում է վերստուգող՝ նոր հանձնաժողով:

Հոդված 19. Վեճեր լուծող հանձնաժողովը

Ընկերության ժողովը կարող է ստեղծել վեճեր լուծող հանձնաժողով, որը քննարկում է Ընկերության անդամների միջև ջրօգտագործման և ոռոգման ջրի բաշխման վերաբերյալ առաջացած վեճերը: Հանձնաժողովի անդամների քանակը, լիազորությունների ժամկետները և գործունեության կարգը սահմանվում են Ընկերության կանոնադրությամբ:

Վեճեր լուծող հանձնաժողովի անդամներն իրենց կազմից ընտրում են նախագահ, որը կազմակերպում է հանձնաժողովի աշխատանքները և նախագահում է նիստերում:

Ընկերության կանոնադրությունը և/կամ ջրի բաշխման գրաֆիկն այլ անդամների կողմից խախտելու վերաբերյալ դիմումներն Ընկերության անդամները գրավոր հանձնում են հանձնաժողովի նախագահին, որը դիմումի քննարկման նպատակով տասնօրյա ժամկետում հրավիրում է հանձնաժողովի նիստ: Կողմերը տեղեկացվում են նիստի անցկացման նպատակի, տեղի ու ժամանակի մասին և պարտավոր են մասնակցել նիստի աշխատանքներին, իսկ եթե հնարավորություն չունեն անձամբ մասնակցել, ապա նրանց շահերը կարող են ներկայացնել Ընկերության այլ անդամներ:

Դիմումի քննարկումը կազմակերպվում է դռնբաց, որի ժամանակ հանձնաժողովը լսում է կողմերին: Բերված փաստերը հիմնավորելու նպատակով կողմերը կարող են ներկայացնել գրավոր կամ այլ ապացույցներ, իսկ անհրաժեշտության դեպքում հանձնաժողովը կարող է կազմակերպել լրացուցիչ քննարկումներ:

Վեճեր լուծող հանձնաժողովը պարտավոր է գործի քննարկումն սկսելուց հետո 10 օրվա ընթացքում կայացնել որոշում:

Վեճեր լուծող հանձնաժողովը կարող է կիրառել Ընկերության կանոնադրությամբ նախատեսված պատասխանատվության միջոցներ:

Վեճեր լուծող հանձնաժողովի որոշումը կարող է վիճարկվել դատական կարգով:

Վարչական խորհրդի անդամը միաժամանակ չի կարող լինել նաև վեճեր լուծող հանձնաժողովի անդամ:

Վեճեր լուծող հանձնաժողովի գործունեությունը վաղաժամկետ դադարեցվում է Ընկերության ժողովի որոշմամբ: Նույն ժողովում ընտրվում է վեճեր լուծող նոր հանձնաժողով:

Հոդված 20. Ռոռզման ջրի մատակարարման պայմանագիրը

Ընկերության սպասարկման տարածքում ռոռզելի հող ունեցող Ընկերության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողները ռոռզման ջուր ստանալու համար Ընկերության հետ կնքում են ռոռզման ջրի մատակարարման պայմանագիր՝ ոչ պակաս, քան երեք տարի ժամկետով:

Ջրօգտագործողի՝ ռոռզման ջուր այլ աղբյուրից ձեռք բերելու ապացույցներ ներկայացնելու դեպքում, Ընկերության վարչական խորհուրդը կարող է ջրօգտագործողի հետ ռոռզման ջրի մատակարարման պայմանագիր չկնքել:

Ընկերության ոչ անդամներին ռոռզման ջուրը մատակարարվում է պայմանագրային հիմունքով, դրանով մատակարարվող ջրի գինը չի կարող գերազանցել Ընկերության անդամների համար նախատեսված ջրի գնի 150 %-ը:

Ընկերության և ջրօգտագործողների միջև ռոռզման ջրի մատակարարման պայմանագրով կարող է նախատեսվել պարտավորության կատարման ապահովման միջոց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Ստացած ռոռզման ջրի համար ջրօգտագործողի չվճարելու դեպքում Ընկերության հետ ջրի մատակարարման պայմանագրով կարող է նախատեսվել հողամասն Ընկերությանը օգտագործման իրավունքով փոխանցելու պարտավորություն՝ ոչ ավելի, քան երեք տարի ժամկետով:

Հոդված 21. Ընկերության անդամներից գանձվող վճարների տեսակները

Ընկերության կանոնադրությամբ սահմանվում են անդամներից գանձվող վճարների հետևյալ տեսակները.

ա) մատակարարված ռոռզման ջրի համար,

բ) Ընկերության կողմից շահագործվող ռոռզման համակարգի շահագործման, վերանորոգման և պահպանման ծախսերը,

գ) անդամավճարները:

Ընկերության ժողովի որոշմամբ կարող են սահմանվել Ընկերության կողմից գանձվող վճարների այլ տեսակներ: Այլ նպատակներով իրականացվող գանձումներ կարող են նախատեսվել նաև Ընկերության կանոնադրությամբ:

Հոդված 22. Ընկերության գույքը

Ընկերության գույքը կազմավորվում է անդամավճարներից, մուտքի վճարներից, մատակարարված ջրի դիմաց ստացված վճարներից, այլ վճարներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Կանոնակարգող խորհրդի եզրակացության հիման վրա համայնքային և պետական սեփականություն համարվող ռոռզման համակարգերը,

համապատասխան լիազորություններ ունեցող մարմինների որոշմամբ, ըստ սպասարկման տարածքների, օգտագործման իրավունքով հանձնվում են Ընկերությանը: Ոռոգման համակարգերի օգտագործման իրավունքը փոխանցելու վերաբերյալ կնքվում է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր ոչ պակաս, քան 25 տարի ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Ընկերությունների գույքը կարող է օտարվել Ընկերության ժողովի որոշմամբ, եթե այդ որոշման օգտին քվեարկել է անդամների ընդհանուր թվի ոչ պակաս, քան 2/3-ը, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

Ընկերության անդամն Ընկերության հանդեպ ունեցած պարտավորությունների համար պատասխանատվություն է կրում իրեն պատկանող գույքով:

Ընկերության անդամ ջրօգտագործողն Ընկերության գույքի նկատմամբ բաժնի իրավունք չունի:

ԳԼՈՒԽ 3. ՄԻՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԴՐՈՒՄԸ ԵՎ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

Հոդված 23. Միությունը

Միությունը ոռոգման համակարգը շահագործելու նպատակով Ընկերությունների կամավոր միավորում է, որը շահույթ ստանալու նպատակ չհետապնդող իրավաբանական անձ է և գործում է Ընկերությունների կողմից իրեն տրված լիազորությունների սահմաններում:

Միության անդամ Ընկերությունը պահպանում է իր ինքնուրույնությունը և իրավաբանական անձի իրավունքները:

Միությունը պատասխանատու չէ իր անդամների պարտավորությունների համար:

Միության անդամները Միության պարտավորությունների համար կրում են սուբսիդիար պատասխանատվություն՝ Միության հանդեպ ունեցած իրենց պարտավորությունների չափով:

Հոդված 24. Միության հիմնադրումը

Հիմնական ջրատարի կամ նույն ջրավազանի ոռոգման տարածքում գտնվող բոլոր Ընկերություններն իրավունք ունեն դառնալ Միության անդամ:

Միությունը հիմնադրվում է կամավորության սկզբունքով, եթե նախաձեռնող Ընկերությունների կողմից սպասարկվող տարածքի չափը գերազանցում է ապագա Միության սպասարկման տարածքի 2/3-ը՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ, սույն օրենքով և հիմնադիր փաստաթղթով սահմանված կարգով: Միությունը հիմնադրելու նպատակով Ընկերություններն ստեղծում են հիմնադիր վարչական խորհուրդ, որի նիստին մասնակցելու համար յուրաքանչյուր Ընկերություն լիազորում է 2 ներկայացուցիչ՝ 1-ական ձայնի իրավունքով:

Հիմնադիր վարչական խորհուրդն առաջին նիստում ընտրում է հիմնադիր վարչական խորհրդի նախագահ և կազմում է աշխատանքային կանոնակարգ: Հիմնադիր վարչական խորհուրդը կազմում է Միության կանոնադրության նախագիծը, ինչպես նաև կանոնադրության անբաժանելի մասը կազմող հավելվածները, Միության ոռոգման համակարգի հատակագիծը՝ ըստ սպասարկման ենթատարածքների, սպասարկման տարածքի չափերի և տեղադրության նկարագրության:

Հիմնադիր վարչական խորհուրդը Միության կանոնադրության նախագիծը՝ հավելվածներով, ներկայացնում է Կանոնակարգող խորհուրդ՝ եզրակացություն ստանալու նպատակով:

Միության պետական գրանցման համար անհրաժեշտ է Կանոնակարգող խորհրդի դրական եզրակացությունը:

Հոդված 25. Միության կանոնադրությունը

Միության կանոնադրությունը նրա հիմնադիր փաստաթուղթն է:

Հիմնադիր վարչական խորհուրդը հաստատում է Միության կանոնադրությունը, որը ստորագրում է նախագահը:

Միության կանոնադրությունը պետք է բովանդակի՝

ա) Միության անվանումը,

բ) գտնվելու վայրը,

գ) Միության գործունեության նպատակը և խնդիրները,

դ) Միությանն անդամակցելու հիմքերն ու կարգը, անդամությունից դուրս գալու և անդամությունից հեռացնելու կարգը,

ե) Միության անդամների իրավունքները և պարտականությունները,

զ) Միության կողմից սպասարկվող տարածքի նկարագրությունը, այդ տարածքի ոռոգման համակարգի գծագրերը և հատակագիծը,

է) կառավարման մարմինների կազմակերպական կառուցվածքը, իրավասությունները և դրանց կողմից որոշումներ ընդունելու կարգը,

ը) վերստուգող մարմինների և դրանց հաշվետվությունների ներկայացման ժամկետները և կարգը, վեճեր լուծող մարմնի իրավասությունները, կազմավորման և գործունեության կարգը,

թ) գույքի կազմավորման կարգը,

ժ) Միության կողմից իր անդամներին հասցված վնասները փոխհատուցելու կարգը,

ժա) Միության լուծարման կարգը:

Կանոնադրությունը կարող է բովանդակել սույն օրենքով նախատեսված կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ դրույթներ:

Միության կանոնադրության մեջ փոփոխություններ կատարելու առաջարկությունների վերաբերյալ պետք է նախապես ստանալ կանոնակարգող խորհրդի դրական եզրակացությունը:

Հողված 26. Միության կազմակերպական կառուցվածքը

Միության կառավարման բարձրագույն մարմինը վարչական խորհուրդն է: Վարչական խորհուրդն իր անդամներից ընտրում է վարչական խորհրդի նախագահ և նախագահի տեղակալ: Վարչական խորհրդի նախագահը, նրա հանձնարարությամբ՝ նախագահի տեղակալը, նախագահում են խորհրդի նիստերում: Նրանց իրավասությունները և դրանց ժամկետները սահմանվում են Միության կանոնադրությամբ: Միության ֆինանսատնտեսական գործունեության վերահսկումն իրականացնելու նպատակով վարչական խորհուրդն ընտրում է վերստուգող հանձնաժողով:

Միության կանոնադրությամբ կարող է ստեղծվել վեճեր լուծող հանձնաժողով:

Միության գործադիր մարմինը տնօրինությունն է:

Վարչական խորհրդի անդամների, նախագահի, վերստուգող հանձնաժողովի և վեճեր լուծող հանձնաժողովի անդամների քանակը, լիազորությունների ժամկետները և ընտրության կարգը սահմանվում են Միության կանոնադրությամբ:

Վարչական խորհրդի անդամները և նախագահը, վերստուգող հանձնաժողովի անդամները և նախագահը, վեճեր լուծող հանձնաժողովի անդամները և նախագահը Միության վճարովի աշխատողներ չեն:

Հողված 27. Վարչական խորհուրդը

Միության վարչական խորհրդում յուրաքանչյուր անդամ Ընկերություն ունի Միության կանոնադրությամբ նախատեսված քանակով ներկայացուցիչ՝ 1-ական ձայնի իրավունքով:

Կանոնադրությամբ նախատեսված վարչական խորհրդի առաջին նիստը գումարվում է Միության պետական գրանցումից հետո՝ մերկամսյա ժամկետում:

Վարչական խորհրդի նիստերը գումարվում են ըստ անհրաժեշտության՝ առնվազն ամիսը մեկ անգամ՝ վարչական խորհրդի նախագահի, վարչական խորհրդի անդամների 1/3-ի, վերստուգող հանձնաժողովի, Կանոնակարգող խորհրդի նախաձեռնությամբ կամ կանոնադրությամբ նախատեսված այլ հիմքերով:

Միության վարչական խորհրդի բացառիկ իրավասությունները սահմանվում են սույն օրենքով և Միության կանոնադրությամբ:

Միության կանոնադրությամբ վարչական խորհրդին կարող են վերապահվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը չհակասող այլ լիազորություններ:

Միության վարչական խորհրդի բացառիկ իրավասություններն են՝

- ա) Միության կանոնադրությունը հաստատելը,
- բ) ֆինանսական հաշիվները և տարեկան հաշվետվությունները հաստատելը,
- գ) բյուջեն, աշխատանքային, շահագործման և վերանորոգումների պլանները հաստատելը,

- դ) ջրաբաշխման ու ոռոգման պլանները և ժամանակացույցը հաստատելը,
- ե) Միության կողմից գանձվող վճարները և տուգանքների չափը սահմանելը,
- զ) կանոնադրությունից բխող ներքին կանոնները և աշխատանքային կանոնակարգը հաստատելը,
- է) Միության սպասարկման տարածքում գտնվող անդամ և ոչ անդամ ընկերությունների հետ ոռոգման ջրի մատակարարման պայմանագիրը կնքելը,
- ը) շահագործման և վերանորոգման կամ այլ նպատակներով պայմանագրեր կնքելը,
- թ) Միության ֆինանսական և հաշվապահական գործունեությունը վերահսկելը,
- ժ) վերստուգող և վեճեր լուծող հանձնաժողով ընտրելը, վերստուգող հանձնաժողովի հաշվետվությունները քննարկելը և հաստատելը,
- ժա) Միության գործադիր մարմնի կառուցվածքը, վճարովի աշխատողների հաստիքացուցակը սահմանելը և որոշելը,
- ժբ) գործադիր տնօրենին և գլխավոր հաշվապահին աշխատանքի ընդունելը,
- ժգ) Միության անդամների նկատմամբ պատասխանատվության միջոցներ սահմանելը,
- ժդ) շահագործման և վերանորոգման պլաններին համապատասխան՝ իր որոշմամբ այդ ուղղությամբ կնքվող պայմանագրերին հավանություն տալը,
- ժե) ներքին կանոններին և աշխատանքային կանոնակարգի կատարմանը հետևելը:

Միության վարչական խորհուրդն իրականացնում է կանոնադրությամբ սահմանված այլ խնդիրներ:

Վարչական խորհրդի որոշումներն ընդունվում են անդամների ընդհանուր ձայների պարզ մեծամասնությամբ: Վարչական խորհուրդը կանոնադրության և բյուջեի հաստատման, դրանց մեջ լրացումների և փոփոխությունների կատարման վերաբերյալ որոշումներն ընդունում է վարչական խորհրդի անդամների ընդհանուր ձայների 3/4-ով: Վարչական խորհրդի նախագահը քվեարկում է ձայների հավասարության դեպքում: Վարչական խորհուրդն իրավագոր է, եթե նիստին մասնակցում է անդամների առնվազն 2/3-ը:

Վարչական խորհրդի լիազորությունները չեն կարող փոխանցվել այլ մարմնի:

Հոդված 28. Միության աշխատակազմը

Միությունը կարող է ունենալ վճարովի աշխատակազմ և տեխնիկական աշխատողներ: Վճարովի աշխատակազմի կառուցվածքը, քանակը, նրանց պաշտոնավարման ժամկետները սահմանվում են Միության կանոնադրությամբ:

Վճարովի աշխատողներն աշխատանքի են ընդունվում և աշխատանքից ազատվում են գործադիր տնօրենի հրամանով՝ վարչական խորհրդի հաստատած հաստիքացուցակի համաձայն:

Վճարովի աշխատողների աշխատանքային հարաբերությունները կազավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

Միության վճարովի աշխատողներն իրավունք չունեն ընտրվել Միության վարչական խորհրդում, վերստուգող հանձնաժողովում կամ վեճեր լուծող հանձնաժողովում:

Հոդված 29. Միության անդամներից գանձվող վճարների տեսակները և վճարման ժամկետները

Միության կանոնադրությամբ սահմանվում են Միության անդամներից գանձվող վճարների հետևյալ տեսակները.

ա) մատակարարված ոռոգման ջրի համար,

բ) Միության կողմից շահագործվող ոռոգման համակարգի շահագործման, վերանորոգման և պահպանման ծախսերը,

գ) անդամավճարները:

Միության վարչական խորհրդի որոշմամբ կարող են սահմանվել Միության կողմից գանձվող այլ վճարների տեսակներ: Այլ նպատակներով իրականացվող գանձումներ կարող են նախատեսվել նաև Միության կանոնադրությամբ:

Միության և Ընկերության միջև ոռոգման ջրի մատակարարման պայմանագրով կարող է նախատեսվել պարտավորության կատարման ապահովման միջոց՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով սահմանված կարգով:

Միության ոչ անդամ ընկերություններին ոռոգման ջուրը մատակարարվում է պայմանագրային հիմունքով, դրանով մատակարարվող ջրի գինը չի կարող գերազանցել Միության անդամ ընկերությունների համար նախատեսված ջրի գնի 150 %-ը:

Հոդված 30. Միության գույքը

Միության գույքը կազմավորվում է անդամավճարներից, մուտքի վճարներից, Ընկերություններին մատակարարված ջրի դիմաց ստացված վճարներից, այլ վճարներից և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ չարգելված այլ աղբյուրներից:

Միության անդամ Ընկերությունը Միության գույքի նկատմամբ բաժնի իրավունք չունի:

Կանոնակարգող խորհրդի եզրակացության հիման վրա համապատասխան լիազորություններ ունեցող մարմինների որոշմամբ Միության կանոնադրությամբ նախատեսված սպասարկման տարածքում գտնվող հիմնական ջրատարը և/ կամ ջրավազանն օգտագործման իրավունքով հանձնվում են Միությանը:

Ոռոգման համակարգերի օգտագործման իրավունքը փոխանցելու վերաբերյալ կնքվում է գույքի անհատույց օգտագործման պայմանագիր ոչ պակաս, քան հիսուն տարի ժամկետով՝ Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսդրությամբ սահմանված կարգով:

Հողված 31. Միությանից անդամների դուրս գալը և անդամներին հեռացնելու հիմքերը

Միության անդամներն իրավունք ունեն դուրս գալ Միությունից: Կանոնադրությամբ կարող է նախատեսվել, որ Միությունից դուրս գալ ցանկացող անդամներն այդ իրավունքից կարող են օգտվել միայն ոռոգման շրջանի վերջում: Եթե Միությունն այդ անդամի համար կատարել է ծախսեր ոռոգման համակարգի նախագծման, շինարարության կամ շահագործման նպատակով, ապա այդ անդամը կարող է Միությունից դուրս գալ միայն այդ ծախսերի՝ իր մասի համարժեք գումարը հատուցելուց հետո:

Միության անդամները կարող են հեռացվել Միությունից վարչական խորհրդի որոշմամբ, եթե՝

ա) պարբերաբար խախտել են Միության կանոնադրության և ներքին կանոնակարգի պայմանները,

բ) առանց հարգելի պատճառների ուշացրել են Միությանը կատարվող գանձումների վճարումը,

գ) հրաժարվել են գանձումները վճարելուց,

դ) հրաժարվել են վերականգնել Միությանն իրենց մեղքով հասցված վնասները:

Միությունից հեռացվող Ընկերությունը պարտավոր է վճարել Միությանն ունեցած իր պարտքերը: Այդպիսի Ընկերությունը ջրի մատակարարումը կարող է մերժվել մինչև բոլոր վարձերի վճարումը:

ԳԼՈՒԽ 4. ԸՆԿԵՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՄԻՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ

Հողված 32. Կանոնակարգող խորհուրդը

Ընկերության և Միության գործունեությունը համակարգելու նպատակով Հայաստանի Հանրապետության Կառավարությունն ստեղծում է Կանոնակարգող խորհուրդ:

Կանոնակարգող խորհրդի կազմը որոշում և կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Կանոնակարգող խորհուրդն իր գործունեությունն իրականացնում է գործադիր մարմնի միջոցով, որի կառուցվածքը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Կանոնակարգող խորհրդի կանոնադրությունը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը:

Կանոնակարգող խորհուրդն իր խնդիրներն իրականացնելու համար՝

ա) Ընկերության և Միության կողմից սպասարկվող տարածքների տեխնիկատնտեսական նպատակահարմարության վերաբերյալ տալիս է գրավոր եզրակացություն,

բ) տալիս է իրավաբանական, հաշվապահական և տեխնիկական հարցերով խորհրդատվություն,

գ) ըստ հաստատված ձևերի վարում է Ընկերության և Միության գործունեության վերաբերյալ գրանցամատյանները,

դ) Ընկերության և Միության անդամների գրավոր դիմումի հիման վրա իրականացնում է ստուգումներ՝ իր աշխատակիցների կամ անկախ աուդիտորների միջոցով,

ե) իրականացնում է սույն օրենքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ խնդիրներ:

Ընկերության և Միության ղեկավար անձինք պատասխանատու են Կանոնակարգող խորհրդին տված տեղեկությունների ճշտության և դրանք սահմանված ժամկետներում ներկայացնելու համար:

Հոդված 33. Ընկերության և Միության գործավարական փաստաթղթերը

Ընկերությունն իր գործունեությունն իրականացնելիս պետք է ունենա հետևյալ գործավարական փաստաթղթերը.

ա) Ընկերության անդամների գրանցամատյան, որը պետք է պարունակի Ընկերության յուրաքանչյուր անդամի հողատարածքի չափը և տեղադրությունը,

բ) Ընկերության կողմից ջուր ստացող Ընկերության ոչ անդամների գրանցամատյան, որը պետք է պարունակի յուրաքանչյուր ոչ անդամի հողատարածքի չափը և տեղադրությունը,

գ) ոռոգման տարածքի պլան,

դ) Ընկերության կողմից ստացված ջրի ծավալի տվյալների գրանցամատյան,

ե) Ընկերության անդամներին և ոչ անդամներին տրված ջրումների քանակի գրանցամատյան,

զ) գանձված գումարների և պարտքերի գրանցամատյան,

է) ժողովի և վարչական խորհրդի արձանագրությունների գրանցամատյաններ,

ը) գործարքների և պայմանագրերի գրանցամատյան,

թ) Ընկերությանը փոխանցված մայր և/կամ միջտնտեսային ջրանցքի և/կամ ոռոգման համակարգի տեխնիկական վիճակի ստուգումների և զննումների գրանցամատյան:

Ընկերությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով վարում է հաշվապահական (հաշվառային) փաստաթղթերը և կազմում է այլ հաշվետվություններ:

Միությունն իր գործունեությունն իրականացնելիս պետք է ունենա հետևյալ գործավարական փաստաթղթերը.

ա) Միության անդամների գրանցամատյան, որը պետք է պարունակի Միության անդամ Ընկերության հողատարածքների չափերը և տեղադրությունը,

բ) Միության անդամ չհամարվող, բայց Միության սպասարկման տարածքում ջրային աղբյուրներ շահագործող Ընկերությունների ցուցակ, որը պետք է

պարունակի յուրաքանչյուր ոչ անդամ Ընկերության հողատարածքի չափը և տեղադրությունը,

գ) Միության կողմից շահագործվող ու պահպանվող մայր և/կամ միջտնտեսային ջրանցքի, ջրամբարի և այլ ջրային աղբյուրների պլան,

դ) Միությունից ջուր ստացող ոչ անդամ Ընկերությունների ցուցակ,

ե) Միության անդամ Ընկերություններին և ոչ անդամ Ընկերություններին տրված ջրի և ոռոգումների քանակի գրանցամատյան,

զ) վարձավճարների մուծումների գրանցամատյան,

է) վարչական խորհրդի արձանագրությունների գրանցամատյան,

ը) գործարքների և պայմանագրերի գրանցամատյան,

թ) Միությանը փոխանցված մայր և/կամ միջտնտեսային ջրանցքի և/կամ ոռոգման համակարգի տեխնիկական վիճակի ստուգումների և զննումների գրանցամատյան:

Միությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված կարգով վարում է հաշվապահական (հաշվառային) փաստաթղթերը և կազմում է այլ հաշվետվություններ:

Հոդված 34. Ընկերության և Միության հաշիվների ստուգումը (աուդիտը) և տարեկան հաշվետվությունները

1. Ընկերությունը կամ Միությունը Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կազմում և ներկայացնում է տարեկան հաշվապահական հաշվեկշիռ և հաշվետվություններ:

2. Տարեկան հաշվապահական հաշվեկշիռը պետք է հաստատի՝

ա) Ընկերության դեպքում՝ ժողովը,

բ) Միության դեպքում՝ վարչական խորհուրդը:

3. Ընկերությունը և Միությունը պարտավոր են ֆինանսական տարվա ավարտից հետո՝ երեք ամսվա ընթացքում, ըստ Կանոնակարգող խորհրդի սահմանած ձևի կազմել տարեկան հաշվետվություն:

4. Կանոնակարգող խորհուրդը կարող է ուսումնասիրել Ընկերության հաշվապահական փաստաթղթերը (ներառյալ՝ տարեկան հաշվապահական հաշվեկշիռը, եկամուտների և ծախսերի մասին հաշվետվությունները):

Հոդված 35. Ընկերության և Միության վերահսկողությունը

1. Կանոնակարգող խորհուրդը կարող է Ընկերությունից կամ Միությունից պահանջել սույն օրենքով նախատեսված հաշվապահական փաստաթղթերի ու գրանցամատյանների պատճենները:

2. Կանոնակարգող խորհրդի լիազորած աշխատակիցը կարող է ստուգել Ընկերության և Միության հաշվապահական փաստաթղթերը կամ գրանցամատյանները, եթե՝

- ա) Ընկերության կամ Միության անդամների 1/3-ը գրավոր պահանջում է,
- բ) Ընկերության կամ Միության հաշիվները կամ տարեկան հաշվետվությունն ուսումնասիրելիս Կանոնակարգող խորհուրդը հայտնաբերում է ֆինանսական ոչ ճիշտ կամ անկանոն գործընթացի ապացույցներ:

3. Եթե Կանոնակարգող խորհուրդը, սուղիտի և ստուգումների արդյունքում, հայտնաբերում է Ընկերության ֆինանսական գործունեության անճշտություններ, ապա վարչական խորհրդից կարող է պահանջել հրավիրել Ընկերության ժողով, որտեղ Կանոնակարգող խորհուրդը ժողովի անդամներին ներկայացնում է հայտնաբերված անճշտությունները: Եթե վարչական խորհուրդը 30 օրվա ընթացքում չի հրավիրում Ընկերության ժողով, ապա Կանոնակարգող խորհուրդը կարող է դադարեցնել վարչական խորհրդի լիազորությունները և ինքը հրավիրել Ընկերության ժողով:

4. Եթե դադարեցված են վարչական խորհրդի լիազորությունները, ապա Կանոնակարգող խորհուրդը կարող է դադարեցնել Ընկերության տնօրենի լիազորությունները և նշանակել ժամանակավոր տնօրեն, քանի դեռ Ընկերության ժողովը նոր վարչական խորհուրդ չի ընտրել:

5. Եթե Կանոնակարգող խորհուրդը, համաձայն կայացրած սուղիտի (ստուգումների), գտնում է Միության ֆինանսական գործունեության մեջ անճշտություններ, ապա վարչական խորհրդից պահանջում է գումարել նիստ, որտեղ Կանոնակարգող խորհուրդը վարչական խորհրդի անդամներին ներկայացնում է հայտնաբերված անճշտությունները և առաջարկում է մշակել միջոցառումների ծրագիր ու անճշտությունները վերացնել իր սահմանած ժամկետում: Եթե վարչական խորհուրդը միջոցառումների ծրագրին համապատասխան անճշտությունները չի վերացնում, ապա Կանոնակարգող խորհուրդը կարող է կասեցնել վարչական խորհրդի լիազորությունները:

6. Եթե վարչական խորհրդի լիազորությունները կասեցված են, ապա Կանոնակարգող խորհուրդը կարող է դադարեցնել Միության տնօրենի լիազորությունները և նշանակել Միության ժամանակավոր տնօրեն, որն իրականացնում է Կանոնակարգող խորհրդի մշակած միջոցառումների ծրագիրը:

Հոդված 36. Սերվիսուտները

1. Ընկերությունը կամ Միությունը Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքով և Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով կարող են օգտվել սերվիսուտի իրավունքից:

2. Ընկերության կամ Միության լիազորած անձը կարող է Ընկերության կամ Միության օգտագործման ներքո գտնվող ոռոգման համակարգը զննելու կամ աշխատանքներ կատարելու նպատակով մուտք գործել ցանկացած հողատարածք:

Հողված 37. Ընկերության և Միության հատուկ ու պահուստային ֆոնդերը

Ընկերությունը կամ Միությունը կարող են ունենալ հատուկ կամ պահուստային ֆոնդ և բացել առանձին բանկային հաշիվներ հետևյալ նպատակներով.

ա) Ընկերության կամ Միության սպասարկման տարածքում ոռոգման համակարգերի վերանորոգման, վերականգնման և զարգացման աշխատանքների կատարման համար,

բ) հրատապ ծախսեր կատարելու համար:

Պահուստային ֆոնդի կազմավորման կարգը սահմանվում է Ընկերության կամ Միության կանոնադրությամբ:

Հողված 38. Ընկերության և Միության վերակազմակերպումը

Ընկերությունները և Միությունները կարող են վերակազմակերպվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով՝ Կանոնակարգող խորհրդի համաձայնությամբ:

Վերակազմակերպումը կատարվում է Ընկերության և Միության հիմնադրման համար սույն օրենքով սահմանված դրույթներին համապատասխան:

Հողված 39. Ընկերության և Միության լուծարումը

Ընկերությունը կամ Միությունը կարող է լուծարվել Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված հիմքերով և կարգով:

Ընկերության կամ Միության լուծարման դեպքում պարտքերը մարելուց հետո մնացած գույքը լուծարային հանձնաժողովի որոշմամբ բաշխվում է Ընկերության կամ Միության անդամների միջև, բացառությամբ անհատույց օգտագործման իրավունքով Ընկերությանը կամ Միությանը փոխանցված համայնքային կամ պետական սեփականություն համարվող ոռոգման ցանցերի և կառույցների:

ԳԼՈՒԽ 5. ԵԶՐԱՓՈՒԿ ԵՎ ԱՆՑՈՒՄԱՅԻՆ ԴՐՈՒՅԹՆԵՐ

Հողված 40. Սույն օրենքը գործողության մեջ դնելու կարգը

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում հրապարակման պահից երեք ամիս հետո:
2. Սույն օրենքը կիրառվում է օրենքը գործողության մեջ դնելուց հետո ծագած՝ Ընկերությունների և Միությունների ստեղծման և գործունեության հետ կապված հարաբերությունների նկատմամբ:
3. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ոռոգման համակարգի շահագործումն ու պահպանումն իրականացնող կազմակերպությունների գործունեությունը

կարգավորող նախկինում հրապարակված օրենքները և նորմատիվ իրավական մյուս ակտերը կիրառվում են սույն օրենքին չհակասող մասով:

4. Հայաստանի Հանրապետության Կառավարությունը սույն օրենքն ուժի մեջ մտնելու պահից երկամսյա ժամկետում՝

ա) հաստատում է ոռոգման համակարգերն Ընկերություններին և Միություններին հանձնելու և սեփականատերերի կողմից այդ համակարգերի հսկողությունը (վերահսկողությունը) ապահովելու կարգը,

բ) հաստատում է ոռոգման համակարգերը Ընկերություններին և Միություններին փոխանցելու մասին պայմանագրի տիպային ձևը:

5. Սույն օրենքը հրապարակվելուց հետո՝ եռամսյա ժամկետում, Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է Կանոնակարգող խորհրդի կազմն ու Կանոնակարգող խորհրդի գործադիր մարմնի կառուցվածքը, գործունեության կարգը և ֆինանսավորման աղբյուրները:

6. Մինչև սույն օրենքի ուժի մեջ մտնելը ստեղծված ջուր սպառողների (ջրօգտագործողների) կոոպերատիվները և ընկերությունները (ՋՄԿ, ՋՍԸ) պարտավոր են մինչև 2003թ. դեկտեմբերի 31-ը վերակազմակերպվել սույն օրենքով սահմանված ջրօգտագործողների ընկերությունների: Նշված ժամկետում չվերակազմակերպված կոոպերատիվները և ընկերությունները լուծարվում են օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան

2002թ. հուլիսի 1

Երևան

ՀՕ-374-Ն

**ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԿԱՆՈՆ-
ՆԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ, ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ՕՐԻՆԱԿԵԼԻ ՁԵՎԸ ՍԱՀՄԱՆԵԼՈՒ ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ
ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2000 Թ. ՀՈՒԼԻՍԻ 27-Ի N
418 ՈՐՈՇՈՒՄՆ ՈՒԺԸ ԿՈՐՑՐԱԾ ՃԱՆԱԶԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

040.2121.07.01.03.

«Վավերացնում են» Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյան

7 հունվարի 2003 թվականի

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

26-րդ դեկտեմբերի 2002 թ.
N-2121-Ն

Հայաստանի Հանրապետության Ջրային օրենսգրքի 121-րդ հոդվածի 5-րդ մասի 44 կետին համապատասխան Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

1. Հաստատել ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները՝ համաձայն N 1 հավելվածի:
2. Սահմանել ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:
3. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին և Հայաստանի Հանրապետության Կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի նախագահին մեկամսյա ժամկետում ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների գործունեությունը կանոնակարգող խորհրդի հաստատմանը ներկայացնել ջրօգտագործողների ընկերություններում ոռոգման ջրի օգտագործման կանոնակարգը:
4. Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարին՝ եռամսյա ժամկետում՝ սահմանված կարգով, Հայաստանի Հանրապետության Կառավարություն ներկայացնել առաջարկություն սակավաջրության դեպքերում ոռոգման ջրի առաջնահերթ օգտագործման կարգի վերաբերյալ:
5. Ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000թ. հուլիսի 27-ի «Հայաստանի Հանրապետությունում ոռոգման ջրի մատակարարման, օգտագործման, հաշվառման և հաշվետվության կանոնները հաստատելու մասին» թիվ 418 որոշումը:
6. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Ա. Մարգարյան

30-րդ դեկտեմբերի 2002 թ.

Երևան

1 ՀՀՊՏ 2000 N 18 (116), 08.08.00

2 ՀՀՊՏ 2002 N 24 (199), 10.07.02

Հավելված N 1

ՀՀ կառավարության 2002 թ.-ի դեկտեմբերի 26-ի N 2121-Ն որոշման

ԿԱՆՈՆՆԵՐ՝ ՈՌՈԳՄԱՆ ԶՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԵՎ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ

I. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Ոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոններում (այսուհետ՝ կանոններ) օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները.

- ջրաղբյուր՝ երկրի մակերևութային և ստորերկրյա ջրեր (բնական գետեր, լճեր, առուներ, ճահիճներ, ստորերկրյա ջրավազաններ, արհեստական ջրամբարներ և այլն),
- ոռոգման ջուր՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար նախատեսված և ոռոգման ջրի ստանդարտներին համապատասխանող ջուր,
- ոռոգման համակարգ՝ ոռոգման և ցամաքորդային ջրանցքներ, խողովակաշարեր, հիդրոտեխնիկական կառուցվածքներ, հորեր, պոմպակայաններ, ջրամբարներ, լճակներ՝ ճանապարհներով, շենքերով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով, այդ թվում՝ ջրաէկոհամակարգերի պահպանման գոտիներ,
- ջրամատակարար ջրառ իրականացնող, ջուրն ամբարող և/կամ այն ջրօգտագործողներին մատակարարող անձ,
- ջրօգտագործող (բաժանորդ)՝ իրավաբանական կամ ֆիզիկական անձ, որը սահմանված կարգով ջրօգտագործման պայմանագիր է կնքել ջրամատակարարի հետ,
- ջրտուք՝ ջրամատակարարի կողմից ջրօգտագործողին (բաժանորդին) մատակարարված ջրի ծավալ,
- ջրի հորիզոն՝ ջրաչափական դիտակետով հոսող ջրի մակարդակ,
- ջրաչափական դիտակետ՝ հիդրոտեխնիկական կառույց, որի միջոցով կատարվում է հոսող ջրի ծավալի որոշում՝ տվյալ պահի համար,
- ջուր սպառող՝ ջրօգտագործողի սպասարկման տարածքում սեփականության կամ վարձակալության օգտագործման իրավունքով

ռոռգելի հողատարածք ունեցող ֆիզիկական կամ իրավաբանական անձ, որը հանդիսանում է ռոռգման ջուր սպառող վերջին օղակը և սահմանված կարգով կնքել է ջրօգտագործողի հետ ջրօգտագործման պայմանագիր,

- տեխնիկական պայմաններ՝ ջրաղբյուրին կամ ռոռգման համակարգին միանալու, սպառված ջուրը հաշվառելու, ռոռգման համակարգի հետագա անվտանգ և հուսալի շահագործումն ու ջրամատակարարումն ապահովելու նպատակով ջրամատակարարի կողմից առաջադրվող պայմաններ:

2. Կանոնները կարգավորում են ջրամատակարարների, ջրօգտագործողների (բաժանորդների) և ենթաջրօգտագործողների, ենթասպառողների (ենթաբաժանորդների) միջև փոխհարաբերությունները և պարտադիր են բոլոր կողմերի համար՝ անկախ նրանց գերատեսչական ենթակայությունից և կազմակերպական-իրավական տեսակից:

3. Ջրօգտագործողը ջրամատակարարի համար բաժանորդ է հանդիսանում նորմատիվ ակտերով սահմանված կարգով և տեխնիկական պայմաններին (N 1 ձևը կցվում է) համապատասխան ռոռգման համակարգին միանալուց, ռոռգման համակարգերի հաշվեկշռային պատկանելության, սպասարկման և շահագործման սահմանազատման ակտ (N 2 ձևը կցվում է) կնքելուց և ջրամատակարարի հետ ռոռգման ջրի մատակարարման պայմանագիր (այսուհետ պայմանագիր) կնքելուց հետո: Ջրամատակարարի և ջրօգտագործողի (բաժանորդի) միջև պայմանագիրը կնքվում է երեք տարվանից ոչ պակաս ժամկետով:

4. Ջրօգտագործողի (բաժանորդի) հետ նոր ռոռգման շրջանի համար ջրօգտագործման պայմանագիր է կնքվում ջրօգտագործման պլան-ժամանակացույցի և ջուր սպառողների հետ կնքված անհատական պայմանագրերի առկայության, պայմանագրի կնքմանը նախորդող տարվա ընթացքում մատակարարված ջրի դիմաց ջրօգտագործողի (բաժանորդի) կողմից ջրի վարձի առնվազն 75 %-ի վճարման, ինչպես նաև պայմանագրի կնքման պահի դրությամբ նախորդ տարիներից գոյացած պարտքերի մարման ժամանակացույցի կնքման և ջրամատակարարի կողմից ընդունելի երաշխիքի առկայության դեպքերում:

5. Ջրամատակարարի հաշվեկշռում կամ պայմանագրային հիմունքներով շահագործման տակ գտնվող ռոռգման համակարգերի և չափիչ-հաշվառող սարքերի տեխնիկական վիճակի, անկորուստ և ամբողջական պահպանման, անվտանգության տեխնիկայի ու շահագործման համար պարտավորությունը կրում է ջրամատակարարը:

6. Ջրօգտագործողի (բաժանորդի) հաշվեկշռում կամ պայմանագրային հիմունքներով շահագործման տակ գտնվող ռոռգման համակարգերի և չափիչ-հաշվառող սարքերի տեխնիկական վիճակի, անկորուստ և ամբողջական պահպանման, անվտանգության տեխնիկայի ու շահագործման համար պարտավորությունը կրում է ջրօգտագործողը (բաժանորդը):

Ջրօգտագործողի (բաժանորդի) ռոռգման համակարգի սպասարկումը պայմանագրային հիմունքներով կարող են իրականացնել նաև այլ իրավաբանական կամ ֆիզիկական անձինք:

7. Ջրամատակարարը մատակարարված ջրի ծավալների և դրանց դիմաց վճարումների հաշվառման համար յուրաքանչյուր ջրօգտագործողի (բաժանորդի) անունով բացում է բաժանորդի անձնական հաշվառման քարտ (N 3 ձևը կցվում է):

Ջրօգտագործողին (բաժանորդին) վերաբերող՝ կանոնների բոլոր դրույթները հավասարապես տարածվում են նաև ենթաբաժանորդի վրա, եթե վերջինիս վերաբերյալ առանձին նշում չի կատարվում:

II. ՈՌՈԳՄԱՆ ՀԱՍՏԱԿԱՐԳԻՆ ՄԻԱՆԱԼՈՒ (ՋՐԱՌԻ) ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

8. Ոռոգման համակարգին միանալու (ջրառի) տեխնիկական պայմանները տրվում են ջրամատակարարի կողմից:

9. Ջրամատակարարը ջրօգտագործողի (բաժանորդի) հաշվեկշռում գտնվող ոռոգման համակարգին միանալու համար մեկ այլ ջրօգտագործողի տեխնիկական պայմաններ կարող է տալ միայն ջրօգտագործողի (բաժանորդի) գրավոր համաձայնության դեպքում:

10. Նոր կառուցվող ոռոգման համակարգերին միանալու (ջրառի) համար տրված տեխնիկական պայմանների գործողության ժամկետը մեկ տարի է: Նշված ժամանակահատվածում կառուցման աշխատանքներ չիրականացվելու դեպքում այն կորցնում է իր ուժը:

11. Տեխնիկական պայմանները տրվում են դիմումը ստացվելուց հետո մեկ ամսվա ընթացքում:

12. Այլ անձի (անձանց) հետ առնչվող տեխնիկական պայմաններով սահմանված աշխատանքների իրականացումը ենթակա է շահագրգիռ կողմերի հետ նախօրոք համաձայնեցման:

13. Ջրօգտագործողի (բաժանորդի) ոռոգման համակարգում միացման տեխնիկական պայմաններից շեղումներ հայտնաբերվելու դեպքում ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումն անմիջապես դադարեցվում է՝ մինչև հայտնաբերված խախտումների վերացումը:

III. ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՋՐԻ ԾԱՎԱԼԻ ՀԱՇՎԱՌՈՒՄԸ, ԴՐԱ ԴԻՄԱՑ ՎՃԱՐՄԱՆ ԵՆԹԱԿԱ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՇՎԱՐԿՈՒՄԸ ԵՎ ՎՃԱՐՈՒՄԸ

14. Ոռոգման ջուրը վճարովի է և մատակարարման բոլոր կետերում ենթակա է հաշվառման:

Ջրամատակարարը պարտավոր է հաշվառել ջրադրյուրից իր կողմից իրականացված ջրառի, յուրաքանչյուր ջրօգտագործողին (բաժանորդին) մատակարարված ջրի ծավալի, դրա դիմաց վճարման ենթակա գումարի, վճարված գումարի և պարտքի չափերը:

15. Մատակարարված ջրի ծավալը և դրա դիմաց վճարման ենթակա գումարը հաշվարկվում են տեխնիկական պայմանների համաձայն տեղադրված չափիչ-հաշվառող սարքերի միջոցով ու գործող սակագներով (եթե պայմանագրով այլ պայման նախատեսված չէ): Ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին ոռոգման ջուր մատակարարելու համար սահմանազատման կետում չափիչ-հաշվառող սարքերը տեղակայվում (կառուցվում) են ջրամատակարարի հաշվին:

Ջրամատակարարի կողմից ջրօգտագործողի (բաժանորդի) ֆինանսավորմամբ չափիչ-հաշվառող սարքերի տեղակայման (կառուցման) աշխատանքների

իրականացման դեպքում տվյալ չափիչ-հաշվառող սարքը դառնում է ջրամատակարարի սեփականությունը, իսկ ջրօգտագործողի (բաժանորդի) կատարած ծախսի փոխհատուցումը կատարվելու է 2 տարվա ընթացքում գանձվելիք ոռոգման ջրի վարձի հաշվին:

16. Ջրամատակարարը և ջրօգտագործողը (բաժանորդը) և/կամ նրանց ներկայացուցիչները, պայմանագրով նախատեսված հաճախականությամբ, տասնօրյակային գրառումների համար նախատեսված ձևաթղթում յուրաքանչյուր օր կատարում են մատակարարված ջրի ծավալի գրառում:

Գրառումներն ամփոփվում են յուրաքանչյուր 10 օրը մեկ անգամ՝ յուրաքանչյուր տասնօրյակի հաջորդ օրը, և վավերացվում ջրամատակարարի և ջրօգտագործողի (բաժանորդի) կողմից: Ջրամատակարարի կամ ջրօգտագործողի (բաժանորդի) կողմից 2 օրվա ընթացքում այն չվավերացվելու դեպքում հիմք է ընդունվում նրանց ներկայացուցիչների կողմից գրանցված ջրի ծավալը:

17. Ջրօգտագործողը (բաժանորդը) տվյալ ամսվա մատակարարված ջրի դիմաց վճարման ենթակա գումարը փոխանցում է ջրամատակարարի բանկային հաշվին՝ վճարման փաստաթղթերը (տասնօրյակային ակտ-օրագրերի օրինակները, N 4 ձևը կցվում է) ստացվելուց հետո 10 բանկային օրվա ընթացքում, եթե պայմանագրով այլ բան նախատեսված չէ:

Ջրամատակարարը և ջրօգտագործողը յուրաքանչյուր ամսվա հաջորդող ամսվա մինչև 20-ը կնքում են մատակարարված ոռոգման ջրի դիմաց փոխադարձ հաշվարկների ստուգման ակտ (N 5 ձևը կցվում է):

18. 100 %-ից պակաս վճարում կատարած ջրօգտագործողը (բաժանորդը) պարտավոր է ջրամատակարարին ներկայացնել իր ջրօգտագործողների (բաժանորդների) կամ ջուր սպառողների պարտքացուցակը:

19. Վճարման փաստաթղթերում կամ չափիչ-հաշվառող սարքերի ցուցմունքների գրառման սխալի հայտնաբերման դեպքում կատարվում է վերահաշվարկ: Ջրօգտագործողի (բաժանորդի) դիմելու օրվանից 5 օրվա ընթացքում ջրամատակարարը (ջրօգտագործողի (բաժանորդի) ցանկության դեպքում նաև նրա մասնակցությամբ) պարտավոր է ստուգել իր գրառումները, անհրաժեշտության դեպքում՝ նաև չափիչ-հաշվառող սարքերը և ստուգման արդյունքների մասին գրավոր հայտնել ջրօգտագործողին (բաժանորդին):

Վճարման փաստաթղթերում գրառման սխալը հաստատվելու դեպքում ջրամատակարարը պարտավոր է հաջորդ տասնօրյակի ընթացքում ուղղել սխալը և ավելի գանձված գումարը վերադարձնել ջրօգտագործողին (բաժանորդին) կամ նրա համաձայնությամբ այդ գումարը ձևակերպել որպես կանխավճար, իսկ հակառակ դեպքում՝ ջրօգտագործողին (բաժանորդին) ներկայացնել նոր վճարման փաստաթուղթ: Ավելի գանձված գումարը ջրօգտագործողին (բաժանորդին) է վերադարձվում սխալի հաստատման պահից 10 օրվա ընթացքում: Նոր վճարման փաստաթղթով վճարումը կատարվում է կանոնների 17-րդ կետով սահմանված կարգով:

Չափիչ-հաշվառող սարքերի աշխատանքի սխալի հայտնաբերման դեպքում ջրամատակարարը չափիչ-հաշվառող սարքերի տեխնիկական վիճակի վերջին ստուգման օրվանից հետո ընկած ժամանակահատվածի համար, փաստացի

ջրամատակարարման ժամանակացույցի համաձայն, պարտավոր է կատարել ջրաքանակի վերահաշվարկ՝ բայց ոչ ավելի, քան վերջին մեկ ամսվա համար:

Հափիչ-հաշվառող սարքի ցուցմունքների շեղումները թույլատրելի են և չեն պահանջում մատակարարված ջրի ծավալի ու դրա դիմաց վճարման ենթակա գումարի վերահաշվարկ, եթե շեղումները գտնվում են չափիչ-հաշվառող սարքի ճշտության դասով պայմանավորված տիրույթում:

20. Ջրօգտագործողի (բաժանորդի) կողմից չափիչ-հաշվառող սարքերի ցուցմունքների, հետևաբար և օգտագործված ջրի ծավալի նվազեցման նպատակով չափիչ-հաշվառող սարքերի բնականոն աշխատանքի խախտման, չափիչ-հաշվառող սարքերի կողանցումով ջրընդունման, չափիչ-հաշվառող սարքերի կապարակնիքները վնասվելու (պոկվելու, կեղծվելու) և այլ միտումնավոր խախտումների դեպքում ջրամատակարարը խախտման հայտնաբերման պահին ջրօգտագործողի (բաժանորդի) ներկայացուցչի հետ համատեղ արձանագրում է խախտումը և կազմում կանոնների խախտման ակտ (N 6 ձևը կցվում է): Կանոնների խախտման ակտը հատուկ հաշվառման փաստաթուղթ է և հիմք է հանդիսանում ջրօգտագործողի (բաժանորդի) օգտագործած ջրի ծավալի վերահաշվարկման (ճշգրտման) համար:

Ջրօգտագործողի (բաժանորդի) չհամաձայնելու դեպքում ակտում դրա մասին կատարվում է համապատասխան նշում:

Ջրօգտագործողի (բաժանորդի) մեղքով խափանված չափիչ-հաշվառող սարքերը վերականգնվում են ջրօգտագործողի (բաժանորդի) հաշվին, իսկ մինչև չափիչ-հաշվառող սարքերի վերականգնումը ջրամատակարարումն իրականացվում է ջրաչափական այլ ընդունված մեթոդներով (հաշվարկային՝ ըստ ջրի հորիզոնի, ջրանցքի կամ խողովակի լայնական կտրվածքի, ջրի արագության և այլն): Կանոնների խախտման մասին ակտի հիման վրա հաշվարկված գումարը ենթակա է վճարման ոչ ուշ, քան 30 օրվա ընթացքում, հակառակ դեպքում ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումը դադարեցվում է, իսկ ջրամատակարարը հաշվարկված գումարը զանձում է օրենքով սահմանված կարգով:

Ջրամատակարարի մեղքով խափանված չափիչ-հաշվառող սարքերը վերականգնվում են ջրամատակարարի կողմից հնարավորին սեղմ ժամկետում, իսկ մինչև վերականգնումը ջրի հաշվառումն իրականացվում է ջրաչափական այլ մեթոդներով:

Ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումը վերականգնվում է կանոնների 26-րդ կետով սահմանված կարգով:

21. Ջրամատակարարի և ջրօգտագործողի (բաժանորդի) և/կամ նրանց ներկայացուցիչների կողմից ջրաքանակի միտումնավոր սխալ գրառումների հայտնաբերման դեպքն առաջացնում է պատասխանատվություն՝ օրենքով սահմանված կարգով:

IV. ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ, ՄԱՀՄԱՆԱՓԱԿՄԱՆ ԵՎ ԴԱԴԱՐԵՑՄԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐԸ

22. Ջրադրյուրից ջրօգտագործումն իրականացվում է օրենքով սահմանված կարգով՝ տրված ջրօգտագործման թույլտվության առկայության դեպքում:

23. Ջրօգտագործողի (բաժանորդի) ջրի մատակարարումն իրականացվում է ըստ պայմանագրի, դրա անբաժանելի մասը կազմող ջրօգտագործման պլան-ժամանակացույցի և հայտի (N 7 ձևը կցվում է): Ջրօգտագործման պլան-ժամանակացույցը կազմում է ջրօգտագործողը (բաժանորդը) յուրաքանչյուր ոռոգման համակարգի համար առանձին՝ հիմք ընդունելով հողատարածքի չափը, դրա վրա մշակվող գյուղատնտեսական մշակաբույսերի տեսակներն ըստ զբաղեցրած տարածքների, ջրման նորմաները և ժամկետները, ինչպես նաև իր ոռոգման համակարգերում առկա կորուստները:

24. Ջրօգտագործումը պլանավորվում է՝ հաշվի առնելով ջրադեյուրի ջրատվությունը և ոռոգման համակարգերի տեխնիկական հնարավորությունները (գերբեռնվածությունը և թերբեռնվածությունը):

Մեխանիկական եղանակով ջրամատակարարումը պլանավորվում է ըստ ստացված հայտերի՝ պոմպակայանի կամ պոմպակայանների համալիրի պոմպային ագրեգատների արտադրողականությանը համապատասխան:

Մեխանիկական եղանակով ջրամատակարարման հայտը համապատասխանեցվում է պոմպակայանի կամ պոմպակայանների համալիրի պոմպային ագրեգատների արտադրողականությանը:

Ոչ շուրջօրյա ջրամատակարարման հայտ ներկայացվելու դեպքում ջրամատակարարումն իրականացվում է՝ ելնելով ջրամատակարարի տեխնիկական հնարավորություններից:

Ջրադեյուրների սակավաջրության դեպքում ոռոգման ջրի մատակարարման պայմանագիր կնքվում է «առաջնահերթ ջրօգտագործման մասին» կարգի համաձայն, որը հաստատում է Հայաստանի Հանրապետության Կառավարությունը՝ Հայաստանի Հանրապետության գյուղատնտեսության նախարարության ներկայացմամբ:

25. Ջրամատակարարին իրավունք է վերապահվում դադարեցնելու ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումը՝ սահմանված կարգով 3 օր առաջ դրա մասին նրան գրավոր նախազգուշացնելուց (N 8 ձևը կցվում է) հետո, եթե նա՝

ա) խախտել է կանոնների 17-րդ և 20-րդ կետերի պահանջները,

բ) խախտել է պայմանագրի անբաժանելի մաս հանդիսացող պարտքերի մարման ժամանակացույցը:

Ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումը կարող է չդադարեցվել նրա կողմից ջրամատակարարի համար ընդունելի վճարման երաշխիքներ ներկայացվելու և պարտքերի մարման նոր ժամանակացույց կազմվելու դեպքերում:

26. Ջրօգտագործողի (բաժանորդի) ջրամատակարարումը վերականգնվում է պարտքերի վճարումը հաստատող փաստաթուղթը ջրամատակարարին ներկայացվելուց հետո՝ մինչև 3 օրվա ընթացքում:

27. Ջրօգտագործողը (բաժանորդը) պարտավոր է ջրօգտագործման պլան-ժամանակացույցով նախատեսված ջուրը ստանալու, ջրից հրաժարվելու կամ

նախատեսվածից պակաս ջուր պահանջելու մասին 3 օր առաջ ջրամատակարարին ներկայացնել գրավոր հայտ:

Հայտը հատուկ հաշվառման փաստաթուղթ է, որը կազմվում է 2 օրինակից և ներկայացվելու պահին գրանցվում է ջրամատակարարի կողմից: Ջրօգտագործողի (բաժանորդի) կողմից առանց հայտի ջրից հրաժարվելու կամ նախատեսվածից պակաս ջուր մատակարարելու պահանջի դեպքում՝ ջրամատակարարին իրավունք է վերապահվում ջրօգտագործողի (բաժանորդի) հաշվին հաշվարկել այդ ժամանակահատվածում մատակարարված ջրի ծավալը՝ բայց 3-օրյա ժամկետից ոչ ավելի:

28. Ջրօգտագործողի (բաժանորդի) գրավոր հայտի համաձայն ջրօգտագործման պլան-ժամանակացույցով նախատեսվածից պակաս մատակարարված կամ չմատակարարված ջրաքանակը հետագայում ջրամատակարարի կողմից չի վերականգնվում: Նախատեսվածից ավելի ջուր մատակարարելու համար ջրօգտագործողի (բաժանորդի) ներկայացրած հայտը կարող է բավարարվել միայն ջրամատակարարի հնարավորությունների սահմաններում, ինչի մասին ներկայացված հայտի բավարարման կամ մերժման մասին ջրօգտագործողը (բաժանորդը) տեղեկացվում է՝ հայտը ջրամատակարարից ստանալուց հետո մեկ օրվա ընթացքում:

29. Ջրամատակարարումն իրականացվում է ջրտուքի կետում՝ ջրօգտագործողի (բաժանորդի) կամ նրա ներկայացուցչի ներկայության դեպքում:

Եթե օրվա ընթացքում փաստացի ջրամատակարարման տևողության կեսից ավելի ժամանակահատվածում մատակարարվելիք ջրի հորիզոնը նվազում է 20 %-ից ավելի չափով, ապա տվյալ օրվա մատակարարված ջրի ծավալը հաշվարկվում է նվազագույն հորիզոնին համապատասխան:

30. Եթե ջրամատակարարման սահմանափակումը և/կամ դադարեցումը կապված է ֆորս-մաժորային դեպքերի, ինչպես նաև ջրաղբյուրներում ու ոռոգման համակարգերում վթարների կանխման կամ դրանց վերացման անհետաձգելի տեխնիկական միջոցառումների իրականացման հետ, ապա այն կատարվում է առանց նախազուշացման: Ջրամատակարարման սահմանափակումների պատճառների մասին ջրամատակարարն անմիջապես տեղեկացնում է ջրօգտագործողին (բաժանորդին):

31. Ոռոգման ջրի ապօրինի մատակարարում և օգտագործում է համարվում՝

ա) մատակարարումը և օգտագործումն առանց պայմանագրի,

բ) մատակարարումը և օգտագործումն առանց չափիչ-հաշվառող սարքի կամ ջրաչափական այլ մեթոդների կիրառման տեխնիկական պայմանների խախտումներով (եթե պայմանագրով այլ պայմաններ նախատեսված չեն),

գ) ինքնակամ ջրամատակարարումը և ջրօգտագործումը (առանց հայտի կամ հայտի խախտմամբ):

Ապօրինի ջրամատակարարման և ջրօգտագործման նկատմամբ վերահսկողություն է իրականացնում Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեն:

Բոլոր ջրաղբյուրներից և ոռոգման համակարգերից ապօրինի միացված ոռոգման համակարգերը ենթակա են անհապաղ անջատման: Ապօրինի ջրօգտագործումն արձանագրվում է և կանոնների խախտման ակտով կատարվում է ջրաքանակի հաշվարկ՝ ջրաղբյուրում կամ ոռոգման

համակարգում ջրի առկայության փաստացի ժամանակահատվածի համար և ապօրինի միացման թողունակությամբ, բայց ոչ ավելի, քան մինչև ոռոգման շրջանի սկիզբը: Իսկ ապօրինի ջրօգտագործում իրականացնողները պատասխանատվության են ենթարկվում օրենքով սահմանված կարգով:

Հայաստանի Հանրապետության կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Ձև N 1

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ՊԱՅՄԱՆՆԵՐ

ոռոգման համակարգերին միանալու

Տրվում է ----- մարզի ----- համայնքի -----
բնակավայրի -----
Հողատարածքի գտնվելու վայրը (հասցեն) -----

հողատարածքի նկատմամբ սեփականության ձևը -----
հողատարածքի չափը (հա) և կարգը ----- :

Ոռոգման համակարգին միանալու պայմանները

Ջրառն իրականացնել -----
(նշվում է ջրառի կետը, միացվող ոռոգման համակարգի տեսակը և բոլոր տեխնիկական տվյալները) -----

Ջրաչափական հանգույցի տեսակը և տեղադրման վայրը -----

Ջրագծի օգտակար գործողության գործակիցը ոչ պակաս ----- :

Տեխնիկական պայմանները տրվում են մեկ տարի ժամկետով: Հատուկ պայմաններ: Առանց ջրամատակարարի կողմից լրացուցիչ տեխնիկական պայմանների տրման ոռոգման համակարգին այլ սպառողների համակարգեր միացնելու դեպքում ջրամատակարարումը կդադարեցվի: Հողային աշխատանքների նախագծերը շահագրգիռ կազմակերպությունների հետ չհամաձայնեցվելու դեպքում տեխնիկական պայմաններ չեն տրվում: Բոլոր շինմոնտաժային աշխատանքները կատարում է ջրօգտագործողը:

----- Գլխավոր ճարտարագետ Կ.Տ.

(ջրամատակարար)

(ստորագրություն) (Ա.Ա.Հ.)

« _____ » _____ 200 թ.

Ձև N 2

ՍԱՀՄԱՆԱԶԱՏՄԱՆ ԱԿՏ

ոռոգման համակարգերի հաշվեկշռային պատկանելության սպասարկման և
շահագործման

Մի կողմից ջրամատակարարը՝ ի դեմս -----

մյուս կողմից ջրօգտագործողը (բաժանորդը)՝ ի դեմս -----

դեկավարվելով ՀՀ տարածքում գործող ոռոգման ջրի մատակարարման և
օգտագործման կանոնների դրույթներով, կազմեցին սույն ակտը հետևյալի մասին, որ
ջրամատակարարի և ջրօգտագործողի (բաժանորդի) ոռոգման համակարգերի
հաշվեկշռային պատկանելության, շահագործման և պատասխանատվության
սահմանազատման կետ է հանդիսանում

(ստորև տրվում է ոռոգման համակարգերի միացման սխեման և սահմանազատման
կետը)

Ջրամատակարար
(բաժանորդ)

Ջրօգտագործող

(ստորագրությունը, Ա.Ա.Հ.)

(ստորագրությունը, Ա.Ա.Հ.)

«_____» _____ 200թ.
Կ.Տ.

«_____» _____ 200 թ.
Կ.Տ.

Ձև N 3

ՔԱՐՏ

ջրօգտագործողի (բաժանորդի) անձնական հաշվառման

(ջրօգտագործողի (բաժանորդի) ծածկագիրը)

1.

(ջրօգտագործողի (բաժանորդի) լրիվ անվանումը)

2.

(հասցեն)

3.

(կառավարման վերադաս մարմնի անվանումը)

4.

(սպասարկող բանկի անվանումը)

5.

(պայմանագրի կնքման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և համարը)

6.

(սեփականության ձևը պետական, մասնավոր առևտրային կազմակերպություն և այլն)

7.

(տնօրենի Ա.Ա.Յ., հեռախոսահամարը, ֆաքսը)

8.

գլխավոր հաշվապահի Ա.Ա.Յ., հեռախոսահամարը, ֆաքսը)

9.

(պետական ռեզիստրում գրանցման ամիսը, ամսաթիվը, տարեթիվը և ծածկագիրը)

10.

(գործունեության ծածկագիրն ըստ պետական ռեզիստրի)

11.

(սնման կետն ըստ տեխպայմանների)

12.

13.

14.

15.

16.

17.

18.

ջրօգտագործող (բաժանորդ)

(ստորագրությունը)

Կ. Տ.

Ձև N 4

ԱԿՏ-ՕՐԱԳԻՐ

ռոռոգման ջրի հանձնման-ընդունման

_____ 200 թ . N _____

Ջրամատակարարի _____ անվանումը

Ջրօգտագործողի _____ (բաժանորդի) _____ անվանումը

Ոռոգման համակարգի _____ անվանումը

Ջրտուփի և դիտակետի _____ բաժանարարի _____ անվանումը

Հիդրոտեղամասի _____ պետ (ջրամատակարարի ներկայացուցիչ) _____

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Ջրօգտագործողի _____ (բաժանորդի) _____ ներկայացուցիչ _____

_____ (ազգանունը, անունը, հայրանունը)

Անսվա օրերը	Ջրի հորիզոնը			Ջրի ծախսը (լ/վրկ)	Ջրամատակարարի ներկայացուցչի ստորագրությունը	Ջրամատակարարի ներկայացուցչի ստորագրությունը
	ժամը (սմ)	ժամը (սմ)	ժամը (սմ)			

Ընդամենը _____ հաշվարկված _____ ջրի _____ ծավալը _____
 _____ հազ. խոր. մ

1 խոր. մ ջրի սակագինը _____ դրամ

Վճարման ենթակա գումարը _____ հազ. դրամ

ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐ՝

ՏՆՕՐԵՆ _____

/-----/ Կ.Տ.

(ստորագրությունը)

ՀԻԴՐՈՏԵՂԱՄԱՍԻ ՊԵՏ _____

/-----/

(ստորագրությունը)

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂ (ԲԱԺԱՆՈՐԴ)՝

ՏՆՕՐԵՆ _____

/-----/ Կ.Տ.

(ստորագրությունը)

ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂԻ (ԲԱԺԱՆՈՐԴԻ)

ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉ _____

/-----/ Կ.Տ.

(ստորագրությունը)

Ձև N 5

ՄԱՏԱԿԱՐԱՐՎԱԾ ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ԴԻՄԱՑ ՓՈԽԱԴԱՐՁ ՀԱՇՎԱՐԿՆԵՐԻ ԱՏՈՒՄԱՆ ԱԿՏ

Սույն ակտը կազմված է մի կողմից -----
 (ջրամատակարարի անվանումը)
 մյուս կողմից ----- մարզի ----- համայնքի -----
 (քրոգտագործողի
 (բաժանորդի) անվանումը)

Տույժերը չեն ընդգրկվում պարտքերի մեջ:

Ջրագտագործող (Բաժանորդ)
 ջրամատակարար -----
 -----մարզի ----- համայնքի -----
 ՍՆՕՐԵՆ ----- (Ա.Ա.Հ) (ջրագտագործողի անվանումը)
 Կ.Տ. ՍՆՕՐԵՆ ----- (Ա.Ա.Հ)
 ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ ----- (Ա.Ա.Հ)
 Կ.Տ.
 ԸՍՏ ՏԱՍՆՕՐՅԱԿՆԵՐԻ
 ՋՐԻ ԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ ----- (Ա.Ա.Հ)
 ԾԱԽՍԵՐԸ ՏՐՎՈՒՄ ԵՆ ՀԱԿԱՌԱԿ ԷՋՈՒՄ

Ձև N 5

						/ԱԱՀ-ՈՎ/
ԱՄԻՍ	ՏԱՍՆՕՐՅԱԿՆԵՐ	ԸՆԴԱՄԵՆ	այդ թվում	ՍԱԿԱԳԻ	ԸՆԴԱՄԵՆ	այդ թվում
		Ը ՋՐՏՈՒՔ	ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ	Ն	Ը ՀԱՍՈՒՅԹ	ՎԵՐԱՀԱՇՎԱՐԿ
		մ3	մ3	ԴՐԱՄ	ԴՐԱՄ	ԴՐԱՄ
ՀՈՒՆՎԱՐ	I տասնորյակ					
	II տասնորյակ					
	III տասնորյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՓԵՏՐՎԱՐ	I տասնորյակ					
	II տասնորյակ					

	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՄԱՐՏ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					
	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ԱՊՐԻԼ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					
	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՄԱՅԻՍ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					
	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՅՈՒՆԻՍ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					
	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՅՈՒԼԻՍ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					
	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՕԳՈՍՏՈՍ	I տասնօրյակ					
	I տասնօրյակ					
	I տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՍԵՊՏԵՄԲԵՐ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					
	տասնօրյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՅՈՎՏԵՄԲԵՐ	I տասնօրյակ					
	տասնօրյակ					

	տասնորյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ՆՈՅԵՄԲԵՐ	I տասնորյակ					
	տասնորյակ					
	տասնորյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					
ԴԵԿՏԵՄԲԵՐ	I տասնորյակ					
	տասնորյակ					
	տասնորյակ					
	ԸՆԴԱՄԵՆԸ					

Ջրամատակարար Ջրօգտագործող (Բաժանորդ)
----- մարզի -----

համայնքի -----

(ջրօգտագործողի անվանումը)

ՏՆՕՐԵՆ ----- (Ա.Ա.Բ)

ՏՆՕՐԵՆ ----- (Ա.Ա.Բ)

Կ.Տ.

Կ.Տ.

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ ----- (Ա.Ա.Հ)

ԳԼԽ. ՀԱՇՎԱՊԱՀ ----- (Ա.Ա.Հ)

Ձև N 6

ԱԿՏ N

ռոռոգման ջրի մատակարարման և օգտագործման կանոնների խախտման

_____ 200թ. ջրօգտագործողի (բաժանորդի) քարտ N _____

1. Ակտը կազմված է ջրամատակարարի ներկայացուցիչ(ներ)
կողմից

(պաշտոնը, անունը, ազգանունը)

ջրօգտագործողի (բաժանորդի) (ներկայացուցիչ)
ներկայությամբ:

(պաշտոնը, անունը, ազգանունը)

2. Ջրօգտագործողի (բաժանորդի) հասցեն, անվանումը

3. Խախտման բնույթը _____ և _____ նկարագրությունը _____

4. Խախտումն արձանագրվում է հայտնաբերման օրը՝ անմիջապես տեղում:

5. Ակտը կազմված է երկու օրինակից, որոնցից մեկը մնում է ջրամատակարարի ներկայացուցչի մոտ, իսկ մյուս օրինակը հանձնվում է ջրօգտագործողին (բաժանորդին):

6. Ջրօգտագործողը (բաժանորդը) հրավիրվում է ջրամատակարարի մոտ՝ հաշվարկներին մասնակցելու համար:

_____ հասցեն _____ հեռախոսահամարը
_____ ժամկետը

7. Ակտը համարվում է օրինական նաև այն դեպքում, եթե ջրօգտագործողը (բաժանորդը) (ներկայացուցիչը) հրաժարվում է այն ստորագրելուց:

Ոռոգման ջրի հաշվարկն ըստ ակտի

8. Հանձնաժողովի եզրակացությունը խախտման և վերահաշվարկի կատարման մասին _____

9. Հանձնաժողովի անդամների ստորագրությունները, պաշտոնները, անունները, ազգանունները՝ _____

10. Ջրօգտագործողի (բաժանորդի) ստորագրությունը _____

Ընդամենը ենթակա է վճարման _____ դրամ

12. Հաշվարկը կատարեց _____ 200 թ.
(ստորագրությունը, պաշտոնը, անունը, ազգանունը)

13. Համակարգիչ մուտքագրեց _____
_____ 200 թ.
(ստորագրությունը պաշտոնը, անունը, ազգանունը)

14. Լրացուցիչ տվյալներ

Ջրամատակարարի ներկայացուցիչ Ջրօգտագործող (բաժանորդի) (ներկայացուցիչ)
 (ստորագրությունը) (ստորագրությունը)

_____ 200 թ.

_____ 200 թ.

** հանձնաժողով՝ կանոնների խախտման ակտերը քննարկող ջրամատակարար
 կազմակերպության հանձնաժողով:

Ձև N 7

ՀԱՅՏ

ոռոգման ջրի մատակարարման

_____ ամսվա _____ տասնօրյակի համար

NN ը/կ	Բաժանարարի անվանումը	Պլան-ժամանակացույցով նախատեսված ջրաքանակը		Սույն հայտով պահանջվող ջրաքանակը		Ծանոթագրություն
		լ/վրկ	հազ մ3	լ/վրկ	հազ մ3	
1						
2						
3						
4						
5						
6						
7						
8						
9						
10						

Ջրօգտագործողի
(ստորագրությունը)

(բաժանորդի)

անվանումը

Կ. Տ.

Ձև N 8

Հիշեցում

Հիշեցում

_____ 200 թ.	(ստացողին տրվող օրինակ) « _____ » _____ 200 թ.
-----	-----

ջրօգտագործող (բաժանորդ)

ջրօգտագործող (բաժանորդ)

Հարգելի պրն (տկն) -----	Հարգելի պրն (տկն) -----
Հիշեցնում ենք Ձեզ, որ ----- 200 թ.	Հիշեցնում ենք Ձեզ, որ ----- 200 թ.
----- դրությամբ Ձեր պարտքը	----- դրությամբ Ձեր պարտքը
(մերառյալ Ա.Ա.Հ.)	օգտագործված ոռոգման (մերառյալ Ա.Ա.Հ.)
օգտագործված ոռոգման	

ջրի դիմաց կազմում է -----	ջրի դիմաց կազմում է -----
----- դրամ:	----- դրամ:
Խնդրում ենք 3-օրյա ժամկետում մարել	Խնդրում ենք 3-օրյա ժամկետում մարել
պարտքը, հակառակ դեպքում, համաձայն	պարտքը, հակառակ դեպքում,
համաձայն	
ոռոգման ջրի մատակարարման և	ոռոգման ջրի
մատակարարման և	
օգտագործման կանոնների ----- կետի,	օգտագործման
կանոնների ----- կետի,	
Ձեր ջրամատակարարումը կդադարեցվի:	Ձեր
ջրամատակարարումը կդադարեցվի:	
-----	-----
-	

(ջրամատակարար) (ստորագրությունը)	
(ջրամատակարար) (ստորագրությունը)	

Ստացողի ստորագրությունը -----

Ստացողի ստորագրությունը -----

_____ 200 թ.	
_____ 200 թ.	_____

040.1406.13.11.03.

«Վավերացնում են» Հայաստանի Հանրապետության Նախագահ Ռ. Քոչարյանի 13 նոյեմբերի 2003 թ.

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ
ՈՐՈՇՈՒՄ**

6-րդ նոյեմբերի 2003 թ.

N-1406-Ն

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ 2002
ԹՎԱԿԱՆԻ ԴԵԿՏԵՄԲԵՐԻ 26-Ի N 2121-Ն ՈՐՈՇՄԱՆ* ՄԵՋ
ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Հայաստանի Հանրապետության Կառավարությունը որոշում է.

1. Հայաստանի Հանրապետության Կառավարության 2002թ. դեկտեմբերի 26-ի «Ռոռզման ջրի մատակարարման և օգտագործման կանոնները հաստատելու, Ռոռզման ջրի մատակարարման պայմանագրի օրինակելի ձևը սահմանելու և Հայաստանի Հանրապետության Կառավարության 2000 թ.-ի հուլիսի 27-ի N 418 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 2121-Ն որոշման մեջ կատարել հետևյալ լրացումները.

ա) որոշումը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր՝ 2¹-րդ կետով.

«2¹. Սահմանել Հայաստանի Հանրապետության ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին Ռոռզման ջրի մատակարարման օրինակելի պայմանագրի ձևը՝ համաձայն N 3 հավելվածի».

բ) որոշմամբ հաստատված Ռոռզման ջրի մատակարարման և օգտագործման կանոնների 2-րդ կետը «տեսակից» բառից հետո լրացնել «, բացառությամբ այն դեպքերի, երբ Ռոռզման ջրի մատակարարման հետ կապված փոխհարաբերությունների մասնակից են Հայաստանի Հանրապետության ջրօգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները» բառերով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակման օրվան հաջորդող տասներորդ օրը:

Հայաստանի Հանրապետության Վարչապետ Ա. Մարգարյան

10-րդ նոյեմբերի 2003 թ.

Երևան

* ՀՀՊՏ 2003 N 6 (241), 29.01.03

Հավելված N 3

ՀՀ կառավարության 2002 թ. դեկտեմբերի 26-ի N 2121-Ն որոշման

*ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԵՎ ՋՐՕԳՏԱ-
ԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ՈՌՈԳՄԱՆ ՋՐԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ*

քաղ.

(գ.) _____ (այսուհետ՝ մատակարար)
(ջրամատակարարի անվանումը)

ի դեմս _____, մի
կողմից, և _____
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

ջրօգտագործողների ընկերությունը (այսուհետ՝ ընկերություն) կամ
ջրօգտագործողների ընկերությունների միությունը (այսուհետ՝
միություն) _____
(ընկերության կամ միության անվանումը)

իդեմս _____
—
(պաշտոնը, անունը, ազգանունը, հայրանունը)

մյուս կողմից, ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքով, «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով և այլ իրավական ակտերով, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

I. ՊԱՅՄԱՆԱԳՐՈՒՄ ՕԳՏԱԳՈՐԾՎՈՂ ՀԻՄՆԱԿԱՆ ՀԱՍԿԱՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

1. Պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

- ջրաղբյուր՝ երկրի մակերևութային և ստորերկրյա ջրեր (բնական գետեր, լճեր, առուներ, ճահիճներ, ստորերկրյա ջրավազաններ, արհեստական ջրամբարներ և այլն),
- ոռոգման ջուր՝ գյուղատնտեսական մշակաբույսերի ոռոգման համար նախատեսված ստանդարտներին համապատասխանող ջուր,
- ոռոգման համակարգ՝ ոռոգման և ցամաքուրդային ջրանցքներ, խողովակաշարեր, հիդրոտեխնիկական կառուցվածքներ, հորեր, պոմպակայաններ, ջրամբարներ, լճակներ՝ ճանապարհներով, շենքերով, էլեկտրահաղորդման գծերով և այլ ենթակառուցվածքներով, այդ թվում՝ ջրակոհամակարգերի պահպանման գոտիներ,
- ջրի հորիզոն՝ ջրաչափական դիտակետով հոսող ջրի մակարդակ,

- ջրաչափական կետ՝ հիդրոտեխնիկական կառույց, որի միջոցով որոշվում է հոսող ջրի ծավալը՝ տվյալ պահի համար,
- չափիչ-հաշվառող սարք՝ ջրաչափ, որն ունակ է գրանցելու § պահելու առնվազն 10 օրվա ժամային ու գումարային ջրի հոսքը:

II. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

2. Մատակարարը ոռոգման ջրի մատակարարման պայմանագրի անբաժանելի մաս կազմող պլան-ժամանակացույցին (սույն պայմանագրի N 1 հավելված) համապատասխան Ընկերությանը (Միությանը) մատակարարում է ոռոգման ջուր, որի մեկ խորանարդ մետրի համար որպես հաշվարկային միավոր ընդունվում է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված սակագինը, իսկ Ընկերությունը (Միությունը) ընդունում է այն և հաշվարկված ջրի վարձը վճարում մատակարարին:

3. Պայմանագրի անբաժանելի մաս կազմող պլան-ժամանակացույցը յուրաքանչյուր տարի՝ մինչև ոռոգման շրջանի սկիզբը կազմվում և հաստատվում է սահմանված կարգով:

III. ՋՐԱՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ԿԵՏԵՐԸ ԵՎ ՋՐԻ ՀԱՇՎԱՌՄԱՆ ԿԱՐԳԸ

4. Մատակարարի կողմից Ընկերություններին (Միություններին) ոռոգման ջուրը տրվում է ջրաչափական կետերում:

5. Պայմանագրի կողմերի միջև ջրաչափական կետեր են՝

(ոռոգման համակարգի և բաժանարարների անվանումները, չափիչ-հաշվառող սարքերի տեսակները)

6. Մատակարարվող ոռոգման ջրի հորիզոնը (ծախսը) չափվում է օրական առնվազն երկու անգամ և գրանցվում ոռոգման ջրի հանձնման-ընդունման ակտ-օրագրում: Դիտարկման ժամերն են՝ _____: Սահմանված ժամին (0.5 ժամվա ընթացքում) կողմերից որևէ մեկի ներկայացուցչի չներկայանալու դեպքում հիմք է ընդունվում ներկայացած կողմի գրանցումը:

7. Մատակարարված ջրի ծավալը որոշվում է ըստ ջրաչափի ցուցմունքի: Չափիչ- հաշվառող սարքերի ժամանակավոր բացակայության դեպքում, կողմերի համաձայնությամբ, մատակարարված ջրի ծավալը չափվում և հաշվարկվում է ջրաչափական այլ ընդունված մեթոդներով՝ ըստ ջրի հորիզոնի, ջրանցքի կամ խողովակի լայնական կտրվածքի, ջրի արագության և այլն:

8. Մատակարարված ջրի ծավալը գրանցվում է ոռոգման ջրի հանձնման-ընդունման տասնօրյակային ակտ-օրագրում՝ երկու օրինակից:

9. Յուրաքանչյուր ամսվա վերջին օրվա դրությամբ տասնօրյակային ակտ-օրագրերին համապատասխան կատարված վճարումների հիման վրա կազմվում է փոխադարձ հաշվարկների ակտ:

10. Ոռոգման շրջանի ընթացքում պլան-ժամանակացույցով նախատեսված ջրաքանակը Ընկերության (Միության) հայտի հիման վրա կարող է փոփոխվել (ավելացվել կամ պակասեցվել) առավելագույնը 25%-ի չափով՝ ջրամատակարարի տեխնիկական հնարավորությունների սահմաններում:

IV. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐՆ ՈՒ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

11. Մատակարարն իրավունք ունի՝

ա) Ընկերության (Միության) կողմից պայմանագրի 14-րդ կետի «դ» ենթակետում նշված պարտավորությունների չկատարման դեպքում՝ սահմանված կարգով զգուշացնելուց 3 օր հետո դադարեցնելու բաժանորդի ջրամատակարարումը մինչև պարտքի մարումը,

բ) Ընկերության (Միության) կողմից ներկայացված հայտի համաձայն ընկերությանը (միությանը) լրացուցիչ ջուր մատակարարելու, եթե դա տեխնիկապես հնարավոր է, և եթե մինչև այդ մատակարարված ջրի համար ընկերությունը (միությունը) վճարումները կատարում է պայմանագրի 14-րդ կետի «դ» ենթակետին համապատասխան,

գ) Ընկերության (Միության) կողմից հայտը 14-րդ կետի «բ» ենթակետով սահմանված ժամկետի խախտումով ներկայացվելու, առանց հայտի՝ ջրից հրաժարվելու կամ նախատեսվածից պակաս մատակարարման պահանջի դեպքում՝ Ընկերության (Միության) հաշվին հաշվարկելու այդ ժամանակահատվածում մատակարարված ջրաքանակը, բայց 3-օրյա ժամկետից ոչ ավելի:

12. Մատակարարը պարտավոր է՝

ա) պայմանագրի 5-րդ կետում նշված ջրամատակարարման կետերում պայմանագրի պլան-ժամանակացույցի կամ սույն կետի «գ» ենթակետում նշված հայտին համապատասխան մատակարարել ոռոգման ջուր,

բ) պայմանագրի 5-րդ կետում նշված ջրամատակարարման կետերը կահավորել չափիչ-հաշվառող սարքերով,

գ) համաձայն Ընկերության (Միության) հայտի՝ դադարեցնել կամ պակասեցնել պլան-ժամանակացույցով նախատեսված ոռոգման ջրի ծավալը,

դ) պլան-ժամանակացույցով նախատեսվածից պակաս տրված (իր մեղքով թեր-մատակարարված) ջրի ծավալը լրացնել հաջորդ 3 օրվա ընթացքում,

ե) տվյալ տասնօրյակի ավարտից հետո 2 օրվա ընթացքում լրացնել և ստորագրել ոռոգման ջրի հանձնման-ընդունման տասնօրյակային ակտ-օրագրի երկու օրինակը,

զ) Ընկերություն (Միություն) ներկայացնել ջրի հանձնման-ընդունման տասնօրյակային ակտ-օրագրերին համապատասխան կազմված վճարման փաստաթուղթը՝ մատակարարված ոռոգման ջրի վարձը վճարելու համար,

Է) եթե ջրամատակարարման սահմանափակումը և/կամ դադարեցումը կապված է ֆորս-մաժորային դեպքերի, ինչպես նաև ջրաղբյուրներում ու ոռոգման համակարգերում վթարների կանխման կամ դրանց վերացման անհետաձգելի տեխնիկական միջոցառումների իրականացման հետ, ապա ոռոգման ջրի մատակարարումը սահմանափակելու կամ դադարեցնելու մասին անմիջապես տեղեկացնել Ընկերությանը (Միությանը),

ը) եթե օրվա ընթացքում փաստացի ջրամատակարարման տևողության կեսից ավելի ժամանակահատվածում ջրի ելքը նվազել է պահանջվող ելքի 20 %-ից ավելի չափով, ապա տվյալ օրվա մատակարարված ջրի ծավալը հաշվարկել նվազագույն հորիզոնին համապատասխան, իսկ 30 %-ից ավելի նվազելու դեպքում՝ հաշվառել տվյալ օրվա մատակարարված ջուրը և դրա դիմաց Ընկերությունից (Միությունից) վճար չպահանջել:

13. Ընկերությունը (Միությունը) իրավունք ունի՝

ա) մասնակցելու ջրաչափական դիտակետերում անհրաժեշտ ստուգիչ չափումներին,

բ) եթե օրվա ընթացքում փաստացի ջրամատակարարման տևողության կեսից ավելի ժամանակահատվածում ջրի ելքը նվազել է պահանջվող ելքի 20 %-ից

ավելի չափով, ապա՝ տվյալ օրվա մատակարարված ջրի ծավալը հաշվարկելու նվազագույն հորիզոնին համապատասխան, իսկ 30 %-ից ավելի նվազելու դեպքում՝ չհաշվառելու և չվճարելու օրվա մատակարարված ջրի դիմաց.

գ) չվճարելու առանց հայտի՝ պայմանագրի պլան-ժամանակացույցով նախատեսված ջրաքանակից կամ ներկայացված հայտից ավելի մատակարարված ջրի համար:

14. Ընկերությունը (Միությունը) պարտավոր է՝

ա) իր ներկայացուցչի միջոցով ջրի մատակարարման կետում ստանալ ոռոգման ջուր,

բ) պայմանագրի պլան-ժամանակացույցում նշված ջրաքանակն ավելացնելու, հրաժարվելու կամ այն նվազեցնելու մասին առնվազն 3 օր առաջ հայտ ներկայացնել մատակարարին,

գ) տվյալ տասնօրյակի ավարտից հետո, պայմանագրի 12-րդ կետի «դ» ենթակետով սահմանված ժամկետում, ստորագրել ոռոգման ջրի հանձնման-ընդունման տասնօրյակային ակտ-օրագրի երկու օրինակը,

դ) վճարել մատակարարված ոռոգման ջրի վարձը՝ մատակարարից պայմանագրի 12-րդ կետի «գ» ենթակետում նշված վճարման փաստաթղթերն ստանալուց հետո մեկամսյա ժամկետում՝ ամբողջությամբ, կամ ջրի վարձի վճարման ժամանակացույցի համաձայն (սույն պայմանագրի N 2 հավելված),

ե) ջրամատակարարման խափանման մասին անհապաղ տեղեկացնել ջրամատակարարին,

զ) չխոչընդոտել ջրերի արտահոսքը ցամաքուրդային համակարգ:

V. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

15. Կողմերը սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար կրում են պատասխանատվություն օրենքով սահմանված կարգով, ինչպես նաև հատուցում են դրա հետևանքով առաջացած վնասները:

16. Եթե ջրամատակարարի կողմից սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման արդյունքում վնաս է պատճառվել ընկերության անդամ և ոչ անդամ ջրօգտագործողներին, ապա Ընկերությունը կարող է Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հանդես գալ նրանց անունից:

17. Տարերային աղետների, սակավաջրության, երաշտի, պատերազմի, ռազմական գործողությունների և այլ ֆորս-մաժորային պայմանների դեպքում կողմերն ազատվում են սույն պայմանագրով նախատեսված պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարման համար նախատեսված պատասխանատվությունից, եթե պարտավորությունների մասնակի կամ լրիվ չկատարումը հետևանք է այնպիսի հանգամանքների, որոնք առաջացել են պայմանագիրը կնքելուց հետո, և կողմը հնարավոր բոլոր միջոցներով չէր կարող ոչ կանխատեսել, և ոչ էլ կանխել դրանք:

VI. ՎԵՃԵՐԻ ԼՈՒԾՄԱՆ ԿԱՐԳԸ

18. Կողմերի միջև ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Անհամաձայնության դեպքում վեճը լուծվում է դատական կարգով:

VII. ԼՐԱՑՈՒՑԻՉ ՊԱՅՄԱՆՆԵՐ

19. Պայմանագրից բխող և պայմանագրով չկարգավորված մյուս բոլոր հարցերը կարգավորվում են Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

VIII. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳՈՐԾՈՂՈՒԹՅԱՆ ԺԱՄԿԵՏԸ

- 20. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրումից հետո:
- 21. Պայմանագիրը կնքվում է 3 տարի ժամկետով (կողմերի համաձայնության դեպքում՝ մինչև 10 տարի ժամկետով):
- 22. Պայմանագիրը կարող է լուծվել՝
 - ա) կողմերից մեկի լուծարման դեպքում,
 - բ) կողմերի փոխադարձ համաձայնության դեպքում,
 - գ) Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ նախատեսված այլ դեպքերում:
- 23. Պայմանագիրը կազմված է 2 հավասարազոր օրինակից:

IX. ԿՈՂՄԵՐԻ ԳՏՆՎԵԼՈՒ ՎԱՅՐԵՐԸ ԵՎ ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ

Մատակարար՝
 Հասցեն _____

 Հ/հ _____
 Հեռախոսահամարը _____

 (ստորագրությունը)
 _____ 200__ թ.
 Կ.Տ.

Ընկերություն (Միություն)՝
 Հասցեն _____

 Հ/հ _____
 Հեռախոսահամարը _____

 (ստորագրությունը)
 _____ 200__ թ.
 Կ.Տ.

Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ. Թոփուզյան

Հավելված N 1

ՀՀ ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին ոռոգման ջրի մատակարարման օրինակելի պայմանագիր

Մատակարարը ի դեմս և
 (անվանումը) (պաշտոնը Ա.Ա.Հ.) (անվանումը)
 ընկերությունը, ի դեմս
 (պաշտոնը Ա.Ա.Հ.)

ըստ ստորև նշված պահանջվող ոռոգման ջրի քանակի կազմեցին ջրօգտագործման հետևյալ պլան-ժամանակացույցը.

Ըստ գյուղատնտեսական մշակաբույսերի հողատարածքները և պահանջվող ոռոգման ջրի քանակը.*

Համակարգի անվանումը, բաժանարարի համարը (անվանումը)	Ընդամենը		այդ թվում՝										
	ոռոգվող հողատարածքը	ջուր	հացահատիկ		բանջար-բոստան		պտղատու այգի		նորատունկ այգի		խաղողի այգի		
			(հա)	(հազ.մ ³)	(հա)	(հազ.մ ³)	(հա)	(հազ.մ ³)	(հա)	(հազ.մ ³)	(հա)	(հազ.մ ³)	(հա)
Ընդամենը													

- Ներառյալ ընկերության ոռոգման համակարգերի կորուստները:

Ջրօգտագործման պլան-ժամանակացույց*

Համակարգի անվանումը, բաժանարարի համարը (անվանումը)	Չափի միավորը	այդ թվում՝ ըստ տասնօրյակների																
		ջուր	ՄԱՐՏ			ԱՊՐԻԼ			ՄԱՅԻՍ			ՀՈՒՆԻՍ			ՀՈՒԼԻՍ			
			(հազ.մ ³)	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III	I	II	III
	(լ/վրկ)																	
	(հազ.մ ³)																	
	(աճողական)																	
	(լ/վրկ)																	
	(հազ.մ ³)																	

040.0314.10.04.03.

«Վավերացնում են»

Հայաստանի Հանրապետության

Նախագահ Ռ. Քոչարյան

10 ապրիլի 2003 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅՈՒՆ

ՈՐՈՇՈՒՄ

13-ը մարտի 2003 թ.

N-314-Ն

**ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ
ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅՂ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ
ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ) ԱՊԱՀՈՎԵԼՈՒ ԿԱՐԳԸ
ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ
ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ
ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ՕՐԻՆԱԿԵԼԻ
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԶԵՎԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ**

Ի կատարումն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին»* Հայաստանի Հանրապետության օրենքի 40-րդ հոդվածի 4-րդ մասի «ա» և «բ» կետերի պահանջների՝ Հայաստանի Հանրապետության կառավարությունը որոշում է.

1. Հաստատել՝

ա) պետական ռոտզման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին ու ջրօգտագործողների ընկերությունների միություններին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու և սեփականատերերի կողմից այդ համակարգերի հսկողությունը (վերահսկողությունը) ապահովելու կարգը՝ համաձայն N 1 հավելվածի,

բ) պետական ռոտզման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին ու ջրօգտագործողների ընկերությունների միություններին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու օրինակելի պայմանագրի ձևը՝ համաձայն N 2 հավելվածի:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրվանից:

Հայաստանի Հանրապետության վարչապետ Ա. Մարգարյան

2-ը ապրիլի 2003 թ.

Երևան

* ՀՀՊՏ 2002 N 24 (199), 10.07.02

Հավելված N 1

ՀՀ Կառավարության 2003 թ. մարտի 13-ի N 314-Ն որոշման

ԿԱՐԳ ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ՈՒ ԶՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԻՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ ՓՈԽԱՆՑԵԼՈՒ ԵՎ ՍԵՓԱԿԱՆԱՏԵՐԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԱՅԴ ՀԱՄԱԿԱՐԳԵՐԻ ՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ (ՎԵՐԱՀՍԿՈՂՈՒԹՅՈՒՆԸ) ԱՊԱՀՈՎԵԼՈՒ

1. Սույն կարգով սահմանվում է Հայաստանի Հանրապետության տարածքում «Զրոգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի համաձայն (այսուհետ՝ օրենք) ստեղծված ջրօգտագործողների ընկերություններին ու ջրօգտագործողների ընկերությունների միություններին պետական ոռոգման համակարգերը (այսուհետ՝ ոռոգման համակարգեր) անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու գործընթացը:

2. Պետական ոռոգման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին ու ջրօգտագործողների ընկերությունների միություններին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու գործընթացն իրականացվում է գործող օրենսդրության և սույն կարգի համաձայն:

3. Զրոգտագործողների ընկերությունները և ջրօգտագործողների ընկերությունների միությունները հիմնադրվելուց հետո երկամսյա ժամկետում ջրային համակարգերի կառավարման կամ այլ լիազորված մարմնի հետ համատեղ մշակում են իրենց կողմից սպասարկվող տարածքում գտնվող պետական ոռոգման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին օգտագործման իրավունքով փոխանցելու ժամանակացույց (այսուհետ՝ ժամանակացույց):

4. Զրոգտագործողների ընկերությունների, ջրօգտագործողների ընկերությունների միությունների և ջրային համակարգերի կառավարման կամ այլ լիազորված մարմնի կողմից կազմված՝ փոխանցվող պետական ոռոգման համակարգերի ցանկը, ժամանակացույցը, ինչպես նաև ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների կանոնակարգող խորհրդի (այսուհետ՝ կանոնակարգող խորհուրդ) կողմից պահանջվող անհրաժեշտ փաստաթղթերը, կողմերի առարկությունները գրավոր ներկայացվում են կանոնակարգող խորհուրդ:

5. Կանոնակարգող խորհուրդը մեկամսյա ժամկետում ուսումնասիրում է կողմերի ներկայացրած փաստաթղթերը և տեխնիկական հիմնավորվածության դեպքում ընդունում է որոշում ոռոգման համակարգերի փոխանցման մասին:

6. Հայաստանի Հանրապետության պետական կառավարման լիազոր մարմինը կանոնակարգող խորհրդի դրական որոշման հիման վրա, սահմանված կարգով, որոշման ընդունման պահից ոչ ուշ, քան 45 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետության Կառավարության քննարկմանն է ներկայացնում Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշման նախագիծ՝ պետական ոռոգման համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու մասին:

Հայաստանի Հանրապետության Կառավարության որոշմամբ սահմանվում են՝

ա) փոխանցման ենթակա պետական ոռոգման համակարգերի ցանկը,

բ) ժամանակացույցը,

գ) պայմանագրերի կնքման ժամկետները,

դ) անհրաժեշտության դեպքում՝ պետական ոռոգման համակարգերը ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների շահագործմանն ու պահպանմանը հանձնելու գործընթացի առանձնահատկությունները (համատեղ շահագործման և պահպանման հնարավորությունը, աստիճանական փոխանցման տարբերակները) և այլն:

7. Պետական ոռոգման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին անհատույց օգտագործման հանձնելու վերաբերյալ կնքվում է պայմանագիր՝ սույն որոշմամբ հաստատված պետական ոռոգման համակարգերը ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին անհատույց օգտագործման իրավունքով փոխանցելու օրինակելի պայմանագրի ձևի և Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն:

8. Ջրօգտագործողների ընկերությունը (ջրօգտագործողների ընկերությունների միությունը), որին փոխանցվել են պետական ոռոգման համակարգերը, պայմանագրի կնքումից հետո՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված ժամկետներում ապահովում է պայմանագրի նոտարական վավերացումը և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը:

9. Ջրային համակարգերի կառավարման կամ այլ լիազորված մարմնի կողմից ջրօգտագործողների ընկերություններին և ջրօգտագործողների ընկերությունների միություններին հանձնված գույքի տեխնիկական վիճակի, շահագործմանն ու օգտագործմանն նկատմամբ իրականացվում է հսկողություն (վերահսկողություն)

ա) գույքի փաստացի տեխնիկական վիճակն ստուգելու նպատակով՝ նախքան ոռոգման շրջանի սկսվելը՝ մինչև զարնանային վարար ջրերի բացթողումը՝ գույքի զննում, ինչպես նաև զարնանային վարար ջրերի բացթողման նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքի դիտարկումներ կատարելու եղանակով,

բ) ոռոգման շրջանի ընթացքում՝ գույքի շահագործման և պահպանման տեխնիկական նորմերի պահանջների կատարումը ստուգելու նպատակով՝ փոխատուի պահանջով, ոչ ավելի, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ դիտարկումներ անցկացնելու եղանակով,

գ) ոռոգման շրջանի ավարտից հետո՝ գույքի փաստացի տեխնիկական վիճակը ստուգելու նպատակով՝ գույքի զննում կատարելու և պետական ոռոգման համակարգերի պահպանության նպատակով՝ գույքը ձմռանը նախապատրաստելու աշխատանքների դիտարկումներ կատարելու եղանակով:

Կողմերը համատեղ կազմում են սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված գործողությունների արդյունքների մասին արձանագրություն:

10. Ջրային համակարգերի կառավարման կամ այլ լիազորված մարմնին անհատույց օգտագործման հանձնված գույքի նկատմամբ իրականացնում է հսկողություն (վերահսկողություն)՝ գույքի վիճակի, օգտագործման պայմանների դիտարկումներ, ինչպես նաև զննումներ կատարելու եղանակով:

11. Ջրային համակարգերի կառավարման կամ այլ լիազորված մարմնի կողմից գույքի զննումները, դիտարկումները, ստուգումները կատարվում են կողմերից առնվազն 2-ական ներկայացուցիչների մասնակցությամբ: Կողմերից որևէ մեկի կողմից ակտի չստորագրման դեպքում դրա մասին նշում է կատարվում ակտում: Վեճ առաջանալու դեպքում հարցը լուծվում է դատական կարգով:

12. Գույքի տեխնիկական վիճակի, օգտագործման և շահագործման նկատմամբ տարեկան հսկողությունից բացի՝ սեփականատերը կարող է տարերային աղետներից (ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ և այլն) կամ վթարներից հետո կատարել գույքի արտահերթ զննումներ:

13. Հսկողության արդյունքներն արձանագրվում են ջրօգտագործողների ընկերության (ջրօգտագործողների ընկերությունների միության) պետական ռոզման համակարգի տեխնիկական վիճակի ստուգումների և զննումների գրանցամատյանում, որը տրամադրվում է փոխատուին՝ ծանոթանալու համար:

Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ղեկավար-նախարար Մ. Թովուզյան

Հավելված N 2

ՀՀ Կառավարության 2003թ. մարտի 13-ի N 314-Ն որոշման

**ՕՐԻՆԱԿԵԼԻ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ՝ ՊԵՏԱԿԱՆ ՈՌՈԳՄԱՆ
ՀԱՄԱԿԱՐԳԵՐԸ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻՆ
ԵՎ ՋՐՕԳՏԱԳՈՐԾՈՂՆԵՐԻ ԸՆԿԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԻՈՒԹՅՈՒՆ-
ՆԵՐԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕԳՏԱԳՈՐԾՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔՈՎ
ՓՈՒՍԱՆՑԵԼՈՒ**

200 թ.

(կնքման վայրը)

(համապատասխան լիազորություններ ունեցող կազմակերպության կամ համայնքի անվանումը)

(այսուհետ՝ փոխատու), ի դեմս _____ -ի, որը գործում է

_____ հիման վրա, մի կողմից,

(կանոնադրությունը, լիազորագիր և այլն)

և _____ ջրօգտագործողների ընկերությունը (ջրօգտագործողների ընկերությունների միությունը) (այսուհետ՝ փոխառու), ի դեմս վարչական խորհրդի նախագահ _____ ի, որը գործում է փոխառուի կանոնադրության հիման վրա, մյուս կողմից, համաձայն «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի և Հայաստանի Հանրապետության Կառավարության _____ թվականի _____ ի _____ որոշման, կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր) հետևյալի մասին.

1. Պայմանագրի իրավական հիմքերը

1.1. «Ջրօգտագործողների ընկերությունների և ջրօգտագործողների ընկերությունների միությունների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի (այսուհետ՝ օրենք) 22, 30 հոդվածներն ու 40 հոդվածի 4-րդ մասը և Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի 61 հոդվածն իրավական հիմք են հանդիսանում պետական կամ համայնքային սեփականություն հանդիսացող ռոզման համակարգերն անհատույց օգտագործման իրավունքով ջրօգտագործողների ընկերություններին կամ ջրօգտագործողների ընկերությունների միություններին փոխանցելու համար:

2. Պայմանագրում օգտագործվող հիմնական հասկացությունները.

2.1. Կողմերը նշում են, որ սույն պայմանագրում օգտագործվող հասկացություններն ունեն հետևյալ իմաստները՝

- փոխատու՝ պետական ոռոգման համակարգի կամ դրա մի մասի սեփականատերը: Պետական սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերի դեպքում՝ որպես փոխատու հանդես է գալիս Հայաստանի Հանրապետության Կառավարությունն՝ ի դեմս Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր ջրային տնտեսության պետական կոմիտեի կամ այլ լիազորված մարմնի: Համայնքային սեփականություն հանդիսացող ոռոգման համակարգերի դեպքում՝ տեղական ինքնակառավարման մարմինը.
- փոխառու՝ Ջրօգտագործողների Ընկերությունը կամ Ջրօգտագործողների Ընկերությունների միությունը, որը հիմնադրվել է համաձայն օրենքի, և որին հանձնվում է ոռոգման համակարգի կամ դրա մասի՝ ի շահ իր անդամների օգտագործման իրավունքը,
- կանոնակարգող խորհուրդ՝ Ջրօգտագործողների Ընկերությունների և Ջրօգտագործողների Ընկերությունների Սիությունների գործունեությունը կանոնակարգող՝ օրենքի հիման վրա ստեղծված պետական մարմին.
- հիմնանորոգում՝ ոռոգման համակարգի վերականգնման, վերակառուցման, ընդլայնման և տեխնիկական վերազինման աշխատանքների իրականացում,
- գույքի պահպանում ոռոգման համակարգի ընթացիկ նորոգում, նոր ոռոգման շրջանի նախապատրաստական աշխատանքների իրականացում,
- մաշվածք՝ փոխառուին հանձնվող գույքի ակնկալվող արտադրական գործոններից կախված ֆիզիկական մաշվածություն, որը հաշվարկվում է «ՀՀՀՄ -16» ստանդարտին համապատասխան,
- գույք՝ ոռոգման համակարգը կամ դրա մասը, որի օգտագործման իրավունքը սույն պայմանագրով փոխատուի կողմից փոխանցվում է փոխառուին,
- գույքի նկարագիր հավելված N 1՝ գույքի անվանացանկը և տեխնիկական մասնագրերը: Հավելված N 2 գույքի փաստացի վիճակը բնութագրող տվյալները և փաստաթղթերը: Թիվ 1 և 2 հավելվածները սույն պայմանագրի անբաժանելի մասն են,
- տեխնիկական նորմեր՝ գույքի շահագործման ու պահպանման վերաբերյալ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված նորմեր և կանոններ,
- գույքի օգտագործումն իր նշանակությամբ՝ ոռոգման համակարգի օգտագործումը՝ ջրի տեղափոխման և բաշխման նպատակով:

3. Պայմանագրի առարկան.

3.1. Փոխատուն պայմանագրով պարտավորվում է փոխառուին ժամանակավոր անհատույց օգտագործման հանձնել սույն պայմանագրի բաղկացուցիչ մասը հանդիսացող գույքի նկարագրում նշված՝ իրեն սեփականության իրավունքով պատկանող գույքի օգտագործման, շահագործման և պահպանման իրավունքը, իսկ փոխառուն պարտավորվում է այն ընդունել, օգտագործել, շահագործել և պահպանել պայմանագրի 5.1-ին կետով սահմանված նպատակին համապատասխան, և վերադարձնել նույն վիճակում՝ հաշվի առնելով Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով հաստատված տեխնիկական նորմերին համապատասխան հաշվարկվող գույքի բնականոն մաշվածքը:

3.2. Գույքի օգտագործման իրավունքի հետ միասին փոխանցվում են դրան վերաբերող հետևյալ փաստաթղթերը՝

ա) գույքի տեխնիկական անձնագիրը,

բ) գույքի շահագործման և պահպանման տեխնիկական նորմերը,

գ) գույքի առանձնահատկություններից ելնելով՝ այլ փաստաթղթեր:

3.3. Փոխատուն երաշխավորում է, որ գույքը վաճառված, գրավ դրված, վարձակալության, անհատույց օգտագործման տրված կամ այլ կերպ ծանրաբեռնված չէ, դատական վեճի առարկա չէ, արգելանքի տակ չի գտնվում:

4. Կողմերի իրավունքներն ու պարտականությունները.

4.1. Փոխատուն իրավունք ունի

4.1.1. փոխառուից պահանջելու գույքն օգտագործել իր նշանակությամբ,

4.1.2. փոխառուից պահանջելու գույքը շահագործել և պահպանել տեխնիկական նորմերին համապատասխան,

4.1.3. փոխառուի ներկայացուցիչների մասնակցությամբ ստուգելու գույքի տեխնիկական վիճակը, կատարելու դիտարկումներ և զննումներ՝ սույն պայմանագրի 8.2-րդ ենթակետով սահմանված կարգով:

4.2. Փոխատուն պարտավոր է.

4.2.1. գույքը հանձնել փոխառուի օգտագործմանը՝ պայմանագիրն ուժի մեջ մտնելու պահից,

4.2.2. գույքի օգտագործման իրավունքը հանձնել բոլոր պատկանելիքներով և սույն պայմանագրի 3.2-րդ կետում նշված փաստաթղթերով,

4.2.3. գույքի օգտագործման իրավունքը փոխառուին փոխանցելիս ապահովել գույքի աշխատանքային վիճակը,

4.2.4. կատարել գույքի հիմնանորոգումները՝ Հայաստանի Հանրապետության ջրային օրենսգրքի համաձայն ստեղծված տեխնիկական հանձնաժողովի առաջարկությանը համապատասխան,

4.2.5. աջակցել փոխառուին, եթե երրորդ անձինք խախտում կամ ոտնահարում են փոխառուի՝ պայմանագրով սահմանված իրավունքները,

4.2.6. համապատասխան մարմիններից ստանալ գույքի հիմնանորոգման և օգտագործման համար անհրաժեշտ թույլտվությունները, հատակագծերը, նախագծերը և այլ փաստաթղթեր,

4.2.7. պայմանագրի անբաժանելի մասը կազմող թիվ 2 հավելվածում նշել գույքի թերությունների մասին.

4.2.8. գույքի օգտագործման իրավունքի փոխանցման պահին փոխառուին հանձնել ջրօգտագործման և ջրային համակարգերի օգտագործման թույլտվությունները:

4.3. Փոխառուն իրավունք ունի.

4.3.1. փոխառուի կողմից գույքի թիվ 2 հավելվածում չհայտարարված, հետագայում հայտնաբերված գույքի թերությունների (այդ թվում թաքնված թերություններ) դեպքում փոխառուից պահանջելու անհատույց վերացնել դրանք կամ հատուցել գույքի թերությունների վերացման համար իր կատարած ծախսերը,

4.3.2. համապատասխան մասնագետներից ստանալու խորհրդատվություն, այդ թվում՝ կանոնակարգող խորհրդից՝ օրենքի 32-րդ հոդվածին համապատասխան:

4.4. Փոխառուն պարտավոր է՝

4.4.1. գույքը շահագործելիս և պահպանելիս առաջնորդվել տեխնիկական նորմերով ու գույքի տեխնիկական անձնագրերով, ինչպես նաև սանիտարական, բնապահպանական և այլ նորմերով.

- 4.4.2. իրականացնել գույքի պահպանման հետ կապված բոլոր ծախսերը.
- 4.4.3. գույքն օգտագործել իր նշանակությամբ.
- 4.4.4. պահպանել գույքը.
- 4.4.5. գույքի հիմնանորոգումը կատարել փոխատուի հետ համաձայնեցնելուց հետո.
- 4.4.6. գույքը վերադարձնել փոխատուին պայմանագրի 3.1-ին կետով սահմանված կարգով.
- 4.4.7. պայմանագրի ստորագրումից և նոտարական կարգով վավերացումից հետո 30-օրյա ժամկետում կատարել պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցումը.
- 4.4.8. կատարել պայմանագրի նոտարական վավերացման և պետական գրանցման հետ կապված վճարումները.
- 4.4.9. պայմանագրի գործողության ընթացքում գույքի օգտագործման կամ տիրապետման իրավունքը չփոխանցել երրորդ անձանց:
5. Պայմանագրի նպատակը և գործողության ժամկետը.
- 5.1. փոխատուն գույքը փոխառուի անհատույց ժամանակավոր օգտագործմանն է հանձնում ոռոգման ջուր մատակարարելու և ջրահեռացման աշխատանքներ իրականացնելու նպատակով,
- 5.2. պայմանագրի գործողության ժամկետը 25 տարի է (50 տարի՝ ջրօգտագործողների ընկերությունների միությունների դեպքում): Կողմերի փոխադարձ համաձայնությամբ պայմանագրի գործողության ժամկետը կարող է երկարաձգվել,
- 5.3. պայմանագրի գործողության ժամկետը համարվում է երկարաձգված 25 տարով (50 տարով՝ ջրօգտագործողների ընկերությունների միությունների դեպքում), եթե պայմանագրի գործողության ժամկետի ավարտից 3 ամիս առաջ կողմերից որևէ մեկը մյուսին չի դիմել այն դադարեցնելու կամ վերանայելու համար:
6. Անհատույց հանձնված գույքի բարելավումները.
- 6.1. գույքի վրա փոխառուի կատարած բաժանելի բարելավումները համարվում են նրա սեփականությունը:
- 6.2. եթե փոխառուն իր միջոցների հաշվին և փոխատուի համաձայնությամբ կատարել է գույքից անբաժանելի բարելավումներ՝ առանց դրան վնաս պատճառելու, ապա սույն պայմանագիրը դադարելուց հետո փոխառուն իրավունք ունի ստանալու հատուցում՝ բարելավումների արժեքի չափով, հաշվի առնելով դրանց բնականոն մաշվածքը,
- 6.3. փոխառուի կողմից առանց փոխատուի համաձայնության կատարված գույքից անբաժանելի բարելավումների արժեքը չի հատուցվում,
7. Կողմերի պատասխանատվությունը.
- 7.1. փոխատուն պատասխանատվություն չի կրում գույքի այն թերությունների համար, որոնք ինքը նշել է պայմանագիրը կնքելիս, կամ որոնք նախապես հայտնի են եղել փոխառուին, կամ պետք է հայտնաբերվելին փոխառուի կողմից պայմանագիրը կնքելիս, կամ գույքն օգտագործման իրավունքով հանձնելու ժամանակ այն զննելիս,
- 7.2. փոխառուն պատասխանատվություն է կրում գույքի օգտագործման հետևանքով երրորդ անձին պատճառված վնասի համար, եթե չի ապացուցվում, որ վնասը դիտավորությամբ կամ անզգուշությամբ պատճառել է փոխառուն,
- 7.3. փոխառուն կրում է անհատույց օգտագործման հանձնված գույքի պատահական կորստի կամ պատահական վնասվածքի ռիսկը, եթե գույքը ոչնչացվել, վնասվել է պայմանագրի պահանջները չկատարելու կամ գույքն իր նշանակությամբ չօգտագործելու հետևանքով,

74. գույքին հասցված վնասը որոշվում է համաձայն սույն պայմանագրի 8.4-րդ կետով ստեղծված հանձնաժողովի կողմից, կողմերի միջև ստուգումների արդյունքների վերաբերյալ անհամաձայնության դեպքում անցկացվում է փորձաքննություն փոխառուի կողմից հրավիրված անկախ աուդիտի միջոցով,

7.5. փոխառուի կամ երրորդ անձի մեղքով գույքին հասցված վնասը վերականգնվում է փոխառուի կողմից,

7.6. փոխառուն Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով պատասխանատվություն է կրում սանիտարական և շրջակա միջավայրի պահպանման պահանջների խախտման համար:

8. Գույքի նկատմամբ հսկողությունը (վերահսկողությունը).

8.1. գույքի տեխնիկական վիճակի, շահագործման և օգտագործման նկատմամբ փոխատուի և փոխառուի կողմից իրականացվում է հսկողություն (վերահսկողություն),

8.2. փոխատուն գույքի նկատմամբ իրականացնում է հսկողություն (վերահսկողություն)՝ գույքի վիճակի, օգտագործման պայմանների դիտարկումներ և զննումներ կատարելու եղանակով:

8.3. գույքի տեխնիկական վիճակի, օգտագործման և շահագործման նկատմամբ հսկողությունը (վերահսկողությունը) իրականացվում է՝

ա) գույքի փաստացի տեխնիկական վիճակը ստուգելու նպատակով՝ նախքան ոռոգման շրջանի սկսվելը՝ մինչև զարմանալին վարար ջրերի բացթողումը՝ գույքի զննում կատարելու, ինչպես նաև զարմանալին վարար ջրերի բացթողման նախապատրաստական աշխատանքների կատարման ընթացքի դիտարկումներ կատարելու եղանակով,

բ) ոռոգման շրջանի ընթացքում՝ գույքի շահագործման և պահպանման տեխնիկական նորմերի պահանջների կատարումն ստուգելու նպատակով՝ փոխատուի պահանջով, ոչ ավելի, քան յուրաքանչյուր ամիսը մեկ անգամ՝ դիտարկումներ անցկացնելու եղանակով,

գ) ոռոգման շրջանի ավարտից հետո՝ գույքի փաստացի տեխնիկական վիճակն ստուգելու նպատակով՝ գույքի զննում կատարելու և ոռոգման համակարգերի պահպանության նպատակով՝ գույքը ձմռանը նախապատրաստելու աշխատանքների դիտարկումներ կատարելու եղանակով:

Կողմերը սույն կետի «ա», «բ» և «գ» ենթակետերում նշված գործողությունների արդյունքների մասին համատեղ կազմում են արձանագրություն:

8.4. Փոխատուի կողմից գույքի զննումները, դիտարկումները, ստուգումները կատարվում են կողմերի առնվազն երկուական ներկայացուցիչների մասնակցությամբ:

8.5. Կողմերից որևէ մեկի կողմից ստուգման արդյունքների վերաբերյալ անհամաձայնության դեպքում դրա մասին նշվում է արձանագրության մեջ: Վեճ առաջանալու դեպքում հարցը լուծվում է պայմանագրի 11.3-րդ կետով սահմանված կարգով:

8.6. Գույքի տեխնիկական վիճակի, օգտագործման և շահագործման նկատմամբ սույն պայմանագրի 8.3-րդ կետի «ա» և «գ» ենթակետերում նշված եղանակներով տարեկան հսկողությունից բացի՝ փոխատուն կարող է կատարել գույքի արտահերթ զննումներ՝ տարերային աղետներից (ջրհեղեղ, երկրաշարժ, փոթորիկ և այլն) կամ վթարներից հետո:

8.7. Հսկողության արդյունքներն արձանագրվում են Ջրօգտագործողների Ընկերության (Ջրօգտագործողների Ընկերությունների Միության) պետական ոռոգման համակարգի տեխնիկական վիճակի ստուգումների և զննումների գրանցամատյանում, որն ամհրաժեշտության դեպքում տրամադրվում է փոխատուին՝ ծանոթանալու համար:

8.8. Սույն պայմանագրի 8.3-րդ կետի «գ» ենթակետով նախատեսված տարեկան զննումների, դիտարկումների, ստուգումների արդյունքում ընկերության կողմից կազմվող գույքի թերությունների մասին ակտի հիման վրա կողմերը որոշում են աշխատանքների տեսակները և ծավալները, ինչպես նաև կատարման ժամկետները:

8.9. Փոխառուի գրավոր դիմումի համաձայն՝ իր կողմից իրականացվող համալիր դիտարկումներին կարող են մասնակցել նաև փոխատուի ներկայացուցիչները:

9. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս - մաժոր).

9.1. սույն պայմանագրով՝ պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո և, որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների կողմից ընդունված ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծելու պայմանագիրը դրա մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

10. Պայմանագրի վաղաժամկետ լուծման հիմքերը.

10.1. փոխատուն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե վախառուն՝

10.1.1. գույքն օգտագործել է ոչ իր նշանակությամբ,

10.1.2. չի կատարել շահագործման և պահպանման տեխնիկական նորմերի պահանջները,

10.1.3. էականորեն վատթարացրել է գույքի վիճակը, որի մասին առկա է կանոնակարգող խորհրդի որոշումը,

10.1.4. առանց փոխատուի համաձայնության՝ գույքը հանձնել է երրորդ անձի:

10.2. Փոխառուն իրավունք ունի վաղաժամկետ լուծելու պայմանագիրը, եթե՝

10.2.1. հայտնաբերվել են այնպիսի թերություններ, որոնք գույքի բնականոն օգտագործումը դարձնում են անհնար և, որոնց մասին ինքը չգիտեր ու չէր կարող իմանալ պայմանագիրը կնքելիս,

10.2.2. գույքը դարձել է օգտագործման համար ոչ պիտանի՝ այնպիսի հանգամանքների բերմամբ, որոնց համար ինքը պատասխանատվություն չի կրում,

10.2.3. պայմանագիրը կնքելիս փոխատուն նրան չի զգուշացրել գույքի նկատմամբ երրորդ անձանց իրավունքների մասին,

10.2.4. փոխատուն չի կատարել գույքի օգտագործման իրավունքի կամ դրա պատկանելիքների և փաստաթղթերի հանձնումը:

10.3. Սույն պայմանագիրը կարող է վաղաժամկետ լուծվել՝ փոխատուի և փոխառուի նախաձեռնությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված այլ դեպքերում:

10.4. Եթե կողմերից մեկն առարկում է սույն պայմանագրի վաղաժամկետ լուծմանը, ապա հարցը կարգավորվում է դատական կարգով:

11. Այլ պայմաններ.

11.1. Փոխատուի վերակազմակերպման դեպքում՝ գույքի անհատույց օգտագործման պայմանագրով փոխատուի իրավունքներն ու պարտականություններն անցնում են նրա իրավահաջորդին:

11.2. Փոխառուի վերակազմակերպման դեպքում նրա իրավունքներն ու պարտականություններն անցնում են նրա իրավահաջորդին:

11.3. Պայմանագրից ծագող վեճերը կարող են լուծվել փոխադարձ համաձայնությամբ, իսկ անհամաձայնության դեպքում՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.4. Պայմանագիրը ենթակա է նոտարական վավերացման, իսկ պայմանագրից ծագող իրավունքները՝ պետական գրանցման՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով:

11.5. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում նոտարական կարգով վավերացվելուց և պայմանագրից ծագող իրավունքների պետական գրանցման պահից:

11.6. Պայմանագիրը կնքվում է 6 հավասարազոր օրինակից:

12. Կողմերի գտնվելու վայրերը և բանկային վավերապայմանները .

Փոխատու

(գտնվելու վայրը)

(բանկային վավերապայմանները)

(հեռախոսահամարը)

(ստորագրությունը)

_____ 200 __ թ. _____

Փոխառու

(գտնվելու վայրը)

(բանկային վավերապայմանները)

(հեռախոսահամարը)

(ստորագրությունը)

_____ 200 __ թ.

Հայաստանի Հանրապետության Կառավարության աշխատակազմի ղեկավար-
նախարար Մ. Թովուզյան